



This is a digital copy of a book that was preserved for generations on library shelves before it was carefully scanned by Google as part of a project to make the world's books discoverable online.

It has survived long enough for the copyright to expire and the book to enter the public domain. A public domain book is one that was never subject to copyright or whose legal copyright term has expired. Whether a book is in the public domain may vary country to country. Public domain books are our gateways to the past, representing a wealth of history, culture and knowledge that's often difficult to discover.

Marks, notations and other marginalia present in the original volume will appear in this file - a reminder of this book's long journey from the publisher to a library and finally to you.

### **Usage guidelines**

Google is proud to partner with libraries to digitize public domain materials and make them widely accessible. Public domain books belong to the public and we are merely their custodians. Nevertheless, this work is expensive, so in order to keep providing this resource, we have taken steps to prevent abuse by commercial parties, including placing technical restrictions on automated querying.

We also ask that you:

- + *Make non-commercial use of the files* We designed Google Book Search for use by individuals, and we request that you use these files for personal, non-commercial purposes.
- + *Refrain from automated querying* Do not send automated queries of any sort to Google's system: If you are conducting research on machine translation, optical character recognition or other areas where access to a large amount of text is helpful, please contact us. We encourage the use of public domain materials for these purposes and may be able to help.
- + *Maintain attribution* The Google "watermark" you see on each file is essential for informing people about this project and helping them find additional materials through Google Book Search. Please do not remove it.
- + *Keep it legal* Whatever your use, remember that you are responsible for ensuring that what you are doing is legal. Do not assume that just because we believe a book is in the public domain for users in the United States, that the work is also in the public domain for users in other countries. Whether a book is still in copyright varies from country to country, and we can't offer guidance on whether any specific use of any specific book is allowed. Please do not assume that a book's appearance in Google Book Search means it can be used in any manner anywhere in the world. Copyright infringement liability can be quite severe.

### **About Google Book Search**

Google's mission is to organize the world's information and to make it universally accessible and useful. Google Book Search helps readers discover the world's books while helping authors and publishers reach new audiences. You can search through the full text of this book on the web at <http://books.google.com/>

# ՅԵՏՅԻՆՏՁԵԼ ԳՐԱԿԱՆ



Ա. ՄԻԹԱՐԵԱՆ

Գ Է Պ Ի

Ա Ր Ա Ր Ա Տ

ԷՅՔ

Մ. ԱՌԱՔԵՆԵԱՆԻ

VII

1904





Ter House sein

ԱՐԵՆՆԻ ԿՈՒՆՍԵՐՎԱՆ

Hayushelout  
**ԳԵՊԻ ԱՐԱՐԱՏ**

**ՈՒՂԵԻՈՐՈՒԹԻՒՆ**



ԹԻՖԼԻՍ

Ցարսն Էն՝ՄԷՍ՝, Մադարեան փողոց, № 15.

(37)

1904

**UNIVERSITY OF MICHIGAN LIBRARY**

6040  
E.P.W.  
2737  
Bulw.

---

Дозволено цензурою. Тифлисъ, 11 Августа 1904 г.

---

GRAD  
ERL N  
2737  
C115-11

## ՀՐԱՏԱՐԱԿՉԻ ԿՈՂՄԻՑ

Ընթերցանութեան համար նիւթ մենք շատ քիչ ունենք: Եւս առաւել մեր գրականութիւնը զուրկ է ճանապարհորդական նկարագրութիւններէց, որոնք, եթէ գրված են կոկիկ, սահուն ոճով, թեթեւ լեզուով, ընթերցանութեան համար շատ գեղեցիկ նիւթ կարող են լինել: Այդ տեսակէտով, մենք որոշեցինք մեր Հանրամատչելի Գրադարանի շարքում «Բնութեան նկարագրութիւններ» վերնագրով տալ և ուղևորական ակնարկներ և այդ սէրիայի իբրև առաջին գրքոյկ՝ ընտրեցինք պ. Ա. Մխիթարեանի ճանապարհորդական ակնարկները «Դէպի Արարատ» վերնագրով, որ անցեալ տարի տպվեց «Մշակի» մէջ: Յաջորդ գրքոյկը կը լինի «Մի ամիս Արևելքում»—մեր աշխատութիւնը:

Հ. Ա.



## Գ Է Պ Ի Ա Ր Ա Ր Ա Տ

### I

Դեռ պատանեկութեան վաղուց անցած օրերից ես մի առանձին հակումն ունէի մագլցելու հայրենի լեռների կատարները: Այդ երբեմն մերկ, անհամբոյր, երկնքի սիրտը մեխված քարաժայռերը մի առանձին հրապոյրով բաշում էին իմ սիրտս դէպի իրանց բարձունքը, և ես շատ անգամ անկարող էի դիմադրել իմ ներքին բուռն ձգտման՝ բարձրանալու նրանց դժուարակոխ գագաթները, շնչելու նրանց անուշաբոյր, թեթև, թարմ ու ազատ օդը, անհուն հրճուանքով զուարճանալու ոտներիս տակ փռված լայնարձակ աշխարհի գեղանկար տեսարաններով:

Ամարային արձակուրդների ժամանակ, աշակերտութեանս օրերում, Թիֆլիսից Ալէքսանդրօպօլ ուղևորվելիս կամ Ալէքսանդրօպօլից Թիֆլիս վերադառնալիս, մինչ ընկերներս զբաղված էին վէճ ու հայհոյանքով պօստային կայարանների կառավարիչների հետ նոր ձիեր լծելու գորղեան հանգոյցը լուծելու համար, ես միշտ ներքուստ գոհ էի մնում այդ վէճ ու հայհոյանքից ու ընկերներիցս

պաղտնի անյայտանում էի դէպի կայաբաններէ շքեղակաները, ուր ցցված էր լինում մի որ և է ժայռ, մի բարձր, հրապուրիչ անտառապատ կամ մերկ գագաթ: Ի հարկէ կայաբանի կառավարչին հայհոյելուց յետոյ՝ ընկերներս պակաս չէին հայհոյում և ինձ՝ երբ ես, արագտան եղջերուի նման, հե ի հե վազում էի վայր սարի բարձրութիւնից դէպի արդէն լծված սայլակը, բայց նրանց հայհոյանքներն ու ցփոհութիւնները ինձ վրա ոչ մի ազդեցութիւն չէին գործում: Ուղևորութեան սկզբնակէտից ես արդէն նախազգուշացրած էի լինում, որ նրանք սոյապիսի դէպքերում կարող են շարունակել ճանապարհն առանց ինձ: Սիրելիք ընկերներ. նրանք հայհոյում էին, բայց երբէք ինձ մենակ չէին թողնում:

Տարիների ընթացքում սարերի գլուխը մազլլիլու այդ պատանեկական հակումը աճեց ու պարզացաւ ինձ հետ միասին և դարձաւ մի ախտ, մի առանձին տեսակ մոլութիւն: Ես բարձրացայ անհամար յայտնի ու անյայտ լեռների գագաթներ, բայց չը կարողացայ յագուրդ տալ իմ մէջ միշտ վառ ու բորբոք ցանկութեան: Հայրենի լեռների ամենամեծ հսկաները, — Արարատն ու Արագածը, — դեռ ևս մնում էին անմատչելի ինձ համար իրանց յաւիտենական ձիւների անմորձենալի ծածկոյթով:

Յիշում եմ ես դեռ այն վաղուց անցած օրերից մէկը, երբ առաջին անգամ իմ մէջ բորբոքվեց Մասիսի գլուխը բարձրանալու ցանկութիւնը: Մի գիշեր, էջմիածին գնալիս, կարծեմ միւռոն-

օրհնութեան հանդէսին ներկայ լինելու համար,  
երբ ես քնած էի բացօդեայ Ապարանի սարահար-  
թի վրա, գեղեցկուհի Արագածի անուշաքոյր ծա-  
ղիկների մէջ, կանուխ լուսադէմին բաց արի աչ-  
քերս և տեսայ ուղիղ իմ դէմ յանդիման մի հրա-  
շալի... տեսիլք: Երկինքը պարզ էր և նրա անհուն  
կապտութեան մէջ տեղ-տեղ դեռ ևս շողշողում էին  
մի քանի փայլուն աստղեր: Ամպի ոչ մի կտոր,  
ոչ մի նշոյլ անգամ չէր երեւում: Ես նայում էի և  
հետզհետէ աւելի ու աւելի ապշում,—աստղերի  
մօտ, ուղիղ երկնքի սրտի մէջ, վարդի վառ գոյ-  
նով փայլում էր ձիւնի թէ ամպերի մի հրաշագեղ  
զանգուած: Երկիրը պատած էր դեռ ևս առաւօ-  
տեան աղջամուղջի միապաղաղ վարագուրով և ես  
չէի կարողանում հասկանալ, թէ ինչ կարող էր  
լինել երկնքի այդ տարօրինակ զարդը, որ հսկայա-  
կան յակինթի նման վառվում էր անհուն բար-  
ձրութեան մէջ:

Փարպեցի ձիապանը շուտով զարթեց քնից  
և ես մատնացոյց արի նրան երկնքի սրտի մէջ  
վառվող տեսարանը:

—Տեսնո՞ւմ ես:

—Տեսնում եմ:

—Ի՞նչ բան է:

—Մասսի գլուխը:

—Ա՛... բացականչեցի ես Միցկևիչի ուխտա-  
ւորի նման ու վեր թռչելով տեղիցս՝ սկսեցի տրո-  
րել աչքերս երկնային վեհ տեսարանը աւելի լաւ  
դիտելու համար:

II

1903 թվականի օգոստոսի 14-ն էր: Ճանապարհորդների մի արշալախումբ պատրաստվում էր վերելք կատարել դէպի Արարատ: Հասել էր ժամանակը կատարելու իմ վաղեմի ցանկութիւնը, և ես առանց երկար ու բարակ մտածելու միացայ այդ արշալախմբին: Երկու օր հազիւ տեեցին իմ նախապատրաստութիւններս: Ա. Եւանգուլեանի խորհրդով, որ արշալախմբի ղեկավարն և առաջնորդն էր, ես կարել տուի ալպեան կօշիկներ, հաստ մեխերով կրունկների տակ, պատրաստել տուի ալպիան գաւազան,—յատակ սրբելու մեծ խոզանակի մի երկար կոթ, երկաթեայ սրածայր վերջաւորութեամբ,—և վերցնելով հետս տաք շորեղէններ,—տաք ներքնահագուստ, ձմեռվայ վերարկու, տաք վերմակ, եափնջի, գլխանոց, ձեռնոցներ—օգոստոսի 14-ի գիշերը կազմ և պատրաստ կանգնած էի Թիֆլիսի կայարանում, երեւանեան գնացքի առաջ: Մտքումս ես ինձ ու ինձ ծիծաղում էի վերցրածս տաք շորերի ահագին քանակութեան վրա: «Նորդէնշիլդն անգամ, որ այժմ թափառում է հարաւային բեռոի սառուցներում, ինձնից աւելի տաք շորեղէններ վերցրած չի լինի իր հետ»—հեգնում էի ինքս ինձ՝ կանգնած վագօնի առաջ, երբ իմ շորերի երկու մեծ կապոցները ներս էին տանում: Կայարանում տիրում էր խեղդող տօթ ու ջերմութիւն, իսկ ես դեռ չէի ճաշակել Արարատի բեռային ցրտերի սաստկութիւնը:

Չանգակը խփեց երրորդ անգամ և գնացքը անդարտութեամբ շարժվեց տեղից: Ագահութեամբ նայում էի ես վագօնի պատուհանից մի կանաչի տխուր դէմքի և աշխատում ընդ միշտ տպաւորել նրան հոգուս մէջ՝ վտանգի օրհասական վայրկեանին մի վերջին անգամ ևս նրան հրաժեշտ տալու մխիթարութիւնն ունենալու համար: Արդեօք կը վերադառնամ նորից, կը տեսնեմ նրա միշտ սիրելի, միշտ անգին ու անփոխարինելի պատկերը...

Երկրորդ կարգի վագօնում, որ երկաթուղու վարչութեան կողմից յատկացրած էր արշաւախմբի անդամներին, մոմերի աղօտ լոյսի մէջ տիրում էր աշխոյժ իրարանցում: Չը նայելով որ գիշերվայ ժամի 12<sup>1</sup>/<sub>2</sub>-ն էր, բայց ոչ ոք չէր շտապում քնելու. խօսք, զրոյց, ծիծաղ, կատակներ, որոնց ամենքի նիւթն էլ առաջիկայ ճանապարհորդութիւնն էր, դեռ երկար շարունակվում էին խումբ-խումբ հաւաքված շրջաններում. ես էի միայն, որ գլուխս դուրս հանած պատուհանից՝ երկար նայում էի անյայտացող Թիֆլիսի գիշերային գեղեցիկ տեսարանին, Նաւթլուղի, Սօղանլուխի, Մառնէոլի տխուր, միանման, ամպերի արանքից հագիւ լուսաւորող լուսնի փայլման տակ անվերջ փռված դաշտերին:

Անցաւ աննկատելի կերպով մի-երկու ժամ. վագօնում խօսակցութիւնն ու ծիծաղը դադարեցին. զրուցող խմբերը ցրվեցին. ճանապարհորդակիցներս, որոնցից շատերի հետ ես դեռ չէի ծանօթացել, տեղաւորվեցին ազատօրէն փափուկ

նստարանների վրա: Իմ շուրջս ախրեց խորին լուռ-  
թիւն. և միայն շոգեմեքենայի խուլ հառաչանքն  
ու անիւնների անընդհատ, միանման, ձանձրալի  
թխթխկոցն էր, որ խանգարում էր գիշերային  
խորին լուռթիւնը: Ես ևս փորձ փորձեցի պառկե-  
լու նստարանի վրա ու քնելու, բայց այդ փորձը  
անյաջող անցաւ.— վրդոված նեարդերս չէին հան-  
գըստանում, միտքս հեռու էր թռչում: Ես ամե-  
նևին չէի մտածում Արարատի և նրա վերելքի  
դժուարութիւնների կամ վտանգների մասին. ոչ-  
իմ միտքս ամբողջովին զբաղված էր օրվայ հրա-  
տապ հարցով և այդ երեկոյեան, ճանապարհ ընկ-  
նելուց փոքր ինչ առաջ լսած նորութիւններով:

—Տէր-Աստուած, արդեօք ինչ պիտի լինի  
սրա վերջը, արդեօք ինչ է գալու մեր գլխին...  
հարիւրերորդ անգամ կրկնում էին իմ շրթունք-  
ները ու հեռացնում քունը իմ աչքից:

Յանկարծ լավեց մի բարձրաձայն խոկոց-  
հայեացքս ակամայից գցեցի հանդիպակաց նստա-  
րանի վրա: Փաթաթված բարակ վերմակով այն-  
տեղ պառկած էր իմ ընկերներիցս մէկը, որի հետ  
ես նախընթաց օրը առիթ էի ունեցել ծանօթա-  
նալու: Դա մի լեհացի էր, մի տիպիքական լեհա-  
ցի դէմքով և հայեացքներով, որ Պետերբուրգի  
աշխարհագրական ընկերութեան կողմից ուղարկ-  
ված էր Կովկաս՝ ուսումնասիրելու մեր երկրի բու-  
սական հարստութիւնը: Առիթից օգուտ քաղելով՝  
նա միացել էր մեր արշաւախմբին Արարատ բարձ-  
րանալու և նրա բուսականութիւնը ուսումնասի-  
րելու համար: Իմ առաջ ձգված էր մի երկայն,

բարակ, թեթեւ, «օզեղէն» մարմին, բարձի վրահաւնդչում էր մի համակրեղի, կանոնաւոր գծագրութեամբ փոքր ինչ գունաթափ դէմք: Ես երկար նայում էի այդ դէմքին... «Երջանիկ ազգ, երջանիկ ժողովուրդ,—որոճում էի ես ինձ ու ինձ,—երջանիկ նոյն իսկ թշուաւ. ուրթեան մէջ. դուք գիտէք միութեան արժէքը, դուք գիտէք մայրենի լեզուի դիւթական նշանակութիւնը, դուք գիտէք այն միջոցները, որոնք յարգելի են դարձնում ձեզ նոյն իսկ ձեր թշնամիների աչքում. դուք մեծ էք նոյն իսկ ձեր ստորութեան մէջ. իսկ մե՛նք...»

Կրիսեվեցկին,—այդպէս էր լեհացի բուսաբանի ազգանունը,—մի քանի անգիտակցական շարժումներ արաւ քնի մէջ և վրայից վայր զցեց վերմակը: Պատուհանը բաց էր. այնտեղից ցուրտ քամի էր փչում. ես կուացայ, վերցրի վերմակը և փաթաթեցի նրան: Լեհացին զարթոնեց, բարձրացրեց գլուխը, շնորհակալութեան մի քաղցր ժպիտ ուղղեց ինձ և, անշուշտ յիշելով մեր նախընթաց օրվայ խօսակցութիւնը՝ կամացուկ մրմուաց:

—Փոխադարձ բարեկամութեան սկիզբն էք դնում:

Ես ևս ժպտացի և հաւանութեան նշան արի գլխով...

### III

Արշաւախմբի մէջ էր և մի հայ ուսանող, Մօսկվայի տեխնիքական ուսումնարանից, Գարեգին Սարգսեան, մէկը այն պատուական երիտասարդներից, որոնց, դժբախտաբար, յաճախ չենք

պատահում: Ինչ ուզում են թող ասեն հայի անմիաբանութեան և փոխադարձ ատելութեան մասին, ես հաւատարիմ կը մնամ իմ առանձին կարծիքին: Բիւր անգամ ինձ պատահել է դրա հակառակը տեսնել: Յեղային արիւնակցութիւնը բնագլխի դրդմամբ միշտ սրոնում է իր հարազատին. հայի աչքը միշտ հայի վրա է, հայի սէրն ու համակրանքը, սակաւ բացառութեամբ, ամենից առաջ պահվում է հայի համար: Մեծաւ մասամբ օտարներից բաղկացած խմբի մէջ՝ իմ համակրանքըն ուղղված էր դէպի երկու հարազատները... Անշուշտ նոյն բնական զգացմունքն էր ոգևորում և ուսանող Սարգսեանին. մենք շատ շուտ մտերմացանք իրար հետ և օգնութեան կարօտ դէպքերում ամենից առաջ դիմում էինք իրար:

Սարգսեանը ինձ խնդրել էր զարթեցնել իրան այն ժամանակ, երբ գնացքը կը մտնի Շահալուի գեղանկար ձորը: Սառնաշիտթ երազների մէջ հազիւ մի ժամ աչք փակելուց յետոյ՝ ես զարթեցի ուղիղ այս ժամանակ, երբ գնացքը կանգ առաւ Սանահին կայարանում: Լոյսը նոր էր բացվում. ձորում դեռ տիրում էր առաւօտեան թեթեւ զղամտուղջ. Դէրէտը խշշալով գլորում էր իր սլողտոր ալիքները: Ո՛րքան փոփոխութիւն մի-երկու տարվայ մէջ: Կայարանի տեղում կատարված են ահագին փոփոխութիւններ. հաւասարեցրած լեռնալանջերի վրա այս ու այն տեղ ցրված են հսկայական շինութիւններ. ձորի յատակը կարծես լայնացել, տեղի է տուել կուլտուրական աշխատանքի անդիմադրելի—յաղթող հրամանի առաջ: Շո-

գեմբերենաները ազատօրէն անցուղարձ են անում բազմաթիւ բէլսերի վրա այն տեղում, ուր առաջ մի նեղ արահետ էր անցնում, և նրանց սուլոցը մեծազորոզ արձագանք է տալիս՝ դիպչելով ձորազլխի սեպածև ժայռերին, ժայռեր, որոնք սովոր էին առաջ խոր լուսթեան մէջ ականջ դնել միայն հովուի սրնգի մեղմ սուլոցին: Եւ նրանք են միայն, այդ ահարկու, խոժոռահայեաց ժայռերը, որ մնացել են դեռ ևս անփոփոխ կախված օդի մէջ, ձորաբերանի ապշեցուցիչ բարձրութեան վրա, այնպէս, որպէս եղել են հազարաւոր տարիներ առաջ: Ինձ թւում էր, թէ նրանք դեռ ևս չեն հաշտվել այն եղելութեան հետ, ինչ կատարվել է այս վերջին տարիների ընթացքում իրանց ոտների տակ, ձորի խոր յատակում, և դեռ ապուշ կտրած՝ օր ու գիշեր նայում են ու նայում դէպի վայր և չեն կարողանում գալ ոչ մի եղբակացութեան... Բարեկամ է մօտենում իրանց, թէ թըշնամի. սի գիտէ...

Գնացքը շարժվեց նորից: Անհամար օձապտոյտներ կատարելով, Դէրէտի երբեմն աջ, երբեմն ձախ սփը թռչելով, երբեմն սլանալով փորիկ տօննէլների միջից, երբեմն հանդարտ, կրիայի նման, սողալով դէպի վեր՝ գնացքը մտաւ Շահալուի ձորը:

Ես զարթեցրի Սարգսեանին. երկուսով մենք սկսեցինք դիտել այդ իսկ որ հրաշագեղ ձորը: Կանուխ առաւօտ էր, արևը նոր էր բարձրացել հանդիպակաց անտառապատ լեռների գագաթից և իր ձառագայթները պցել վազօնի պատուհանից

ներս: Մեզմ գեփիւռ էր փչում ու տատանում անհամար հաստարմատ ու սաղարթախիտ լորենիների, հաճարենիների ու բոխիքիների տերէնները: Բուսական ճոխ թագաւորութեան կենտրոնումն էինք: Բնութիւնը, այդ խորհրդաւոր, միշտ անծանօթ էակը, ոչինչ չէ խնայել գեղեցկացնելու Գուգարաց աշխարհի այս բեկորը, ուր որ և է անտառապատ բլրի զովասուն կիսախաւարում, անշուշտ, հաստատել է նա իր անտեսանելի գահը և ուր բազմում է յաճախ՝ փախչելով անապատների տօթից ու խորշակից: Այո, եթէ կայ բնութեան թագուհի և եթէ աշխարհի վրա ունի մի տեղ նա կայան՝ այդ կայանը լինելու է Շահալուի ձորը: Գեղեցիկ է նա մանաւանդ այն ժամանակ, երբ արևն իր ոսկի ճաճանչներով նոր սկսում է ողողել ձորի գանգուր կողերը և վառել կանաչազարդ բլուրների կատարները: Նայում ես և չես կշտանում դիտելուց: Ահա հեռու, հեռու լեռնալանջից, խիտ անտառի ծոցից, երևաց մի բարակ ծուխ և, իբրև առաւօտեան խնկարկութիւն, սկսեց կամաց կամաց բարձրանալ դէպի երկինք. ահա մի այլ տեղ, ձորի խոր յատակում, ուր ծառերից ազատ՝ գետակի ափին փոված է մի փոքրիկ սիգաւէտ դաշտ, արածում է սպիտակ, մաքուր գառների հօտը. չարածճի գառնարածք երգում է մի ինչ որ եղանակ. նրա ձայնը հազիւ է հասնում մեզ. ինձ թւում է, թէ ես լսում եմ հայերէն բառեր... Ահա ձորի յատակի լայն ճանապարհով խումբ-խումբ անցնում են դարդարված գիւղացի կանայք ու ազջիկներ—ուխտաւորներ դէպի մերձակայ վանքե-

բը: Անտառ, կանաչաւէտ դաշտ, հօտ, գիւղացի  
գարդարուն կանայք ու աղջիկներ կան շատ տեղ,  
բայց այստեղ ամեն ինչ այնքան գեղեցիկ է, այն-  
քան դուրեկան, այնքան հաճելի, որ ես աչքս ա-  
կամայ հեռացրի նրանցից միայն այն ժամանակ,  
երբ հասանք Շահալու կայարանը:

Ես վայր իջայ գնացքից և մտայ կայարան:  
Մի քանի ուու գաղթականներ, տղամարդիկ ու  
կանայք, երեխաները գրկին, գնացքից դուրս  
թափված բազմութիւնից ողորմութիւն էին խնդը-  
րում: Մէկը նրանցից գիմեց ինձ:

— Переселенцы? հարցրի ես:

— Да, батюшка, переселенцы.

— Куда держите путь?

— Не знаемъ куда, но вотъ-бы намъ эти  
мѣста; какъ было-бы хорошо! լեզուն դուրս հա-  
նելով և նորից ախորժակով ներս քաշելով, ասաց  
ուու գաղթականը ու ցոյց տուեց Շահալուի հրա-  
շալի ձորը:

Ես մի քանի կոպէկ տուի գաղթականին և  
վազեցի յետ՝ դէպի մեր վագօնը:

Մօտենալով կրկին պատուհանին և նորից  
մի անձկալից հայեացք գցելով ձորի գեղանկար  
տեսարանին՝ ես ուժգնութեամբ ընկայ նստարանի  
վրա և ծածկեցի գլուխս վերմակով...

#### IV

Ընկերներս, հանգիստ ու երկարատև քնից  
յետոյ, զարթեցին վերջապէս և ես հնարաւորու-  
թիւն ունեցայ ծանօթանալու նրանց հետ: Երկու-

սին արդէն ճանաչում է ընթերցողը. մնացածները մէջ ամենից օրիգինալ անձնաւորութիւնը ինքը՝ արշաւախմբի կազմակերպող Ա. Եւանգուլեանն էր: Առանց իմ վկայութեան էլ՝ նա յայտնի է Թիֆլիսին իր հասարակական եռանդուն գործունէութեամբ քաղաքային ինքնավարութեան և Գիւղատնտեսական ընկերութեան մէջ: Սակայն նա այնքան էլ յայտնի չէ գուցէ իր գործունէութեան մի այլ համակրելի կողմով, որ շատ սակաւ է սլաւտահում մանաւանդ մեր, հայերիս մէջ: Ընդհանրապէս մենք, հայերս, դանդաղաշարժ մարտչիկ ենք. մենք չենք սիրում, եւրոպացիների նման, ճանապարհորդել, տեմնել թէ ինչ է կատարվում ուրիշ աշխարհներում: Մենք չենք ճանաչում նույն իսկ մեր երկիրը,—մեր մի քանի քաղաքները, նշանաւոր լեռները, դաշտերը: Անթիւ են մեր մէջ այնպիսիները, որոնք ծնվում ու մեռնում են մի որ և է գաւառական քաղաքի սահմանում, առանց գաղափար ունենալու մի այլ քաղաքի մասին, որ մի քանի տասնեակ վերստ միայն հեռու է առաջինից: Չը նայելով իր արդէն պատկանելի 50—55 տարեկան հասակին, Ա. Եւանգուլեանն իւրաքանչիւր տարի կազմակերպում է ճանապարհորդական խմբեր՝ շրջելու մեր երկրի նշանաւոր տեղերը և ծանօթանալու նրանց հետ: Նրա կազմակերպած խմբերը, հնար եղած տեղում, շրջում են անշուշտ ոտքով և այդ եղանակով նրանք արդէն մի քանի ուղևորութիւններ են կատարել դէպի Աթէնի ձորը, դէպի Սվանետիա, դէպի կովկասեան լեռները, դէպի Անի, դէպի Արարատ: Անցեալ 1902 թւա-

կանի ամառը, օգոստոսի սկզբներին, նրա խումբը բարձրացել է Արարատի գլուխը և կանգնեցրել այնտեղ մի օգերևութարանական դիտարան, որին կրկին անգամ այցելելը և դիտողութիւններ վերցրնելը կազմում է այս ուղևորութեան նպատակակէտը: Արշաւախմբի անգամների մեծամասնութիւնն էլ հէնց միայն այդ ունի աչքի առաջ, բացի ինձանից. ես ոչ մի գիտնական նպատակ չունեմ և գնում եմ ողջունելու ծերուկ Մասիսին և երկրպագելու նրան...

Սակայն Մասիսին ողջունելուց առաջ՝ ես կարօտով ողջունում եմ գեղանի Արագածին: Ահա արդէն բացվում է Շիրակի լայնածաւալ դաշտը և Արագածը կանգնած է իմ առաջ իր երկճիւղ սպիտակ գագաթով, իր լայն արքայական նստուածքով: Որպէս արէքսանդրօպօլցի, ես սիրում եմ նրան. սիրում եմ նրա ծաղկաւէտ ստորոտները, նրա թաւ—կանաչուտ արօտները, ուր այնքան շրջել եմ պատանեկութեան անհոգ օրերում. սիրում եմ նրա անապական, մաքուր, կարկաջուն, սառնորակ աղբիւրները, խազաղ գիւղերը, ցրված նրբա հիւրընկալ լանջերի վրա: «Թէ քուն մտնելիս և թէ յառնելիս» ես նրան եմ տեսել իմ առաջ, օտարութեան մէջ ամենից առաջ ես նրա կարօտն եմ քաշել: Անսահման սիրով այժմ էլ իմ հայեացքս ուղղված է նրան և նրա ստորոտում սփռված անծայրածիր դաշտերին: Ողջոյն ձեզ, հայրենի լեռներ, ողջոյն ձեզ դաշտեր հայրենի... թէև հետու ձեզանից, բայց ձեր սիրելի պատկերը միշտ անազարտ պահվել է հոգուս խորքերում...

Վ

Գնացքը կանգ առաւ Ալէքսանդրօպօլ կայա-  
րանի առաջ: Երկաթուղին ամեն տեղ դրոշմել է  
իր կնիքը, յայտնել է իր պահանջները, որոնք ու  
զտել է իր յարմարութիւնները՝ առանց շատ ան-  
գամ նայելու տղգարնակութեան պահանջներին ու  
յարմարութիւններին: Չէ որ այդ գիծը մի ռազ-  
մական ճանապարհ է իր առանձին շահերով՝ տար-  
բեր խաղաղ ժամանակի հանարակական շահերից:

Հեռու քաղաքից՝ շոգեմեքենան կանգնած է  
հպարտ իր համար՝ գրահապարտ կրծքով և առանց  
ուշք դարձնելու ոչ ոքի ու ոչնչի վրա՝ որպէս մի  
արեւելեան փաշայ, ծխում է հա ծխում իր հոկա-  
յական նարգիլէն. և խղճուկ քաղաքն ստիպված է  
ինքը չոքէչոք առաջ գալ, մօտենալ, ձեռքը ճա-  
կատին դնել ու շնորհակալութիւն յայտնել նրան,  
որ դեռ աւելի հեռու չէ կանգնած, ինչպէս Երեւա-  
նում: Եւ պէտք է ասել, որ Ալէքսանդրօպօլն իր  
ծնկաչոք շարժան մէջ դէպի երկաթուղու կայա-  
րանը բաւական առաջագիժութիւն է գործել վեր-  
ջին երեք-չորս տարիների ընթացքում: Ո՛րքան  
նոր տներ, խանութներ, փողոցներ... քիչ է մնում,  
որ ես չը ճանաչեմ իմ հայրենի դանդաղաշարժ,  
քնասէր, փոշոտ Ալէքսանդրօպօլը:

Գնացքը կանգ է առնում այստեղ ընդամենը  
40 րօպէ. ես հաշուում եմ, որ անկարող կը լինեմ  
գնալ քաղաք ու վերադառնալով կրկին միանալ  
ընկերներիս, ուստի հեռուից մի կարօտալից հայ-  
եացք եմ գցում Փրկչի եկեղեցու բարձր, հոյա-

կապ գմբէթին ու վճռում մնալ կայարանում: Ես որոնում եմ կայարանի խուռն բազմութեան մէջ ծանօթ դէմքեր, բայց աւանդ, այս տասներեք տարվայ մէջ, երբ ես հեռու եմ եղել իմ հայրենի Ալէքսանդրօպօլից, շատ ջուր է հոսել ու անցել Ախուրեանի ափերի մէջ: Եւ այն ու զարգացել է նոր սերունդ, կազմվել է նոր երիտասարդութիւն, բազմացել են նոր քաղաքացիներ: Նայում եմ մէկ մէկ ամենքին և թուում է ինձ, թէ ես տեսնում եմ շատ ծանօթ դէմքեր, մի և նոյն ժամանակ չեմ ճանաչում ոչ ոքի: Վաղեմի տաճկահայ գաղթականը, ուղիղ է, շատ քիչ է ենթարկվել մարմնական էվօլիւցիայի ազդեցութեան. ես տեսնում եմ իմ առաջ նոյն խոշոր, ըստ մեծի մասին, անկանօն, թուխ դիմագծերը, նոյն սևորակ, միամիտ, փոքր ինչ ոչխարահայեաց աչքերը, շատ դէպքերում նոյն տիտանեան քիթը, հաստ, հիմնաւոր շրթունքները, նոյն սրածայր, աջ ու ձախ կողմից տափակացրած գլուխը, նոյն կոկորդային, կոշտ արտասանութիւնը, նոյն ազատ, անկշիռ հայհոյանքներով համեմատ խօսակցութիւնը,—բոլորը, բոլորը վաղուց ծանօթ ու սովորական բաներ,—բայց և այնպէս չեմ ճանաչում ոչ ոքի: Մի չնչին տարբերութիւն միայն նախկինի և այժմեանի մէջ խփում է իմ աչքին. չուխաները, կարծես, շատ քիչ են, և շատ շատ են սիւրտուկներն ու պիղօժակները. կանանց ոսկեշարան գլխանոցները փոխվել են շեւապայի, մաս-բարուջը տեղի է տուել կօշիկներին: Եւրօպականացման այդ արտաքին ձևերը շատ քիչ միխթարութիւն են պատճառում ինձ:

Շտեղիցս յանկարծ մէկը բռնում է թևա: Շուտ  
եմ գալիս և տեսնում իմ նախկին պաշտօնակից—  
ուսուցիչներից մէկին: Փանօր Աստուծոյ. գոնէ մի  
հատ ծանօթ գտնվեց: Թե թևի տուած մենք զբօս-  
նում ենք կայարանի առաջ, չը նայելով բարկ արևի  
ճառագայթներին, և տաք-տաք խօսակցում իրաք  
հետ: Նա պատմում է ինձ մի շարք նորութիւններ,  
թուում է հասարակութեան արած առաջադիմու-  
թեան արտայայտութիւնները: Երեխայի նման ու-  
րախանում եմ ես, սիրտս հրճվում է, հոգիս փա-  
ռաւորվում: Հն, ուրեմն արտաքին խաբուսիկ ան-  
շարժութեան դիմակի տակ զառվել է սրբազան  
հուրը, հասարակական բարիքի նախանձախնդու-  
թեան առաքինի զգացմունքը, միամիտ, սառած  
աչքերը բոց են ցայտում, ձեռքը միայն փոռ-  
չուլուկ ու երաւմասի չէ՞ ծախում, այլ սո-  
վորել է բարձրանալ նաև հասարակական ցեցերի և  
ուտիճների դէմ. ուրեմն կատարվել է զգացմունքի  
և մտածողութեան եղանակի մի ներքին փոփո-  
խութիւն, որ հազար անգամ աւելի գնահատելի է  
արտաքին փոփոխութիւնից...

Երբ գնացքը մեկնում է կայարանից, յուզ-  
ված սրտով նայում եմ ես վագօնի պատուհանից  
քաղաքի ցածրիկ տներին, հողածածկ կտուրնե-  
րին, եկեղեցիների այս ու այն կողմում ցցված  
բարձր գմբէթներին, և իմ շրթունքները ինքնա-  
բերաբար մըմնջում են.

— Թող Աստուած զօրավիզ լինի ձեզ, անգին  
հայրենակիցներ...

Կէսօր է. ամառնավերջի արևը նոյնքան վառ, որքան և ամառվայ կիսին, անխնայ այրում ու խանձում է երկաթուղային գծի աջ ու ձախ կողմում տարածված խոզանները: Տխուր, միանման տեսարան. աչքը չէ կարողանում կանգ առնել մի կտոր կանաչի, մի խումբ ծառերի վրա. ամեն տեղ, սկսած Արագածի լեռնալանջերից մինչև հեռու Ալաջայի ստորոտները, նոյն խոզաններն են, նոյն հնձված արտերը, ցողունների մոխրագոյն-դեղին մնացորդներով. տեղ-տեղ միայն արտերի մէջ երևում են ցորենի ցածր, երկարաւուն եղաններ, փոքրիկ ծվծվան—կողոպտիչների բազմաթիւ ագահ խմբերով, որոնք շտապ-շտապ քցցում են հասկերը, մինչ վրա կը հասնի գիւղացին իր դանդաղաշարժ գրաստներով: Այն, ուրախացնող ոչ մի բան չունի Շիրակի դաշտը տարվայ այս եղանակին. արտերը քաղելուց յետոյ կեանքը մեռնում է դաշտերում. չորս կողմը, կարծես, ամայի, անմարդաբնակ անապատ է, և միայն Ախուրեհանն է, որ երբեմնապէս երևալով բլուրների ետեից իր պարզ, կարկաջուն ջրերով, կենդանացնում է փոքրինչ թմրեցուցիչ, անմխիթար տեսարանը:

Ուրախանալու փոխանակ՝ աւելի ևս տըրտմում է մարդ այն ժամանակ, երբ գնացքն անցնում է որ և է հայ գիւղի մօտով: Քսենօֆօնի առասպելախառն ժամանակներից մինչև հիմա անփոփոխ մնացած այդ գետնափոր, բոլորակ անտաշ հատակաքարերից՝ նոյն իսկ երբեմն առանց

ցելի շաղախի՝ շինված անճոռնի «տները» իրանց ցածր-ցածր, համարեա գետնի հետ հաւասարված տափակ կտուրներով, իրանց ծակուռ-լուսամուտներով, իրանց փոքրիկ դռնակներով,—որոնց միջով, զարմանալի է, թէ ինչպէս ել ու մուտ է անում շատ անգամ բարձրահասակ, աժդահայ գիւղացին,—այդ նեղ, ծուռ ու մուռ կեղտոտ փողոցների լարիբինթոսը, աթարների այդ անվերջ շարքերը, բուսականութեան այդ բացարձակ բացակայութիւնը՝ մի այնպիսի տխուր կերպարանք են տալիս Շիրակի հայ գիւղերին, որ բացի կարեկցութիւնից ու զարմանքից ուրիշ ոչ մի հաճելի դրացմունք առաջին անգամ չէ զարթնում նայողի սրտի մէջ։ Եւ զարմանքն աւելի է սկզբում, քան կարեկցութիւնը։ Ի՞նչպէս. աշխատասէր հայ գիւղացին, որ օրն ի բուն վայր չէ ձգում ձեռքից խոփը, արօրը, գերանդին կամ եղանը, որ անթիւ անգամ մի ժամվայ ընթացքում սրբում է ճակատի պղբիւր-քրտինքը, որ ժայռուտներն ու առպարներն անգամ դարձնում է կանաչագեղ արտեր ու արօտներ՝ նա, որ անյիշելի ժամանակներից մինչև այժմ յայտնի է իր անընկճելի տոկունութեամբ, որի խելացի, վառվռուն աչքերում փայլում են և սուր միտք, և աստուածային շնորհք, ինչպէս չը կարողացաւ դարերի ընթացքում ըմբռնել, թէ այդ գետնափորները վայել են միայն վայրի գազաններին և անբան անասուններին, խնկաբոյր դաշտերի ու լեռների այդ զաւակը ինչպէս չը հասկացաւ մաքուր օդի նշանակութիւնը. Շիրակի գեղեցիկ արևի տակ ի՞նչպէս նա չը գնա-

հատեց լոյսի արժէքը և դեռ մինչև հիմա շարունակուած է ապրել անօդ և անլոյս որջերում...

... Ընկերներս խումբ-խումբ հաւաքված ուրախուերախ խօսում, ծիծաղում են իրար հետ, իսկ ես տխուր ու տրտում, նայում եմ հեռու Արաջայի կողերին: Ահա մի վայրկեան նրա ստորտում երեւացին աւերակների ցիր ու ցան խմբեր և կրկին թագնվեցին գեղնագոյն, այրված բուրների ետեւում: Դա Անին է: Գնացքը անագ սլանում է: Ահա կանգնեց իմ առաջ և մի այլ կիսաւեր եկեղեցի, կործանված գմբէթով և օդի մէջ կախված բարձր կամարներով, երկաթուղու գծից հազիւ 50—60 կանգուն հեռու. նրա շուրջը, այս ու այն տեղ, երևում են պատերի հազիւ նշմարելի մնացորդներ, իրար վրա թափթփված են քարակոյտեր, երևում է նոյն իսկ գերեզմանաքարի մի խաչարձան: Աւերակ դիւզի տխուր մնացորդներ: Նօրից մի վայրկեան երևում է Անին իր պարիսպների երկայն շարքով և կրկին արագութեամբ անյայտանում: Անընդհատ առաջ ենք սլանում. ահա և մի ուրիշ աւերակ դիւզ մի սիրուն, բոլորակ բլրի գլխին, օրից բազմաթիւ քարեր գլորվել են դէպի վայր, գէպի բլրի ստորտը: «Պարաբաներ», ինչպէս անուանում է նրանց գիւղացին: Շիրակի դաշտում ոմնթիւ են այդ «խարաբաները», որոնք մի քամանակ եղել են դուրս շէն ու հարաւստ մեծ գիւղեր, բազմաթիւ ազգաբնակութեամբ, կանգնած որոշ կուլտուրական բարձրութեան վրա: Մինչ այժմեան հայ գիւղը չէ կարողանում շատ անգամ շինել մի վայելուչ աղօթատուն, այդ «խարաբաներում» գեռ

ևս կանգուն են մնացել, դարեր անցնելուց յետոյ, չքնադակերտ եկեղեցիներ. դեռ նրանց մօտ, շատ տեղերում, մնացել են հոյակապ քարաշէն կամուրջներ, ջրանցքներ, սրբատաշ քարերից շինված տների բեկորներ:—«Թարաբաներ», «Որբան դրամատիզմ է պարունակվում նրանցից իւրաքանչիւրի մէջ և որբան բան կարող էին պատմել մեզ նրանք հայ հիւզի տխուր անցեալի մասին և լուսաբանել նրա այժմեան նոյնքան տխուր դրութիւնը:

Ալաջան, Ավլիարը, Իւչ-Թափէքը չեն հեռանում իմ աչքից. նրանք անպատճառ ուզում են տխրութեանս վրա աւելացնել իրանց բաժինը: Նրանց զարթեցրած յիշողութիւնները խառնվում, կապվում են իմ մտքում «Թարաբաների» հետ և ապա կանգ առնում այժմեան հայ գիւղի վրա: Ես նայում եմ նրանց ու յիշում վերջին ուսութիւրքական պատերազմը: Տասնհինգ—տասնվեց տարեկան աշակերտ էի ես դեռ, երբ Ալէքսանդրօպօլի գերեզմանոցից ամենայն առաւօտ անյազ հետաքրքրութեամբ նայում էի դիտակով Ալաջայի գագաթի և լանջերի վրա ցրված թիւրքական անթիւ վրաններին: Գիշերները, երբ վառվում էին ճրագներն ու խարոյկները թիւրքական հեռուոր բանակի մէջ, ես ժամերով նստում էի այդ նոյն գերեզմանոցում և անթարթ աչքով դիտում խարոյկների հագիւ նշմարելի տեսարանը: Վերջի վերջոյ ես չը կարողացայ դիմադրել իմ բուռն ցանկութեանը՝ մօտիկից տեսնելու պատերազմը և, մօրիցս գաղտնի, փախայ Ալէքսանդրօպօլից

դէպի գործող բանակը: Աւանդ, հեշտ էր Ալէքսանդրօպօլից փախչելը, բայց հեշտ չէր մտնել բանակը. զինւորների հասցրած մի քանի բռունցքներից յետոյ՝ ես ստիպված էի յետ դառնալ յուստիար և ձեռնունայն. բայց և այնպէս ես հետաքրքրութեանս մասամբ բաւականութիւն տուի: Վերագարծի կէս ճանապարհին, յուլիսեան այրող արևի տակ, կանգնած մի բարձր բլրի գագաթին, մի քանի վերստ հեռու Իւչ-Քափաններից՝ ես զիտում էի անեղ պատերազմը... Առանձին՝ բաւականութիւն էին պատճառում ինձ այն որոտումները, որ հանում էին ուսական բանակի թնդանօթները, ևս անէծքներ էի ուղարկում Մուխտար փաշային և իմ հեռու, ապահով բլրակից ցոյց էի տալիս նրան իմ... ծտային բռունցքը:

Պատանեկութեան տիանս մտքեր, տիանս զգացմունքներ...

Ես այժմ էլ լսում եմ, կարծես, Ալաշայի և Իւչ-Քափանների մէջ փոխանակվող զնդակների երկուտեք գոռոցը, տեսնում եմ անթիւ հրացանների սպիտակ ծուխը, որ բարձրանում է յանկարծակի այս ու այն բլրի, այս ու այն արհեստական պատնէշի ետեից, բայց հիմա թւում է ինձ, թէ ես լսում եմ նոյնպէս մի այլ գոռոց ու աղաղակ, որ չէի լսում այն ժամանակ... Ալաշայի ետեից, թիւրքա-Հայաստանի հեռու, շատ հեռու դաշտերից, անարկու մրբկի թևով, ինձ հասնում է այժմ օրհասական՝ մի աղաղակ, զոհվող ամբոխի ճիչ ու վայնասուն: Գրգերի, բաշիբուզուկների և այլ զինված զաղանների ոհմակներ թափվել են Ալաշ-

կերտի, Մուշի, Բասենի խաղաղ հայ գիւղերի վրա. արիւնը հոսում է գետի նման, ծուխը բարձրանում է դէպի ամպերը. սարսափահար բազմութիւնը առանց յետ նայելու, փախչում է դէպի ուսաց սահմանը՝ Թողնելով իր ետևից հարիւրաւոր «խարաբաներ»՝ մի այլ հիւրընկալ երկրի մէջ ձեռաց՝ Թէկուզ մի որջ շինելու և մէջը պատապարվելու համար: Ով գիտէ, որքան «խարաբաներ» են մնացել այժմ Թիւրքահայաստանում ուսութիւրջական պատերազմից և վերջին կոտորածներից յետոյ: Եւ սա դեռ այն է, ինչ մենք եւք յիշումս...

Ու որքան անգամ իր պատմական դարաւոր կեանքի ընթացքում քանդվել, աւերվել ու այրվել է հայ գիւղը՝ մի այլ տեղ նորից նոր շինվելու, բիւր տանջանքներով նորից նոր շէնանալու համար: Ո՞վ չէ կողոպտել նրան. սկսած վաղուց անցած օրերի բաբրարոսներից մինչև վերջին ժամանակվայ կատարելագործված աւազակը՝ ամենքն էլ բաժին են կորզել հայ գիւղացու արդար վատակից: Եղե՛լ է արդեօք մի դար, ի՞նչ եմ ասում, մի 30—40 տարի, երբ հայ գիւղը վայելած լինէր անընդհատ խաղաղ անդորրութիւն և ժամանակ ու հնար ունենար անձնատուր լինելու կուլտուրական աշխատանքի, — բարելաւելու և տների դասաւորութիւնը գիւղում, և տների պատերը, և փոքրիկ լուսամուտները, և նեղլիկ դռները, և ասփակ չկառնները... Մշտապէս «երեքեայ ու տասանեայ» նոյն իսկ իբր սեփական հայրենիքում, այսօր Մուշում, վաղը Բասէնում, երրորդ օրը նի-

բակում, չորրորդ օրը ով գիտէ ինչ երկնքի ու  
աստղերի տակ՝ հայ գիւղը հնարաւորութիւն չէ  
ունեցել զարգանալու, կատարելագործփելու, գե-  
ղեցկանալու: Հայ գիւղացու ամբողջ խելքն ու  
հնարագիտութիւնը դարերի ընթացքում ուզոված  
է եղել մի քանի միայն—անընդհատ հոսող արիւ-  
նի ու աւերածութիւնների մէջ պահել իր գլուխը:  
Իր ցեղական ինքնուրոյնութիւնը, իր կրօնը: Եւ  
նա պահել է այդ ամենը, բայց պահել է այժմեան  
որջ—գիւղերում: Հերոս գիւղացի, աւելին անել  
դու չէիր կարող... Իշխան, նախարար, ազատներ,  
ամենքն, ամենքն անհետացել կամ օտարացել են  
և նա միայն, իբրև փոթորկի յանդիման անսասան  
կանգնած մի հաստաբուն կաղնի, իր հակայա-  
կան ուսերի վրա տարել է հայի պատմական դժ-  
բաղդ կեանքի ամբողջ ծանրութիւնը... Նրա որ-  
ջերի մէջ, իբրև մի սրբազան կանթեղ, միշտ ան-  
չէջ պահվել է ցեղական ինքնուրոյնութեան այն  
հուրը, որը հանգցնել այսուհետև չէ կարող ոչ մի  
երկրային, գուցէ նոյն իսկ երկնային զօրութիւն...  
Փառք քեզ, ով որջերից բաղկացած հայ գիւղ, ով  
հայի հիմք ու յենարան:

## VII

Անընդհատ սլանում ենք դէպի առաջ. գնաց-  
քը ծայրէ ի ծայր կտրեց ու անցաւ Շիրակի դաշ-  
տը և այժմ, Ալագեօզ կայարանի մօտ, նա թե-  
քում է իր հարաւընթաց ուղղութիւնը գէպի ա-  
րևելք ու մտնում մի այլ, աւելի լայնածաւալ ու  
ընդարձակ դաշտ, Արարատեան դաշտը:

Հայի սրտի համար սիրելի, քաղցրամտու տեղեր: Ես առիթ չէի ունեցել մինչ այդ ժամանակ տեսնելու դաշտի այս հիւսիս-արեմտեանն մասը, ուստի վազօնի մի պատուհանից շարունակ անցնում եմ դէպի միւս՝ հանդիպակաց պատուհանն ու դիտում շրջակաները: Բայց պատուհաները բռնված են. ընկերներս հետաքրքրութեամբ գլուխները հանել են դուրս և նայում են !դէպի հարաւ: Հն, մօտենում ենք Մասիսին. նրանք օր առաջ կամենում են տեսնել այն հսկային, որին յաղթահարելու համար ճանապարհ են ընկել: Եւ յիրաւի հեռու հորիզօնում, թուխ-կապտագոյն մառախուղի թափանցիկ շղարշով սքողված, երևում է Մասիսի վիթխարի զանգվածը. գորշ ամպերի կոյտերը, որպէս մի հսկայական գլխանոց, ծածկել են նրա կատարը և մռայլել նրա ճակատը: Հայ լեռների ծերուկ նահապետը մեզ չէ ողջունում. նա ուրախ չէ, որ օտար ոտներ սպառնում են կոխել նրա ձիւների անբիծ մաքրութիւնը... Իգուր ես գիտակի ուղղում եմ այն տեղին, ուր ենթադրաբար պէտք է լինի Մասսի գագաթը. բացի մութ մոխրագոյն և սպիտակ ամպերի խառնաշփոթ գալարուածքներից, ուրիշ ոչինչ չեմ տեսնում: Աչքս ակամայ ես հեռացնում եմ նրանից ու կրկին ուղղում Արարատեան դաշտին:

VIII

Ի՞նչս մնաց այն օրից,  
Ո՞ր ջրամօտ գեղերս,  
Ո՞րը իմ շէն քաղաքից,  
Ո՞ր բերկրալի տեղերս:  
Գամառ-Քաթիպա

Հայոց պատմիչներից մէկը—Ղազար Փարպեցին—թողել է մի անզուգական նկարագրութիւն Արարատեան դաշտի մասին: Մեծաւ մասամբ կրօնական նահատակութիւնների, արեան ու սրածութիւնների նկարագրողներ՝ նրանք, այդ պատմիչները, փակել են իրանց աչքերը կեանքի ու բնութեան միւս երևոյթների առաջ և թողել են մեզ այժմ խարխափելու հնութեան անթափանց խաւարի մէջ, երբ հարկ կայ վերակենդանացնելու մի էական գիծ, մի կենսական մանրամասնութիւն այդ վաղուց կորած հնութիւնից: Եւ միայն Արագածոտն գաւառի Փարպի գիւղացի Ղազարիկն է, որ բոլորի մէջ կազմում է մի բաղդաւոր բացառութիւն իր բանաստեղծական գրչից թոած չըբնաղ նկարագրութեամբ:

Արարատեան դաշտի հիւսիս-արեւմտեան մասումն ենք. գնացքը սուրալով անցնում է տասնաւոր վերստեր, կտրում է անագին տարածութիւններ. աչքս ջուր է կտրում պատուհանից նայելով,—ոչ մի գիւղ, բնակութեան ոչ մի հետք, ջրի ոչ մի նշան, ոչ մի թռչուն անգամ. հարթհաւասար, ամայի, անբնակ անապատներ, ծածկըված տեղ-տեղ անապատային աղուտներին յա-

տուկ գեանատարած թփերով: Լեհացի բուսաբանը, որին դիմում եմ ես իմանալու այդ թփեր անունը, ասում է մի քանի լատինական բառեր բացատրում, որ նրանցով ծածկված են Անդրկասպեան և միջին-ասիական անապատները... Խեղձազարիկ, ըստ «Գալան Այրարատու, հոյակապն և հոչակաւորն, և ականաւորն, ամենաբոյսն, ամենաբուղին, ամենագիւտն» դարձել է միջին-ասիական անապատ. նրան ծածկել են աղուտներ, որոնց վրա «անուշահոտ ծաղկանցն սաստկաբուրման» փոխարէն իրանց սուր, անզուրեկան հոտն են արձակում ինչ-որ դեղնած փշտերե թփեր:

Այն միջնակարգ դպրոցում, ուր ուսանում էի ես, կար հայոց լեզուի մի տարօրինակ ուսուցիչ: Մենք զեռ չը գիտէինք գրաբարի այբուբենը, չը գիտէինք նրա քերականութիւնը՝ բայց անգիր էինք անում զանազան «գեղեցիկ» և «ճարտասանական» հատուածներ մեր մատենագիրներից և յունական ու հռոմէական բանաստեղծների թարգմանութիւններից: Դրանց մէջ էր և Փարպեցու՝ Արարատեան դաշտի նկարագրութիւնը: Ի հարկէ, մենք անգիր էինք անում այդ ամենը՝ առանց հեռաւորապէս անգամ նրանց իմաստը հասկանալ կարողանալու: Ով կը կարծէր, թէ մի օր նրանք կարող են պէտք գալ: Ես զօռ եմ տալիս յիշողութեանս և աշխատում վերակենդանացնել մտքիս մէջ՝ նրա ով գիտէ, որ անկիւնում կորած-մոռացված այդ «զանր»: Եւ ահա՛ նա կամաց-կամաց շարժվում է իր թագստեան տեղում, թօթափում է վրայից տարիների-փոշին ու մամուռը...

«Զրաշտս մեծատարածս և որսալիցս, զհո-  
ծեալս էրէովքն կճղակարածնիւք և որոճայնովքն  
և այլովք ևս բազմօք ընդ նոսին»... յիշում եմ ես  
առաջին անգամ, և ապա «Մնուցանէ յինքեան եր-  
կիրն զառուելութիւն հաւուցն յուրախութիւն և  
ի սթափումն ազատաց, զկրկջաձայն, բաղցրաձայն  
երամս կաքաւացն և սալամբացն և զանուշահամ  
ազգ աքարացն վայրենեաց»... «Եւ կամ այլ բա-  
զում և անհամար ցամաքայնոցն և ջրայնոցն շուք  
թռչնոցն»... Սակայն ես ի զուր եմ յիշում... Այդ  
ամենը վաղուց անհետացել են և դրանց փոխա-  
րէն մեզ մասն ու բաժին մնացել է մի գիշատիչ  
անզղ, որ անա բարձր-բարձր ճախրում է օդում իմ  
առաջ և որոնում իր կողոպուտը երկրի վրա...

Փչում է յանկարծ քամին և բարձրացնում  
գնացքի շուրջը բարակ, սպիտակաւուն անապա-  
տային փոշի... Նայում եմ, նայում ես այդ անա-  
պատին և հեռանում պատուհանից... Սիրտս տակն  
նւ վրա է լինում...

Դէմուդէմս նստած է մի ուռս ինժեներ՝ խո-  
րասուզված հետաքրքրական վէպի ընթերցանու-  
թեան մէջ: Միամիտ, խաղաղ տրամադրութեան  
մէջ նա ծխում է իր թանգագին ծխախոտը:

— «Ի՞նչս մնաց այն օրից, որ ջրամօտ գե-  
ղերս, որը իմ շէն քաղաքից, որ բերկրալի տե-  
ղերս» թռչում են ակամայ իմ բերանից, մի ծանր  
հոգոցի հետ միասին: Սս. անգիտակցաբար հայեացքս  
շեշտակի ուղղում եմ ուռն ինժեների դէմքին:

Անհանգստութեամբ նա բարձրացնում է գը-  
լուխը և ապշած նայում է ինձ:

—Что вы?

—Да вот... ցոյց եմ տալիս ես անապատքը...

—А что?

—Такъ, ничего... սթափված կարում եմ ես սկսված խօսակցութիւնը.—մի և նոյն է նա չի հասկանայ. նրա համար ողջ մէկ է...

## IX

Բնութիւնը սկսում է փոքր ինչ կենդանանալ միայն այն ժամանակ, երբ մենք կտրել անցել ենք Այրարատեան դաշտի կէսից աւելին: Կարիտուն կայարանի մօտ, այս ու այն տեղում, անապատի մերկութեան մէջ, երևում են այգիների ու ծառաստանների մխիթարական օազիսներ. հեռու երևում է նաև Վաղարշապատը: Բարձր կազմախների արանքից ես տեսնում եմ Էջմիածնի և նրա շուրջն եղած վանքերի հինաւուրց գմբէթները: Դիտակ ուղղում եմ նրանց կողմը և դիտում նրանց ամեն-մէկին առանձին առանձին: Սիրտս բարախում է արագութեամբ. մի ներքին յուզմունք շարժում է ձեռքս և նրա հետ միասին դիտակը: Յիրաւի կանգձն են դեռ. չէ՞ տապալել նրանց հզմը, չէ՞ փշրել կայծակը: Ինձ մի բայէթւում է, որ նրանք, այդ հազարամեայ գմբէթները, երերում են և շարժում իրանց կատարներն այս ու այն կողմը:—Չէ, դա քամին է տարուբերում կազմախները, դա աչքի պատաքանք է, երկչոտ երևակայութեան խարէութիւն,—սիրտ է տալիս ինձ մի ներքին ձայն,—մի վախիր. նրանք կանգնած են անսասան և դեռ կը կանգնեն դարեր.

հողմ, փոթորիկ ու կայծակ նրանք շատ են տեսել ու չեն շարժվել տեղից...

Ձեռքս դադարում է դողալուց. դիտակն հանգարտութեամբ ես դնում եմ պատեանի մէջ ու խորին ակնածութեամբ շարունակում նայել հեռաւոր գմբէթների հազիւ նշմարելի ստուերագծերին: Հետզհետէ նրանք ծածկվում են ծառերի խմբերի մէջ ու չքանում իմ աչքից:—Մնաք բարով, վանքեր, անասան գմբէթներ, մնաք բարով, դարերով պաշտված սրբութիւններ: Մի այլ, աւելի բարձր, ամպամերձ գմբէթի կատարից շուտով ես հայիացքս կուղղեմ դէպի ձեզ. առ այժմ մնաք բարով...

## X

Օրը երեկոյանում է. մենք համնում ենք Երևան: Կայարանի ընդարձակ սալայատակի վրա, այս ու այն տեղում, խումբ-խումբ կանգնած են բազմաթիւ զինւորներ,—նրանք այդ օրը հասել են Երևան,—խոնվում է գնացքը դիմաւորող խայտաճամուկ հատարակութիւն: Ընկերներս շարվում են կայարանի սեղանների շուրջը ճաշելու, իսկ ես և Մարգսեանը վերցնում ենք կառք և շտապում քաղաք: Օրվայ նորութիւններն իմանալու բուն ցանկութիւնը յաղթում է մեր մէջ քաղցի զգացմունքը. մենք որոշում ենք ճաշի փոխարէն ընթրել քաղաքից յետ դառնալիս:

Երևանի կայարանը երկու վերստ, գուցէ նոյն իսկ աւելի, հեռու է քաղաքից: Անտանելի փոշոտ ճանապարհով սլանում է կառքը ու թաղում մեզ

փողու ամպերի մէջ: Երբ մենք հասնում ենք քաղաք՝ արդէն նման ենք ջրադացպանների. փողու հաստ շերտը ծածկում է մեր շորերը, մեր մազերն ու մօրուքը, նոյն իսկ աչքերի թերթերունքը: Աւելի լաւ դուրսեան մէջ չեն և քաղաքի փողոցները. նրանք նոր քարվում ու սալայատակվում են. ամեն տեղ, դիտաւոր փողոցներում, թափթըփված են քարակոյտեր, շինութեան նիւթեր, գործիքներ: Երևանը շինվում ու սարքվում է. գուցէ նա լաւ կը լինի ապագայում, բայց այդ օրը նա մեզ վրա թողեց աւերակի տպաւորութիւն:

Մենք արձակեցինք կառքը և սկսեցինք շրջել ոտքով, ամեն րօպէ դիպցնելով ոտներս քարերի: Ոչինչ, սա Մասիս բարձրանալու նախավարժութիւն է, մխիթարում էի ես Սարգսեանին, որ բարկանում էր երևանցիների վրա և կծու յանդիմանութիւններ ուղղում նրանց հասցէին: Ես մի քանի անգամ, թէև անցողակի կերպով, եղել էի Երևանում և նա, իբրև քաղաք, ինձ չէր հետաքրքրում, բայց Սարգսեանն առաջին անգամ էր մտնում Երևան և նա կամենում էր անպատճառ տեսնել նրա նշանաւոր տեղերը, շինութիւնները: Ընկերոջս ցանկութիւնը գովելի էր, բայց դժուար իրագործելի այն պահին, երբ մութն արդէն ընկնում էր և ծածկում Երևանի թէ նշանաւոր և թէ աննշան վայրերը: Մենք որոշեցինք օգուտ քաղել լուսնի լոյսից և տեսնել գոնէ հայոց մայր-եկեղեցին: Հարց ու փորձով մենք գտանք վերջապէս այդ եկեղեցին և մտանք նրա ընդարձակ գաւիթը: Եկեղեցին, իբրև շինութիւն, մեզ դուր չեկաւ.

Ճարտարապետական ոչ մի հետաքրքրութիւն նա չէ ներկայացնում, մենք մի անգամ պտտվեցինք նրա շուրջը ու հեռացանք. բայց դրա փոխանակ երկար կանգ առանք Չանգուի բարձր ձորագլխին: Ներքեում, ձորի խոր յատակում, ալիքները քարերին խփելով ու խշշալով, արագութեամբ հոսում էր գետը: Լուսինը տեղ-տեղ փայլեցնում էր նրա փրփրադէզ ջրերն և մեզ աւելի պարզ ցոյց տալիս նրանց թափանցիկ մաքրութիւնը: Սաղարթախիտ ծառեր այս ու այն տեղում խումբ-խումբ կախել էին իրանց ճիւղերը գետի փրփուրի վրա: Որոշ տրամագրութեան տակ երկար նայում էինք մենք հին Հրազդանին ու ականջ դնում նրա միանման խեղդված ձայնին, և մեզ թւում էր, որ հին գետը խուլ կերպով հառաչում է իր խորունկ արգելարանում և կանչում է մեզ դէպի իր ափը... Թերևս յայտնելու իր բազմադարեան գանգատը... — «Հրազդան, գետակդ իմ հայրենի, Հրազդան, ջրիկդ իմ անուշիկ»... հառաչեցի և ես Նահապետի նման, իբրև արձագանք գետի տխուր խշշոցին, ու Սարգսեանի հետ միասին դուրս եկայ եկեղեցու գաւթից:

Մի ժամից յետոյ մենք նստած էինք «Մշակի» թղթակից Ա. Դօ-ի սենեակի հիւրընկալ յարկի տակ ու թէյ և միրգ առաջներիս՝ զրոյց էինք անում: Ա. Դօ-ն մանրամասնաբար պատմեց Երևանի բոլոր նորութիւնները և հոգեպէս մխիթարեց մեզ: Երևան և... վերջապէս առաջադիմութիւն: Ուրախացիր, սիրտ, դարաւոր անդամալուծը շարժվում է...

Ուշ գիշեր էր արդէն, երբ մենք շնորհակա-  
լութիւն յայտնեցինք Ա. Դօ-ին առաւելագէտ նրա  
հազորդած նորութիւնների համար և դուրս գա-  
լով նրա մօտից՝ գոհ սրտով վերագարձանք. կա-  
յարան:

XI

Գիշերը մենք պէտք է անցկացնէինք այն  
վազօնում, որով եկել էինք և որ երկաթուղու  
վարչութիւնը յատկացրել էր արշալախմբի ան-  
դամներին: Նախընթաց գիշերը, ճանապարհին,  
ինձ չէր աջողվել քնել և ես յոյս ունէի այս ան-  
գամ լրացնել քնի պակասորդը. բայց Երևանի մո-  
ծակներն այլ կերպ էին տնօրինել իմ և իմ ընկե-  
րակիցների բազդը: Վազօնը լիքն էր այդ արիւ-  
նածարաւ. փոքրիկ գազաններով, որոնք չը նայե-  
լով իրանց խոշորացուցային մեծութեան՝ տան-  
ջում էին մեզ աւելի, քան գուցէ ընդունակ են  
տանջել մեծ գազանները: Գոնէ վերջինների դէմ  
կարելի է կուռել, կարելի է մեռնել կամ ապրել,  
բայց փոքրիկ գազանների դէմ չը կայ ոչ մի մի-  
ջոց. նրանք երբեմն տզզոցով և երբեմն առանց  
տզզոցի առաջագոյն ազդարարութեան՝ յարձակ-  
վում էին անխնայ մեզ վրա և տանում իրանց  
արեան բաժինը: Ես ամբողջովին, ոտ ու գլխով,  
ամուր փաթաթվել էի վերմակով և աշխատում էի  
մի ասեղի ծակ անդամ բաց չը թողնել մոծակնե-  
րի մուռքն արգելելու համար. ես խեղդվում էի  
տաք վազօնում, վերմակի տակ, բայց չարախըն-  
դաց միջատները միայն ծիծաղում էին ինձ վրա:

Նրանք մէկ ծակում ու այրում էին ուղիղ քթիս ծայրը, մէկ ոտներին մատները. դեռ մէկ տեղս չը քորած, ձեռքս արագութեամբ տանում էի մի ուրիշ տեղ... բայց դրա փոխանակ ես և իմ ընկերները լուծում էինք մեր վրէժը այդ անտանելի արարածներին՝ ուղարկելով նրանց... դժոխքը և անթիւ նախատական խօսքեր ուղղելով նրանց հասցէին: Այդ բանի մէջ մի առանձին եռանդ ցոյց էր տալիս ուս ընկերակիցներին մէկը, որ պատերազմում էր մոծակների դէմ հայհոյանքների անսպառ տարափով. նա նոյն իսկ մեղադրում էր Երևանի քաղաքային վարչութեան, որ կանսօններ չէ հրատարակում մոծակների համար և չէ ստիպում նրանց փոքր ինչ աւելի հիւրասէր և կարգապահ լինելու:

Առաւօտեան մենք վեր կացանք յոգնած ու գունաթափ. նայելով ամեն մէկիս դէմքին առանձին-առանձին՝ ուս կատակաբանը հաւատացնում էր, որ ոչ մէկիս մարմնի մէջ ոչ մի կաթիլ արիւն չէ մնացել—ամբողջը ծծել են մոծակները. նա խորհուրդ էր տալիս մեզ վերադառնալ Թիֆլիս, որովհետև արնաքամ մարմնով չէ կարելի բարձրանալ ոչ միայն Արարատի գլուխը, այլ և հասնել նրա ստորոտը:

Ժամի 6-ն էր արդէն, երբ մենք դուրս եկանք վագօն-ննջարանից: Պարզ, գեղեցիկ, խաղաղ առաւօտ էր: Հարաւ-արևմտեան կողմում մեր առաջ կանգնած էին Մասիսների երկու վիթխարի գագաթները և կարծես քաշում, հրապուրում էին մեզ դէպի իրանց բարձունքը: Նայելով նրանց

անամպ, սպիտակ կատարներին,—Փռքը Մասիսի գլուխն ևս ծածկված էր թեթև ձիւնով,—մենք մուսացանք և անհանգիստ գիշերն և մոծակներին: Լի եռանդով սկսելու մեր դժուար ճանապարհորդութիւնը՝ մենք աշխատում էինք, ժամ առաջ դուրս գալ Երևանից և ճանապարհ ընկել: Պօստային կառքերը, որոնք արդէն վարձված էին նախընթաց օրը, պատրաստ կանգնած էին կայարանի մօտ: Շտապով թէյ խմելուց և մի փոքր պանիր-հաց ուտելուց յետոյ՝ մենք կապեցինք բոլոր ծանրոցները կառքերի ետևը և ճանապարհ ընկանք դէպի Արալըխ:

## XII

Մանր վեցտեղեան օմնիբուսը մեծ դժուարութեամբ մի քանի պտոյտներ գործեց դարուփոսերի մէջ և ընկաւ Ղամարլուի խճուղին: Առատ ճնափօղկի—ի խոստումով ոգևորված՝ հայ կառավարը սկսեց անխնայ քշել ձիերին, բայց որորքան էլ նա աշխատէր՝ այսուամենայնիւ մեզ չէր կարող գոհացնել. երկաթուղու գնացքի սրընթաց թռիչքից յետոյ՝ կառքի ամենաարագ վագրն անգամ մեզ թւում էր չափազանց դանդաղ, չափազանց ձանձրալի: Մի քանի անգամ մեր դժգոհութիւնը կառավարին յայտնելուց յետոյ,—նա փիլիսօփայօրէն լուում էր և հարկ չէր համարում պատասխանել,— մենք թողինք նրան իր կամքին. ձիերն սկսեցին գնալ պօստային «նժոյգներին» յատուկ արագութեամբ:

Ճանապարհը Երևանից դէպի Ղամարլու ունի

իր առանձին գեղեցկութիւնը. խճուղու երկու կողմում, հարթ-հաւասար տարածութեան վրա, անընդհատ լայն ժապաւէնի նման, ձգվում են բամբակի ու բրնձի ցանքեր: Բամբակի կոկոնները բացվել են և նրանց սպիտակ-կարմրաւուն ծաղիկները փայփայում են մեր աչքերը. թւում է, թէ անցնում ես վարդենիների լայնատարած տնկարանների միջով: Տեղ-տեղ նրանք ընդհատվում են այգիներով, որոնց մէջ, գետնի վրա ցածր-ցածր կուացած՝ թփերի տակից երևում են խաղողի դեռ ևս կանաչ ողկոյզները: Պարսիկ այգեպանը, իր անփոփոխ թաղիքեայ սպիտակ գդակով և նոյնքան անփոփոխ կապոյտ կապայով կանգնած է այգու հողաշէն պատի մօտ և ուշադրութեամբ նայում է մեր կառքին. նրա արեառ դէմքի վրա գոհութեան ժպիտ է խաղում. անշուշտ մեզ տեսնելու համար չէ այդ ժպիտը. երևի նա նոր նայում ու գուարճանում էր իր կանաչագեղ այգու, իր քրտնաթոր աշխատանքի պտուղ՝ անհամար ողկոյզների տեսքով և այդ ժպիտը լուր մի մոռացված մնացորդ է նրա հողեկան ուրախ յուզմունքից: Մի քիչ հեռու ճանապարհի վրա մեզ հանդիպում են բեռնաւորված էշերի խմբեր, որոնց ետևից դանդաղութեամբ գնում են պարսիկ կիսամերկ, ոտաբոբիկ պատանիներ: «Շատ են այստեղ պարսիկները», անցնում է իմ մտքից ու ակամայից անհանգստացնում ինձ մի վայրկեան. բայց ահա, կարծես դիտմամբ անհանգստութիւնս փարատելու համար, մէկը միւսի ետևից մեզ հանդիպում են բազմաթիւ սայլեր, կառքեր, օմնիբուսներ,

դիւրիժանսն եր, որոնց մէջ հայ գիւղացի աղ—  
մարդիկ, կանայք և աղջիկներ, տօն օրվայ պ—  
հունի շորերով զարդարված, բարձրաձայն ուրախ—  
խօսակցութեամբ, ծիծաղով ու քրքիջով, արտա—  
անցնում են դէպի Երևան: Իմ հարցին հայ կառա—  
վարը պատասխանում է, որ նրանք Աստուածած—  
նի տօնի պատճառով ուխտ են գնում դէպի Նորք,  
դէպի Սևան:

— Դէպի Սևան, զարմանում եմ ես, բայց նա  
այնքան հեռու է այստեղից:

— Ի՞նչ անենք, որ հեռու է,— հանդարտ պա—  
տասխանում է կառավարը,— Երուսաղէմն էլ հե—  
ռու է, բայց մարդիկ էլի գնում են...

Ես համաձայնում եմ փիլիսօփայ կառավարի  
հետ: Ընդհանրապէս ինձ շատ է դուր գալիս այդ  
կառավարը. նրա ծանրախոհ, լուրջ դէմքի վրա  
երևում է խելքի բացորոշ արտայայտութիւն. խօ—  
սուածքը դրական է ու կտրուկ, դատողութիւն—  
ները՝ սուր: Երևում է, որ 50—55 տարիների փոր—  
ձը գուր չէ անցել նրա համար: Լսելով մեր դի—  
տաւորութեան մասին՝ բարձրանալու Մասիսի գը—  
լուխը, նա ամենևին չէ զարմանում և չէ կրկնում  
հայ, պարսիկ ու քիւրդ գիւղացիների սովորական  
խօսքը, թէ դա անկարելի բան է:

— Ինչու չէ, ծանր-ծանր ասում է նա, մար—  
դիկ հիմա առաջուանը չեն, սատանայ են դարձել.  
Մասիսն, եթէ երկու էդքան բարձրութիւն էլ ու—  
նենայ, էլի կը բարձրանան. հրէն Երևան մաշին  
եկաւ. առաջ ճվ էր տեսել այդ տեսակ բաներ:  
Մարդի ձեռքից ոչինչ չի փախչի:

Ես զգում եմ, որ կառավար. Տօնօն ինքն էլ  
այն մարդկանցից է, որոնց ձեռքից ոչինչ չի փախ-  
չի, և Աստուած գիտէ, թէ կեանքի ինչ ձախող  
հանգամանքներ նրան կառավար են դարձրել:

XIII

Երկու ժամից յետոյ մեր կառքը կանգնեց  
Աղամզալու կէս թուրք, կէս հայաբնակ գիւղի պօս-  
տային կայարանի առաջ: Չը կայ, կարծեմ, Ան-  
դրկովկասում պօստային մի կայարան, որից հոս  
քաշած չը լինեն Փամբակի մեծ-դարաքիլիսեցի-  
ները. այդ մարդիկ կարծես ստեղծված են միայն  
պօստային կապալառուներ և կառավարներ լինե-  
լու համար. դուք կը հանդիպէք նրանց և Վրաս-  
տանի խորքերում, և Թիւրքիայի ու Պարսկաստա-  
նի սահմանների վրա, և Բագուի նահանգի անա-  
պատներում: Ինչ գաղտնիք կայ թագնված այդ  
պարապմունքի մէջ—չը գիտեմ. պարզ է այս մի-  
այն, որ թէ պօստային կապալառուի և թէ կա-  
ռավարի պաշտօնները վերին աստիճանի ծանր և  
տաժանելի պաշտօններ են: Ամեն մի անցորդ,  
տեղի թէ անտեղի, պարտաւորութիւն է համա-  
րում բղաւել—ճղաւել նրանց վրա, սիրտն ուզած  
ժամանակ՝ անարգել, երբեմն և հայհոյել, և նրանք  
—կապալու թէ կառավար—քաղաքագիտաբար  
ստիպված են լռել, մինչդեռ իրանց գեղեցիկ ծնըն-  
դավայրն իր դիրքով և իր լեռնային շքեղ արօտ-  
ներով այնքան նպաստաւոր պայմաններ է ներ-  
կայացնում թէ գիւղատնտեսութեան և թէ այլ  
աշխատանքի համար: Փնօք Աստուծոյ, ձիեր փո-

խելն այս անգամ անցաւ առանց սովորական  
նախորժութիւնների և դարաքիլիսեցիները **չք**  
ստացան թուք ու մուրի իրանց սովորական **բա-**  
**ժինը:**

Աղամզալուից սկսած մինչև Ղամարլու, տա-  
նաւոր վերստերի տարածութեան վրա, ճանա-  
պարհն անցնում է մի երկրային դրախտի միջով-  
մի թզաչափ հող անդամ չէ մնացել անմշակ. այ-  
գիներ, այգիներ, անվերջ, անսահման. որքան  
գառն աշխատանք, որքան արիւն-քրտինք է թափ-  
վել նրանց վրա: Սաղաղ, անմուռնչ գիւղեր, ի-  
րանց սպիտակ հողաշէն տներով, ցրված են այ-  
գիների անծայր կանաչուտների մէջ և անընդհատ  
յաջորդում են միմեանց: Իրար ետևից մենք ան-  
ցանք Շինկաւէտ, Նորագաւիթ, Թագա-Գիւղ և  
այժմ անցնում ենք Սարալթլու, Իմանշալու, Կա-  
րակոյուն, Ղուլասար, Ղարահամզալու, Ջիզամլու,  
Բօշնալի, Օղուրբէկլու, Դալլար և Գօզակլու մե-  
ծաւ մասամբ հայաբնակ գիւղերի միջով ու մօտե-  
նում ենք Ղամարլու նոյնպէս հայաբնակ մեծ գիւ-  
ղաքաղաքին:

Կէսօր է. արևն այրում է անխնայ. մի քանի  
ընկերներով, շրջականերն աւելի լաւ դիտելու հա-  
մար, մենք նստած ենք ծանրոցքը տանող բաց  
կառքի մէջ: Շուտ շուտ մենք նայում ենք Մեծ ու  
Փոքր Մասիսների գագաթներին և դիտողութիւն-  
ներ անում նրանց մասին: Մեծ-Մասիսի գլուխը  
ծածկված է սպիտակ, թեթև ամպերով, որոնք եր-  
բեմնապէս ցրվում, հեռանում են ու ցոյց տալիս  
մեզ մի կտոր յաւիտենական ձիւններից: Փոքր

**Մասիսը** բացել է մեր առաջ իր ստորոտը և մենք աեսնում ենք նրա կանօնաւոր, կոնաձև զանգուածի ամբողջութիւնը՝ ստորոտից մինչև գագաթը. նա կանգնած է Մեծ-Մասիսի կողքին, իբրև կըրտաւեր եղբայր, որ պատրաստ է մտնել իր աւագ եղբօր հովանու տակ: Եւ աւագը չէ զլանում նրան իր հովանաւորութիւնը. փայլուն, արագաշարժ ամպեր ձգվում են Մեծ Մասսի գագաթից երկար ժապաւէնի նման դէպի Փոքրի գլուխը և մի րօպէ ծածկում նրան մեր աչքից. այսու ամենայնիւ մենք կարողանում ենք նկատել, որ առաւօտվայ ձիւնը արդէն հալուել է Փոքր Մասսի վրա և նրա գլուխն ընդունել է իր սովորական գորշ—դեղնաւուն գոյնը:

Հասնում ենք Ղամարլու: Պօստային կայանի դրան առաջ ուրախ ժպիտով դիմաւորում է մեզ մի երիտասարդ, գեղեցկադէմ կին, թէպէտև մենք նախածանօթ չենք նրա հետ: Դա կին—բլժիշկ էքիզ—Կրիմն է, որ Ֆինանների մինիստրութեան կովկասեան ներկայացուցիչ Սուլթան-Կըրիմ-Գիրէյի և լեհացի զինւորական բժիշկ Վիտովսկու հետ անհամբեր սպասում է մեր գալլստեան: Տիկինը և Սուլթան-Կրիմ-Գիրէյը նոր վերադարձել են դէպի հիւսիսային Պարսկաստան կատարած ճանապարհորդութիւնից. նրանք վաղօրօք պայմանաւորվել էին հանդիպել մեզ հետ Ղամարլուում՝ Արարատի վերելքին մասնակցելու համար:

Նորից ձիերը փոխելուց և նորից դարաքիլիսեցիների հանդիպելուց յետոյ՝ մեր խումբը՝ ար-

դէն բաղկացած 13 անդամից՝ շատագոյ ճանապարհ-  
է քննուած դէպի Աբալըխ՝ գիշերը Մասիսի սա-  
րոտում, Սարգսր-Բուլազում, անցկացնելու զՔ-  
տաւորութեամբ:

#### XIV

Կառքը սլանում է և մենք արագութեամբ  
հեռանում ենք Ղամարլուից դէպի Մասիսի սա-  
րոտը: Ճանապարհը երկու կայարաններէ—Ղա-  
մարլուի և Աբալըխի—մէջ մի առանձին հեռա-  
բրքորութիւն չէ ներկայացնում. շքեղ բուսակա-  
նութիւնը, որով մենք անընդհատ զուարճանում  
էինք Երևանից սկսած մինչև Ղամարլու, զերջա-  
նում է. սկսվում են նորից տխուր, ամայի դաշ-  
տեր՝ տեղ-տեղ ծածկված ցածր, գետնի երեսին  
փոկած միանման թփերով: Միակ հետաքրքրական  
բանը այդ ճանապարհին Արաքսն է, որին և շու-  
տով համնում ենք մենք:

Առաջին անգամն էր, որ ես տեսնում էի  
մայր-Արաքսը: Մինչ երկաթեայ նաւակներից  
բաղկացած պարօմը կը տեղափոխէր մեր կառ-  
քերը գետի մի ափից դէպի միւսը՝ ես կանգնած  
էի անշարժ, լոկերներիցս հեռու, Արաքսի ցած-  
րադիր եզիրին և լուռ նայում էի նրա հարթ-  
հաւասար հայելուն, նրա պարզ, մաքուր ջրերին:  
Կամայ-կամայ, առանց շտապելու, առանց մի շը-  
շուկ անգամ հանելու անցնում էին այդ ջրերն իմ  
ստաջից՝ որոճալով իրանց տխուր մտածմունքնե-  
րը: Բանաստեղծի նման ես ոչ մի հարց չը տուի  
Արաքսին. ես չը հարցրի նրան, թէ ինչու նա

«Ճկանց հետ պար չէ բռնում մանկական», ինչու «սգաւոր է», ինչու «արցունք ցայտում են նրա սէգ», հպարտ աչերից»։ Ես խորհուրդ չը տուի նրան «խայտալով» հոսել դէպի ծովը։ Առանց հարցերի ես զգում էի նրա պատասխանը. զգում էի իմ ամբողջ հոգով հայրենի գետի անփարատ վիշտը, նրա դարաւոր խոհերի դառնութիւնը, նրա անմխիթար սուգն ու անմոռնչ լուսթիւնը։ Ես զգում էի, որ նա չէ կարող «խայտալ», նա շատ լաւ գիտէ, որ «խայտալու» ոչ մի բան չունի հայը։ Լաց, արտասուիւր, հայրենի գետ, դրանից աւելի դեռ սփոփանք չը կայ քեզ համար. ահա և ես գլորում եմ մի կաթիլ քո վճիտ ջրերիդ մէջ—թող իրար հետ խառնվեն մեր արտասուքը. կը գայ մի օր և մենք կը ժպտանք ու կը խայտանք իրար հետ...

Ինձ կանչեցին. պարօմը վերջին անգամ անցնում էր գետի հանդիպակաց ափը. հարկաւոր էր շտապել. ես անցայ այն տնակի առաջից, ուր ապրում են պարօմի վրա աշխատող բանւորները։ Տնակի հիւսիսային կողմում, ստուերի մէջ, ուղիղ Արաքսի ափին, չոքել էր մի պարսիկ և կատարում էր իր նամազը։ Զերմեռանդ ծերունու բարի դէմքը հոգեկան էքստազ էր արտայայտում։ Սորաւուզված սրտարուղիս աղօթքի մէջ՝ նա չը նկատեց իմ ներկայութիւնը։ «Ափերիս մօտ կըկգած՝ իր նամազը կատարէ թուրք կամ պարսիկն հոտած»—անցաւ իսկոյն իմ մտքից։ «Հոտած» էր արդեօք այդ պարսիկը, թէ ոչ—չը գիտեմ, հաւանական է նոյնքան «հոտած», որքան ամեն մէկը

մեղանից.—բայց ինչ էլ որ լինէր, ես ակամայ ժպտացի դէպքի այս քմահաճոյքի վրա:

Արալը թիւրքաբնակ գիւղում, որ ընդամենը 10—12 վերստ հեռու է Ղամարլուից, արշաւախմբի անդամներին դիմաւորեց տեղական պրիստաւը. նա ամեն ինչ վազօրօք պատրաստել էր մեր ճանապարհորդութիւնը դիւրացնելու համար, —գտել էր առաջնորդներ, նշտնակել էր զինւորված պահապաններ, վարձել էր ձիեր, բերել էր տուել ուղտերի մի ամբողջ կարաւան՝ մեր ծանրոցքը տեղափոխելու դէպի Սարգար-Բուլախ: Ի հարկէ, այս ամենը կատարված էր ոչ ի պատիւ իմ նուաստիս... ես միայն շահվում էի ուրիշների ընկերակցութիւնից:

Արալը խում չը կայ պօստային կայարան. մենք իջևանել էինք գիւղական դատարանի շինութեան մէջ. նրա ընդարձակ գաւիթը մեզ համար մի անսովոր խայտաճամուկ—գեղատեսիլ պատկեր էր ներկայացնում: Քիւրդ, թիւրք, պարսիկ իրանց ազգային տարազներով խառնվել էին իրար՝ ձիերի և ուղտերի մօտ. ամենքը խօսում էին բարձրբարձր իրանց լեզուով, ամենքը միասին աղաղակում էին և այդ ընդհանուր աղաղակի մէջ ամենից աւելի բարձր, ամենից աւելի որոշ լսվում էր քրդական կոչտ, գոեհկահնչիւն, լեռնային լեզուն, որով, երևի, անհնար է խօսել ցածրաձայն:

Մի-երկու ժամ Արալը խում հանգստանալուց և ճաշելուց յետոյ՝ մենք ձի հեծանք և գիւղի ծուռըն ու մուռ, փոշոտ փողոցներն անցնելով՝ ուղղեցինք մեր ընթացքը գէպի արևմուտք, ուղիղ

**դէպի Մասիսի ստորոտը:**

Նեղ, աւազուտ ճանապարհով, երկար ու ձիգ՝ ձի ձիու ետեից շարված՝ առաջ էր գնում մեր Խայտաճամուկ կարաւանը. ամենքից առաջ գնում էր իր սպիտակ արագոտն փոքրիկ ձիու վրա քրդական Ակոռիի գիւղապետ Հասօն, մեր առաջնորդը—մի կրակոտ 60—65-ամեայ ծերունի, որ չը նայելով իր տարիքին շուտ-շուտ վայր էր գալիս ու նորից թռչում ձիու վրա այնպիսի թեթևութեամբ, որ մենք, Չահիներս, միայն նախանձվել կարող էինք նրան: Ծերունի Հասօն ամեն քայլափոխում ամաչեցնում էր մեզ՝ երբեմն մէկին, երբեմն միւսին զանազան ծառայութիւններ մատուցանելով: Հարազատ զաւակ լեռների՝ նա իր սպիտակող մազերի օրերում պահել էր իր մէջ այնքան եռանդ ու աշխոյժ, որքան մենք չենք ունենում զուցէ մեր երիտասարդութեան օրերում:

Հասօն գնում էր իմ առաջից. նայելով նրա աղաւտ ու հանգիստ նստուածքին ձիու վրա, նրա դեռ բոլորովին ուղիղ ու ճկուն մէջքին, ես մտածում էի ինքս ինձ, «Շյն, բնութիւնն աւելի ողորմած է դէպի իր հարազատները, քան դէպի մեզ, դէպի նրանից հեռացածներս ու խորթացածներս: Ի՞նչ անենք, որ Հասօյի ամբողջ աշխարհագրական քարտէզի վրա մի գիւղ կայ միայն նշանակված,—Արարատի ձորում կորած նրա հայրենի Ակոռին,—փոյթ չէ. բայց բնութիւնը դրա փոխարէն նրան տուել է այն, ինչ որ չէ կարողանում տալ մեզ ոչ մի գիտութիւն, ոչ մի քաղաքակրթութիւն իր առողջապահութեան հետ միասին—

անգնահատելի, թանգագին առողջութիւն»։ Եւ ես այդ րօպէին կրկնակի իրաւունք ունէի այդպէս մտածելու,—ձի նստելու անսովոր՝ ես տանջվում էի ասիական փայտեայ չոր թամբի վրա ու ծումը ունում երեսս ամեն անգամ, երբ ձին սկսում էր արագացնել իր ոտները, մինչ Հասօն նստել էր մի նոյն ու նման թամբի վրա այնպիսի փափկութեամբ, որ կարծես աղուամազի ներքնակ ունենար տակին։ Սակայն ինձանից աւելի, անշուշտ, տանջվում էր բժշկուհի էքիզ-կրիմը, որ տղամարդու լայն անդրավարտիկ և թաւշեայ կարճ բաձկոնակ հագած—ի դէպ, այդ նրան շատ սազ էր գալիս—ստիպված էր ձիու վրա նստել տղամարդի նման. կանացի թամբ չը կար և նա հարկադրված էր մի կերպ հաշտվել եղածի հետ։ Տիկնոջ անընդհատ զանգատները վերջացան մի «աղէտով», որ բարերազդարար վատ հետեանք չունեցաւ. նա վայր ընկաւ ձիուց, բայց այնպէս աջող, որ ոչ մի վնաս չը կրեց, եթէ չը հաշտենք երկիւղը և այն սուր ճիչը, որ արձակեց վայր ընկնելիս։

XV

Արալըխից մի քանի վերստ հեռանալուց յետոյ՝ պարզ ու որոշ գծով երևաց մեզ Արարատի ստորոտի սահմանը, ուր վերջանում է դաշտավայրը և որտեղից յայտնապէս սկսվում է լեռան փէշերի աստիճանական բարձրութիւնը. սահմանն այնքան որոշ էր, որ կարծես մէկը կամեցած լինէր դիտմամբ ընդգծել դաշտի և լեռան տարբերութիւնը։ Երբ մենք հասանք այդ գծին, երևաց,

որ նա կազմվել է Մասիսի անեղ հրաբխային ժայթ-  
քուածքի մի հոսանքից, որ, ո՞վ գիտէ, ինչ անյի-  
շատակ ժամանակներում բղխելով լերան պատա-  
ռուածքներից՝ վազել, լցվել է դաշտը ու կանգ  
առել այդ տեղում: Կարծես մարդկային ձեռքով  
քաշված մի սահմանագծի մօտ վերջանում են դաշ-  
տի աւազուտները՝ տեղի տալով Արարատի ամ-  
բողջ զանգուածին յատուկ լեռնային ժայռուտնե-  
րի: Մացառներով ծածկված հարթ—հաւասար  
աւազուտի փոխարէն, սկսվեց մի թեք լեռնադաշտ,  
որի վրա առատութեամբ այս ու այն կողմում  
ցրված են մանր ու խոշոր քարեր, տեղ-տեղ նոյն  
խակ անագին ժայռեր: Թէ գուցէ դա, ինչպէս կար-  
ծիք յայտնեցին արշաւախմբի անդամներից մի  
քանիսը, մի հսկայական հին, շատ հին սառցա-  
րան է, մի մօրէնա, որ Արարատի գլխից դարերի  
ընթացքում կամաց-կամաց շարժվելով դէպի վայր՝  
բերել է իր հետ քարերի այդ անհամար բազմու-  
թիւնը և հասնելով Արաքսի աւազուտների սահ-  
մանը, կանգնել է անշարժ, կորցնելով իր շարժ-  
ման պատճառը—սառոյցը: Այսպէս թէ այնպէս,  
այդ հոսանքը յամենայն դէպս բղխել է Մասեաց  
Վհի, ինչպէս անուանում էին նրան հնում, կամ  
Ս. Յակոբի հովտի հսկայական պատուածքից, որ  
բացել է իր լայն, ամեհի բերանը ուղիղ մեր ա-  
ռաջին: Թէև նա, այդ բերանը, մեզանից 20—25  
վերստաչափ հեռու է, յստուամենայնիւ մենք զար-  
հուրում ենք նրանից, այնքան, ահռելի է նա իր  
միջի ժայռ-ատամներով:

Առանց շտապելու, կամաց-կամաց, առաջ է

գնում մեր կարաւանը. լեռնային անշտուկ լուծեան մէջ բարձր հնչվում ու տարածվում է ձիերի ոտնաձայնը. Սարգսեանն սկսում է երգել մի ժողովրդական երգ. ես ձայնակցում եմ նրան: Երգը ինձ յիշեցնում է հայ խաղաղ, աշխատասէր, Աստուծոյ բարիքով լցված գիւղը, նրա Զահիճներէ սէրն ու սավտէն, նրա ուրախ երգերն ու պարերը: Բայց ո՛ր է նա, ո՛ր է ինքը հայ գիւղը. նայում եմ չորս կողմս, տանաւոր վերստերի տարածութեան վրա ոչ մի հայ գիւղ. հարցնում եմ սրան, նրան,—ինձ ցոյց են տալիս մի տեղ թըրքաբնակ, միւս տեղ քրդաբնակ գիւղեր, երրորդ տեղում սահմանապահ զինուորների կայարան... Ո՛ր են կորել, գնացել հայ գիւղերը,—Աստուած գիտէ և գուցէ նաև ծերուկ Մասիսը... Արևը մայր է մտել արդէն, մութն ընկնում է. ես հայեացքս ուղղում եմ երեկոյի կիսախաւարի մէջ հինօրեայ Նահապետի զագաթին, և թւում է ինձ, թէ նա էլ խեղճ-խեղճ թեքել է մի կողմն է իր ալևոր գլուխը և, հին-հին յիշողութիւնների մէջ ընկզմած, մտածում է հայ գիւղերի մասին, որոնք մի ժամանակ բազմութեամբ ծածկում էին նրա ստորոտները... Սարգսեանը կտրեց իր երգը. ես վաղուց դադարել էի նրան ձայնակցելուց: Մթափված նայեցինք մեր շուրջը, ոչ ոք չը կար. մենք յետ էինք ընկել կարաւանից. պէտք էր հասնել. շտապով մենք մտրակեցինք ձիերին ու առաջ անցանք:

XVI

Մութը բոլորովին ընկաւ Թաքալթուի մօտ,

որ Մասիսի առաջապահ բարձրութիւններից մէկն է: Երևանում մեզ խորհուրդ էր տուած և այն մի շատ հեղինակաւոր անձի կողմից, որ ի պաշտօնէ պէտք է ճանաչէր իր նահանգը, կառքերը վարձել մինչև Թաքալթու և այնտեղ միայն արձակելով «երանց» ձի նստել: Այդպէս էլ մենք արել էինք, այսինքն կառքերի և պօստային ձիերի վարձը վճարել էինք մինչև Թաքալթու: Բանից դուրս եկաւ, որ Արալըխից մինչև Թաքալթու—14—15 վերստ տարածութիւն—նեզ, քարքարոտ շաւղով հազիւ կարողանում էին բարձրանալ նոյն իսկ այն ձիերը, որոնց վրա նստած էինք մենք: Տեղական պրիստաւի հարկադրական խորհրդով միայն մենք կառքերն արձակեցինք Արալըխում և ձի հեծանք: Յետոյ, երբ մենք անձամբ տեսանք այդ ճանապարհը՝ միայն շնորհակալութիւն կարող էինք յայտնել պրիստաւին, որ նա ընդդիմացաւ «ի վերուստ» տուած խորհրդին և չուզեց, որ մենք իզուր վատնենք մեր ժամանակը՝ կառքերի մէջ կանգ առնելով Մասիսի ժայռուտների առաջ, թէպէտև այսուամենայնիւ մենք իզուր վատնեցինք այն դրամը, որ վճարել էինք կառքերի և պօստային ձիերի համար Արալըխից մինչև Թաքալթու. այդ դրամը անդարձ կորաւ, շնորհիւ Երևանում մեզ տուած «բարի» խորհրդի:

Հասնելով Թաքալթու, մենք մի պտոյտ արինք նրա առաջից և իջանք մի նեղ ձորահովիտ, որի լանջի վրա շինված է սահմանապահ զօրքերի կայարանը: Ծարաւ պապակում էինք. Արալըխից մինչև Սարդար-Բուլաղ չը կայ ջրի ոչ մի կաթիլ:

կայարանի զինուորներն էլ ամեն օր իրանց ջուրը բերում են Սարդար-Բուլաղից, որ մօտ 10 վերստ հեռու է կայարանից: Իջնելով մի բողե ձիերից, մենք ազահութեամբ թափվեցինք ջրի վրա, որ զինուորները տուին մեզ մի մեծ ամանով: Մի քանի բողից յետոյ ամանի մէջ ոչ մի կաթիլ ջուր չը կար: Յագեցնելով ծարաւներս՝ նորոգված ոյժերով մենք շարունակեցինք առաջ գնալ:

Իեռ բաւական ճանապարհ կար կտրելու երկինքն ամպամած էր. լուսինը, երբեմն դուրս գալով ամպերի տակից, լուսաւորում էր մի մութ, ահռելի խորածոր, որի պռունգով անցնում էր մեր նեղ, քարքարոտ, երկիւղալի ճանապարհը. նա քանի գնում աւելի և աւելի դժուարանում էր՝ ընդունելով թեք զառիվերի ուղղութիւն: Մութ խաւարի մէջ ձիերը փնչում էին և լարում իրանց ամբողջ ոյժն և բնատուր զգուշութիւնը՝ չը գլորվելու դէպի խորխորտոր: Նրանք, այդ ազնիւ կենդանիները, շօշափում էին առաջին ոտների սրմբակներով ամեն մի քար, ամեն մի թումբ և յետոյ միայն փոխում քայլերը: Հասկանալի է, որ այսպիսի ճանապարհով անկարելի էր արագ առաջ գնալ և մենք մի ժամում հազիւ անցնում էինք երկու-երեք վերստ:

Մերունի Հասօն մեր ընկերներից մի քանիսի հետ, որոնք լաւ, ուժեղ ձիեր ունէին, վաղուց առաջ էր անցել, իսկ մենք—մօտ 10 հոգի—յետ էինք մնացել: Մեզ այժմ առաջնորդում էր մի հայ պահապան զինուոր: Նա խորհուրդ էր տալիս փոքր ինչ արագացնել ձիերի քայլերը, որպէս զի աւելի

որչեւտ չընկնենք միւսներից: Բայց սրտեղից. ընկեր-  
ներքիցս շատերի ձիերը յոգնել էին և այլ ևս ա-  
ռաջ չէին գնում: Իջնելով ձիերից՝ իմ այդ զըժ-  
քաղդ ընկերները ստիպված էին յոյսերը դնել ի-  
րանց սեփական զգուշութեան վրա և բացի դրա-  
նից քաշել ձիերին իրանց ետևից: Շուտով հերթը  
հասաւ և ինձ. իմ խղճուկ «նժոյգը» հեալով դէմ  
առաւ մի մեծ քարի առաջ, քաշ գցեց գլուխը և  
վճռեց այլ ևս չը շարժվել տեղից: Ճար չը կար, ես  
վայր իջայ և հետևեցի միւսների օրինակին:

Սարխափելով խաւարի մէջ ու ծանր շունչ  
քաշելով մենք առաջ էինք գնում թեք զառիվերով.  
կարաւանը լռել էր. ծիծաղ-կատակներ վաղուց  
դադարել էին. ամենքի ուշքը մի բանի վրա էր  
միայն կենտրոնացած,— չը փոխել սխալ քայլ ու  
չը սայթաքվել դէպի Մասիսի անդունդները...  
Նրա գլուխը բարձրանալու փոխարէն. միայն հայ-  
պահապան զինւորն էր, ոք վստահ, աներկիւղ զը-  
նում էր իմ առաջից և շուսացնում մի ինչ որ դու-  
րեկան եղանակ:

Մենք անընդհատ բարձրանում և իջնում է-  
ինք. քանի սար անցանք ու քանի ձոր—ով կա-  
րող է հաշուել: Կէս գիշեր էր արդէն. ճանապարհն  
ինձ թւում էր անտանելի երկար. նա կարծես ոչ  
վերջ ունէր, ոչ վախճան:

Յոգնածութիւնը, նոյն իսկ ձիու յոգնածու-  
թիւնը, վարակիչ է. շուտով ես էլ կանգ առայ մի  
թեք զառիվերի կիսին և չը նայելով մտրակի մի-  
երկու հարուածին, որ ես ուրախ բըքիջով քաշեցի  
իմ կօշիկների երկայն պարանոցին՝ ինձ խրախու-

սելու համար, աւանդ, չը կարողացայ առաջ գնալ: Իմ սեփական ընթոյգները»—իմ ոտները—չը կամեցան հնազանդվել մտրակի հարուածներին. սատարողաբար նրանք հանգիստ էին պահանջում: Այն, նրանք, այդ երբէք յոգնածութիւնն ասած բանք չը ճանաչող արագավազ, տոկուն ոտները շատ էին խամացել ու թուլացել վերջին տարիների նստակեաց կեանքից: Ես ստիպված էի փոքր ինչ յետքաշվել ճանապարհից, կարաւանի ընթացքը չը խանգարելու համար, և նստել մի քարի վրա: «Ա՛յս ոտներով պէտք է բարձրանամ Մասիսի գլուխը... հազիւ թէ...» մտածում էի ես, ազահութեամբ կռւլ տալով լեռնային թարմ, զովարար օդը:

Ընկերներս առաջ անցան. ես մնացի, բայց ոչ մենակ. ինձ հետ մնաց նաև մի երիտասարդ քիւրդ, որ գնում էր կարաւանի ետևից, որպէս վերջապահ: Լուսինը մայր էր մտել. «Մասեաց թիկունքը», ինչպէս անուանում էին այս տեղերը մեր բաղդաւոր նախահայրերը, որոնք բացի հայկական անունից չը գիտէին մի այլ անուն իրանց հայրենիքում,—թաղվել էր այնպիսի անթափանց խաւարի մէջ, որպիսին երկրորդ անգամ ես, երևի, կը տեսնեմ... դժոխքում, երբ հիւր կը գնամ նրան: Յոգնածութիւնս և թախիծս փարատելու համար ես հանեցի մի գլանակ,—չէ՞ որ ծխող մարդու համար ծխախոտը դեղ է ամեն բանի դէմ,—և միւսն էլ առաջարկեցի քիւրդ ուղեկցիս: Նա վառեց լուցկին և ես մի վայրկեան վառված բոցի լոյսով՝ տեսայ երկու կրակոտփայլուն

աչքեր երիտասարդի թուխ, գեղեցիկ, եռանդոտ  
դէմքի վրա:

—Անունդ ինչ է, այ քիւրդ, հարցրի ես թուր-  
քերէն, որով քիչ ու միչ կոտորատում եմ:

—Բարօ:

—Քանի տարեկան ես, Բարօ:

—Նրեսուն կը լինեմ:

—Ո՞րտեղացի ես:

—Ո՞վ գիտէ, Աղրի-Դաղի մօտ, —այսպէս են  
անուանում բրդերը Մասիսին, —քրդական շատ  
գիւղեր կան. մի օր այստեղ եմ, միւս օր այն-  
տեղ...

—Ի՞նչպէս թէ:

—Այնպէս...

Գլանակա հանգել էր, ես նորից վառեցի մի  
լուցկի: Բարօյի դէմքը մի խորհրդաւոր կնիք էր  
կրում իր վրա. ինձ թւաց մինչև անգամ, թէ նա  
ժպտում էր:

Ինչո՞վ ես պարապում, Բարօ:

—Է՛հ, Աստուած գիտէ, Աստուած ամեն օր  
մի բան հասցնում է, ապրում ենք...

—«Ստրաժնիկ» ես:

—Չէ, ինչ «ստրաժնիկ»:

—Հապա ո՞վ է կանչել քեզ մեզ ուղեկցելու:

—Հասօն, Ախուրիի գիւղապետը. նա գիտէ,  
որ ես ինչ կարաւանի հետ էլ լինեմ, ոչ ոք չի  
համարձակվի մօտենալ նրան...

—Հըմ... դէ գնանք, ուշացանք, շտապով  
մրթմրթացի ես և արագութեամբ թոայ ձիուս  
վրա:

«Քեզ հետ, եղբայր, շատ էլ խելացի բանն չէ  
այստեղ մենակ մնալը», անցաւ իմ մտքից:

Նժոյգս արդէն հանգստացել էր. ես ու Բա-  
բօն շուտով հասանք կարաւանին, որ կանգ էր  
առել և սպասում էր ինձ:

Յետոյ արդէն ես ուրիշ քիւրդերից իմացայ,  
իբրև գաղտնիք, որ երիտասարդ Բաբօն մի քաջ  
«իզիթ» է, որ անդադար ոտի տակ է տալիս ոռււ-  
թիւրք-պարսկական սահմանները...

Ամպերը ցրվեցին. երկինքը պարզվեց. լու-  
սինը արդէն մայր էր մտել. անհամար աստղեր,  
իբրև հեռաւոր ճրագներ, կարծես մի դիւթակաճ  
ձեռքով միանգամից վառված՝ սկսեցին շողշողաչ  
մեր գլխի վրա. աւագ Մասիսի գլուխը երբեմն-  
երբեմն, երբ մենք դուրս էինք գալիս խորխորա-  
տներից մի բարձր տեղ, երևում էր մեր աջ կողմից՝  
հիւսիս-արևմուտքում՝ երկնքի խորքը մտած իր  
ձիւներով, իբրև մի հագիւ նշմարելի մշուշ, իբրև  
մի սպիտակահեր ուրուական: Փոքր ինչ փարատ-  
ված խաւարի մէջ, ստուերային սև գծի նման,  
սկսեց նշմարվել լեռնային այն նեղ կածանը, որով  
մենք յամրաքայլ առաջ էինք գնում: Ոչինչ ան-  
վերջ չէ այս աշխարհում, մինչև անգամ Մասիսի  
այդ երկար, շատ երկար կածանը, որից վերջա-  
պէս ազատված կարաւանը ընկաւ Սարդար-Բու-  
լախի սարահարթը:

Ահա հեռու, խաւարի մէջ, փայլեց մի ճրագ:  
Ես լարեցի տեսողութիւնս: Այն, դա աստղ չէր.  
դա մի յուսատու ճրագ էր, որ մեզ խոստանում  
էր և ցանկալի հանգիստ և գուցէ նաև մի այլ

ցանկալի բան... մեր դատարկ ստամոքսների համար: Լռած ու տխրած կարաւանը կեանք առաւ նորից,—ամենքն սկսեցին ուրախ-ուրախ խօսել, ծիծաղել. նոյն իսկ յոգնած ձիերն անտարբեր չը մնացին ընդհանուր ուրախութեան մէջ. նրանք ևս, կարծես, նոր ոգի ստացած, արագ-արագ փոխում էին իրանց ոտները: Բայց... 6 յոյս, որքան անզամ դու խարել ես մարդկանց և քթիդ տակը ծածաղձ նրանց վրա. սակայն այս անգամ քո խաբէութիւնդ էլ, քո ծիծաղդ էլ չափազանց դառն էին, չափազանց զգալի... Ճրագը հանգաւ. Սարդար-Բուլախը չքացաւ մեր աչքից: Հայ «ստրած-նիկ» Սեդրակը բացատրեց մեզ, որ դա իսկի Սարդար-Բուլախը չէր. ճրագը վառվում էր քրդերի մի օբայում.: Մանր հիասթափութիւն... կարաւանը նորից տխրեց ու լռեց, ձիերը կախեցին իրանց գլուխները...

Շուտով աջակողմեան բարձրութիւններից լսվեց մի խորհրդաւոր երկար սուլոց. քիչ յետոյ սուլոցը կրկնվեց և շփոթված կարաւանի առաջ կանգնեցին չորս սուխներ.

—Кто вы и куда ѣдете?

Ռուս ընկերներիցս մէկը պատասխանեց, որ մենք գնում ենք Սարդար-Բուլախ Արարատ բարձրանալու:

—А! такъ ступайте, а мы думали контрабандисты.

Տիկին էբիդ-Կրիմը մի բարձրաձայն քրքիջ արձակեց:

Լսելով կնոջ ձայն, սահմանապահ զինուոր-

ներն աւելի ևս շփոթվեցին:

—Извините, прощения просимъ, *փնթփրն—*  
*Թաց նրանցից մէկը:*

—А что, братцы. далеко-ли до Сардаръ—  
Булаха?

—Нѣтъ, близко, *պատասխանեցին գինւոր—*  
*ները:*

Եւ յիրաւի մօտ էր: Կէս գիշերից անց էր  
արդէն, որ մենք, վերջապէս, հասանք այնքան  
ցանկալի խաղաղ նաւահանգստին:

## XVII

Երբ մենք հետեեալ օրը, օգոստոսի 17-ի ա-  
ռաւօտեան, վեր կացանք տեղերիցս և դուրս ե-  
կանք վրան—ննջարանից, երեաց, որ մենք գտնը-  
վում ենք Մեծ և Փոքր Մասիսներն իրարից բա-  
ժանող լեռնային բարձրադիր անջրպետի վրա, ուր  
գետեղված է Սարգար-Բուլաղը:

Սարգար-Բուլաղը գիւղ չէ, ինչպէս սխալ-  
մամբ ենթադրում էի ես, և ոչ մարդկային հաս-  
տատուն ընակութեան մի այլ տեղ. դա սահմա-  
նապահ զօրաբաժնի մի մեծ կայարան է, ուր ապ-  
րում է սահմանամերձ ուրիշ, աւելի փոքր կայա-  
րանների—պօստերի—հրամանատարը: Մի քանի  
տասնեակ սաժէն կայարանից հեռու գտնվում է  
Սարգարի ազբիւրը,—բուլաղ թուրքերէն նշանա-  
կում է աղբիւր,—որից և Մասիսների ամբողջ  
անջրպետը ստացել է իր անունը: Ձիւնաշատ Ա-  
րարատի անջրդի ստորոտներում ջուրն այնքան  
թանգագին ու հազուագիւտ մի գանձ է, որ նա

միայն իրաւունք ունի անուններ բաժանել իր շրջակայ վայրերին: Պարսից տիրապետութեան աւանդական օրերում, երբ Երևանի շոգն ու մոծակները, առանց վախենալու պարսիկ կարմրագգեստ ֆարրաշներից, աներկիւղ մտնում էին նաև Սարգարի ապարանքը, սարգարները փախչում էին Երևանից և ամառն անցկացնում այս աղբիւրի հովասուն փեերի մօտ: Այդ օրերից ի վեր աղբիւրը կոչվում է «Սարգարի», թէև վաղուց արդէն սարգարների հոտն անգամ չէ մնացել ոչ աղբիւրի փեերին, և ոչ նոյն իսկ Զանգուի ձորագլխին կործանվող ապարանքում: Անշուշտ այդ աղբիւրն ունեցել է և իր հին, հայկական անունը, բայց նա վաղուց մոռացվել ու կորել է, ինչպէս ամեն մի հին բան, որ հայկական լինելու դժբաղդ ճակատագիրն է կրում:

Ես տեսայ այդ հուշակաւոր աղբիւրը, որ ջուր է մատակարարում բոլոր սահմանամերձ կայարաններին և քրդական շրջակայ օբաներին: Դա արշին—արշին ու կէս խորութեամբ և նոյնչափ տրամագծով մի բոլորակ փոս է, որի պատերը կազմում են քրդական, գուցէ նաև ոռու զինուորների անհմուտ ձեռներով իրար վրա դարսված մեծ ու փոքր կարծրաքարեր. փոսի յատակում, քարերի արանքից, հազիւ նշմարելի կերպով դուրս են ծորում ջրի ականակիտ, սառնորակ, ձիւնահամ կաթիլները ու լցնում փոսը մինչև կէսը: Առաջին փոսի ներքևում, մի երկու քայլ նրանից հեռու, շինված է մի այլ նոյնանման փոս, ուր ամբարվում է առաջին փոսի ջրերի աւելորդը, իսկ

եթէ սա էլ լիքն է կիսով չափ, այնուհետև ջուրը դուրս է հոսում փոսից, իբրև մի նիհարիկ առուակ, և մի քանի տասնեակ քայլ գլորվելով դէպի վայր՝ անյայտանում Մասիսի պապակած խորածորերում: Ահա Սարգարի «բուլազը»: Երբ ես կանգնած նայում էի նրան՝ մի քիւրդ երիտասարդ աղջիկ—գուցէ և կին—չըջակայ օրաներից, մի քանի քայլ հեռու ինձանից՝ առուակի ջրերը հալաքած տաշտի մէջ, լուացք էր անում և երբեմնե՛րբեմն գաղտնի հետաքրքրութեամբ նայում իմ կողմը: Իմ մտքիցս անցաւ խօսեցնել նրան:

—Ո՞ր օրայից ես, այ աղջիկ, հարցրի ես նրան թուրքերէն այնքան քաղցրութեամբ, որ քանի ընդունակ է իմ ձայնս:

Քրդուհին մի վայրկեան բարկացայտ աչքերով նայեց ինձ ու անխօս շուռ տալով երեսը՝ նախ ծոծրակը, ապա մէջքն և ապա նաև... յետոյքը դարձրեց ուղիղ իմ կողմս:

Ես ամօթահար թողի, հեռացայ աղբիւրի մօտից... Ո՞վ էր մեզանից անքաղաքավարին. անշուշտ աւելի ես, քան քրդուհին, դատելով նոյն իսկ համաձայն սալօնական կանոնների...

### XVIII

Մենք նախօրօք վճռել էինք մնալ այդ օրը Սարգար-Բուլախում՝ թէ հանգստանալու և թէ գլխաւորապէս նախապատրաստութիւններ տեսնելու հետեւալ օրվայ վերելքի համար: Կանուխ առաւօտվանից, երբ մենք դեռ քնած էինք մեր ընդարձակ, գեղեցիկ վրանում, — որ գնված էր

Պարսկաստանում և կրում իր դրան վերևում Առեւծի և Արևի գինադրօշը,—տեղական պրիստաւի կարգադրութեամբ հաւաքվել էին վրանի շուրջը բազմաթիւ քրդեր և բարձրացրել ամբոխային ադամուկ-աղաղակ: Ես զարթեցի և դուրս եկայ վրանից: Մեծ մասամբ միջահասակ ու քիչ թւով նաև երիտասարդ քրդեր, թուխ, արևառ դէմքերով, փաթաթված շալից գործված հնոտի կիսավերարկունների մէջ, մաշված, խունացած «եազմաներ»-ի կոյտեր գլխներին, կապոյտ ու սպիտակ կտաւից կարված կարճ վարտիկներով ու պատառոտուն բօշերով և տրեխներով—նրանք խղճալի տպաւորութիւն էին գործում նայողի վրա: Այո, ամբոխը ամեն տեղ խեղճ է ու մերկ, սկսած Արարատից մինչև Սիբիրիայի խորին ձիւները, սկսած քրդերից մինչև էսկիմօսները. ես այդ գիտէի, բայց խեղճութիւնն էլ ունի իր... աստիճանները. ես չը գիտէի, որ Արարատի քրդերը հասել են խեղճութեան այդ ստոր, այդ ցաւալի աստիճանին: Թէ դրանք գուցէ ջոկովի խեղճեր էին,—քրդական ամբոխի տականքը,—որ օրական մի բուբլի վարձի հրապոյրով ժողովվել էին Արարատի սառցարանները բարձրանալու կիսամերկ ու կիսաբորիկ... Քրդական ամբոխի մէջ կային և մի քանի «բէկեր», կապոյտ և սև մահուդից կարված նոր «չուխաններով», գլխի նոր փաթաթաններով, նոր կօշիկներով, խէնջալների արծաթապաա պատեաններով: Նրանք եկել էին աւելի «թամաշա» անելու, քան գործի: Մի երկուսը նրանցից բաւական տանելի կերպով խօսում էին ռուսերէն: Միտ ա-

ուած իմ կարեկցական հարցերից Մասիսի քրդերի աղքատութեան ու խեղճութեան մասին, «բէկերից» մէկը սկսեց դառնապէս զանգատվել:

—Հէյ վա՛խ—սրտի խորքից հառաչեց քիււրդ «հայրենասէրը»—քրդերը կորան, փչացան. ո՛ւր են հիմա առաջվան քրդերը, ո՛ւր են նրանց բազմաթիւ հօտերը, շքեղ վրանները: Ո՛ւր են հիմա քիււրդ քաջերը: Քրդերի ահից ու երկիւղից առաջ ո՞վ կարող էր մօտենալ Արարատին: Հիմա... նայեցէք այս ամբոխին. մերկ, վախկոտ՝ շատերը սրանցից պատրաստ են օրական մի երկու շահիով, մի փոր-հացով ուրիշի գերին դառնալու. շատերը սրանցից տարին անց են կացնում մի քանի տասնեակ ոչխարից ստացված ջնշին արդիւնքով, մի օր կուշտ, մի օր անօթի...

—Բայց ի՞նչու, ի՞նչ պատճառով հիմա այդպէս խեղճացել են քրդերը, հետաքրքրվեցի ես:

—Ի՞նչ պատճառով... ո՞վ գիտէ:

Քիււրդ բէկը լռեց. նա, երևի, այդ «ինչ պատճառով»-ի մասին շատ քիչ էր մտածել իր կեանքում:

—Ժամանակը վատ է,—մի րօպէ լռելուց յետոյ՝ յանկարծ մի գիւտ արածի նման, բացականչեց «բէկը»—Ժամանակը վատ է: Այ, ուրիշ բան է Արարատի միւս կողմում—Բայազէդում, Մակուում. այնտեղ քրդերը առաջվայ նման քաջ են ու հարուստ... Այնտեղ նրանք ազատ են, չունեցած ժամանակն էլ...

Քիււրդ բէկը մի սուր հայեացք գցեց իմ երեսին:

— Դուք, պարոն, հայ էք:

— Հայ եմ:

— Հայ... հրմ... Ժամանակը վատ է, այ թէ քննու... ծամծմեց քիւրդ «հայրենասէրն» իր խօսքը. բայց ես իմ մտքում արդէն լրացրի նրա կիսատ թողածը...

— Այո, ժամանակը վատ է, համաձայնեցի ես քիւրդ բէկի հետ, բայց, ի հարկէ, բոլորովին ուրիշ մտքով...

## XIX

Թէյից յետոյ մենք դուրս եկանք շրջելու Սարգար-Բուլախի շրջականերում: Օրը ամպամած էր. փչում էր ցուրտ քամի. Աւագ Մասիսի գագաթը ծածկված էր ամպերի մութ մառախուղով, որ երբեմն ցրվում ու բաց էր անում լեռան լանջերի վրա ընդ միշտ դիզված ու մնացած ձիւների սպիտակութիւնը և երբեմն նորից խտանում ու կորցնում մեր աչքից Մասիսի վիթխարի զանգվածի կէսից աւելին: Փոքր Մասիսի գլխից արագութեամբ սահում անցնում էին մութ-սպիտակաւուն ամպեր՝ քերելով երբեմն նաև լեռան գագաթնամերձ լանջերը: Եղանակը ոչ մի լաւ բան չէր խոստանում մեզ. եթէ նա շարունակէր այդպէս անողորմ մնալ մի քանի օր ևս՝ Արարատի վերելքը կը դառնար մի երազ, անիրագործելի մի ցընորք միայն: Ո՞վ կը համարձակէր մութ ամպերի ահաւոր կոյտերի մէջ կոխել իր գլուխը, դնելով տաները նոյնքան ահաւոր ձիւնակոյտերի վրա:

Տխրած, «կիսայուսահատ» դրութեան մէջ,

մենք գնացինք նայելու այն անտառը, որ երևում էր Փոքր-Մասիսի ստորոտում: Սահմանապահ զօրքերի կայարանը, որի առաջ խփած էր մեր վրանը, հազիւ մի  $1/2$  վերստ հեռու է այդ անտառից: Մենք շուտով հասանք նրան: Անտառ. դա շատ մեծ անուն է այն մի բուռն կարճահասակ, խորզճալի թխտենիների համար, որոնց տերևները մրսում ու դողդողում էին ցրտաշունչ բամուռց: Որքան մենք կարողացանք նկատել, նրանք բրուսում էին ոչ աւելի քան մի-երկու տասնեակ օրավար տարածութիւն Փոքր-Մասիսի հիւսիս-Արևելեան լանջի վրա. հեռու երևում էին մացառուտների աւելի փոքր, աւելի չնչին խմբեր, որոնք, երևի, բաղկացած էին նոյն թխտենիներից և մի օր իրար հետ միասին կազմում էին մի մեծ, անտառի անուանն արժանի, լայնատարած ծառաստաններ: Թխտենիների այդ փոքրիկ պուրակն անգամ տեղ-տեղ, իր միջավայրերում, արդէն ոչնչացել էր և հին վիրաւոր զինւորի նման բացել իր վէրքերը — Փոքր Մասիսի փխրուն աւազուտները: Կացնի խուլ հարուածներից, որոնց ձայնը մեզ հասնում էր հեռուից, կարելի էր անսխալ գուշակել, որ մի որ և է քիւրդ շրջակայ օբաններից կամ գուցէ նաև զինուոր սահմանապահ կայարանից, անդուլ աշխատում են աւելացնելու պուրակի վէրքերը. և համարձակ կարելի է ասել, որ մի 10—15 տարուց յետոյ՝ թխտենիների խղճուկ անտառակը այլ ևս չի դիմանայ այդ վէրքերին ու իր վերջին հրաժեշտը կը տայ աշխարհին, մի վաղանցուկ յիշատակ միայն թողնելով փոքրաթիւ ճանապար-

հորդներ ի նկարագրութիւններ ի մէջ...

Մակայն կար ժամանակ, երբ այդ անտառը, ինչպէս և ամեն մի թղաչափ հող Մասիսի ստորոտներում, տեսել էր աւելի երջանիկ օրեր: Արիւի ասելով, այժմեան անյայտացող թխտենիները մի օր, իբրև լայն կամար, գօտևորում էին Փոքր-Մասիսի նստուածքը և կազմում խիտ անտառներ: Դեռ 1844 թւականին, նոյն գիտնական ճանապարհորդի ասելով, նրանք հասնում էին մինչև Սարդարի-Աղբիւրը, այն ինչ այժմ այս վերջինի և անտառակի մէջ ձգվող բաց ու բոլորովին մերկ տարածութիւնը մի վերստից աւելի է: Պարզ է, ուրեմն, որ այս դարաւոր, անգնահատելի, մի ժամանակ անագին տարածութեան վրա բուսած կամ գուցէ որ և է նախարարի կամ արքայի ձեռքով տնկված միակ անտառը մօտ է իր շունչը փչելուն: Խեղճ անտառ... Արդեօք իրանց մօտալուս մահը չէին ողբում այն թխտենիները, որոնց խուլ, տըխուր հառաչանքը մի նոյնպիսի խուլ, տխուր արձագանք էր կրկնում իմ սրտում...

## XX

Քիւրդ «բէկերից» մէկը առաջարկեց մեզ գնալ տեսնելու այն օբաները, որոնք հեռու չէին մեր վրանից: Մենք ուրախութեամբ ընդունեցինք նրա հրաւերը և հաւաքվելով միասին՝ ճանապարհ ընկանք: Մի նեղ, փոքրիկ ձորով անցնելիս՝ ես նկատեցի, որ մեր խմբին միացել էր նաև երիտասարդ Բարձն, նա հոգածութեամբ սրում էր իր սևաթոյր, գեղեցիկ բեխերը և ուղղում գօտին ու

նրանից կախված խանչալը: Ես ամենևին ուշադրութիւն չը դարձրի այդ հանգամանքի վրա: Մենք շուտով հասանք մի խումբ օբաների առաջին վրանին:

Ինձ ուրիշ տեղ էլ պատահել էր տեսնել քրքրական օբաներ. նրանք իրանց կազմութեամբ ընդհանրապէս նման էին հայ գիւղացիների բինաներին. նոյն բոլորակ, ցածրիկ, թաղիքեայ վրանը, նոյն փոքրիկ, նեղլիկ բացուածքը դրան փոխարէն, որի միջով անցնելու համար մարդ պէտք է երկու տակ կռանայ, նոյն նեղուածքը վրանի մէջ, ուր երկու-երեք հոգի չեն կարող շարժվել միաժամանակ, վերջապէս նոյն կեղտն ու ծանր, խեղդված, թթուասերի ու մածնի հոտով լի օդը՝ չը նայելով դրսի մաքուր, անապական, լեռնային օդին: Բոլորովին ուրիշ բան տեսայ ես քրդական օբաներում Մասիսի վրա: Ընդարձակ, մաքուր, լուսաւոր տաղաւարներ՝ նրանք շատ աւելի դուրեկան տպաւորութիւն էին թողնում, քան ինչ որ ես տեսել էի մինչ այդ ժամանակ ուրիշ տեղերում: Իւրաքանչիւրը նրանցից, յար և նման միւսներին, ունի հետեւեալ կազմութիւնը: Երկու Մասիսների բաց անջրպետի կողմից, որտեղից սովորաբար փչում է քամին, շինված է ցածր, մի արշին կամ մի քիչ աւելի բարձրութիւն ունեցող քարեայ պատ. նրա երկարութեամբ ձգված է նաչխուն գեղեցիկ կապերտ, որ բոլորովին ուրիշ գործուածք ունի և նման չէ սովորական կապերտներին.— մի-մի մաս իրարից հեռու՝ կապերտի մէջ անց են կացրած,— ի հարկէ, կապերտը գործելու

ժամանակ,—եղէգնի բարակ ձողեր, որոնք տալիս են կապերտին սիրուն շերտաւոր տեսք և մի և նոյն ժամանակ որոշ աստիճանի կայունութիւն: Պատի վրա կապելտը ամրացրած է փայտեայ նեցուկներով: Նոյնպիսի կապերտներ, կրկին փայտեայ նեցուկներիօգնութեամբ, կանգնեցրած են պատի երկու կողմերում, իրարից 15—20 արշին, երբեմն և ակելի հեռաւորութեամբ: Իսկ այս երեք պատերի վրա, իբրև առաստաղ, քաշված է այժի մազից գործված մաքուր, սև, բծաւոր ծածկոյթ, մէջ տեղերում ամրացրած փայտեայ երկար ձողերի վրա: Առաջի կողմից տաղաւարը բոլորովին բաց է. այդտեղից նրա մէջ թափանցում է և մաքուր օդ և առատ լոյս: Տաղաւարների միջի ընդարձակ տարածութիւնը,—ոչ բոլորի մէջ,—բաժանված է մի քանի մասերի՝ նոյն տեսակ կապերտների և նեցուկների օգնութեամբ: Բաժանմունքներից իւրաքանչիւրը, երևում էր, ունի իր առանձին նշանակութիւնը. մէկում փռված էին կապերտներ ու գորգեր,—անշուշտ դա կանանց բաժանմունքն էր և ննջարանը,—երկրորդում կային տնային գործածութեան զանազան առարկաներ—ամանեղէններ, ճախարակ և այլն, երրորդում շարված էին կաթի տաշտերը, չորրորդ փոքրիկ բաժանմունքը, որի պատերը քարից էին, նշանակված էր նորածին հորթերի համար:

Մենք սղատ մտնում էինք ամեն մի օբայ, հարցնում, հետաքրքրվում էինք ամեն մի մանրամասնութեամբ. և չէ կարելի ասել, որ մեր այս վարմունքը անհաճոյ լինէր օբաների տէրե-

րին. ընդհակառակը նրանք ուրախութեամբ պատասխանում էին մեր հարցերին. պատասխանում էին, ի հարկէ, տղամարդիկ, ուր նրանք կային, իսկ ուր չը կային—հասակաւոր կանայք. քիւրդ գեղեցկուհիները լռում էին, բայց չէին փախչում մեզանից:

Ընկերներիցս երեք հոգի իրանց հետ վերցրել էին լուսանկարչական գործիքներ՝ զանազան տեսարաններ հանելու: Մեր ուղեկից «բէկի» միջոցով մի օբայում նրանք առաջարկեցին քրդուհիներին նկարվել: Լեռների ազատ զաւակները, առանց «նազ ու տուզ» անելու, իսկոյն համաձայնվեցին, բայց նախ քան առաջ գալն ու շարվելը՝ նրանք մտան մի բաժանմունք: Պատահամբ իմ աչքս ընկաւ այդ բաժանմունքից ներս,—քիւրդ գեղեցկուհիներից մէկը շտապ-շտապ փոխում էր շորերը, իսկ միւսը փոքրիկ հայելու առաջ կոկում և ուղղում էր երկար, սև մազերը. ես իսկոյն յետ փախայ և, կարծեմ, չը գրգռեցի ոչ ոքի բարկութիւնը իմ ակամայ անհամեստութեամբ... Այն, կիներ, պահում է գեղեցիկ երեւալու ու դուր գալու իր անյաղթ սէրը նոյն իսկ Մասիսի վայրենի լանջերի վրա:

Քրդուհիները մի քանի րօպէից յետոյ դուրս եկան ննջարան-բաժանմունքից և շարվեցին տաղաւարի առաջ: Այս հանգամանքը հնարաւորութիւն տուեց մեզ լաւ դիտելու նրանց: Բայց ես դիտում էի ոչ նրանց շորերը, որոնք առանձին հետաքրքրութիւն չէին ներկայացնում, որովհետև երիտասարդ քրդուհիները հագել էին եւրօպական

անխուսափելի, թէև քրդական ճաշակի վերածած՝  
շրջազգեստ, որ խցկվել է նաև քրդական օրա-  
ները, այլ դիտում էի իրանց՝ քրդուհիներին: Սա-  
կայն ոչ բոլորին... Մի 15—16 տարեկան գեղեց-  
կուհի առանձնապէս գրաւել էր իմ ուշադրութիւ-  
նը: Բարձրահասակ, կարմրաթշիկ, երկար կամար  
յօնքերով, խոշոր աչքերի սև, երկայն արտևանունք-  
ներով, դէմքի զարմանալի դուրեկան գծագրու-  
թեամբ՝ գեղեցկուհի Այշան, — նրա անունն ես ի-  
մացայ տիկին էքիզ-Կրիմի հարցին տուած պա-  
տասխանից, — կանգնած էր շարքի մէջ տեղում և  
համեստութեամբ վայր էր նայում: Նա իր գլխին  
դրել էր թիւրքական ֆէս, որի առաջից, սպիտակ  
ձակատի վրա, կախված էր մի ոսկեայ շարան:  
Սևաթոյր երկայն մազերը դուրս էին թափվել  
ֆէսի տակից ու փռվել թիկունքի վրա բազմա-  
թիւ բարակ ու երկայն հիւսերի ձևով: Շրջազգես-  
տի վրայից նա հագել էր կապոյտ մահուդի կարճ  
բաճկոնակ՝ ոսկեթել բանուածքներով եզերքնե-  
րին, որպիսին, յիշում եմ, հագնում էին կանայք  
Ալէքսանդրօպօլում 20—25 տարի առաջ: Ես իզուր  
սպասում էի, որ քիւրդ գեղեցկուհին գոնէ մի բո-  
պէ բարձրացնէ հայեացքը գետնից, որ ես տես-  
նեմ նրա աչքերը, նրանց արտայայտութիւնը. Այ-  
շան չը կատարեց իմ գաղտնի ցանկութիւնը. ան-  
յաղթելի յամառութեամբ նա շարունակում էր  
վայր նայել:

Քիւրդ բէկը, որ «մտերմացել էր» ինձ հետ  
իր հայրենասիրական զեղումների ժամանակ, կա-  
մաց խփեց իմ թևիս: Ես շուռ եկայ:

—Նայիր Բարոյին, կամաց շնջաց բէկը ա-  
կանջիս, ինքն իրան ուտում է խեղճը:

Ես նայեցի Բարոյի կողմը. երիտասարդի  
դէմքի վրա նկատելի էր նեարդային անհանգստու-  
թիւն. անգիտակցաբար նա մէկ սրում էր բեխե-  
րը, մէկ ուղղում շորերը, մէկ թափ տալիս լայն  
կորովի թիկունքը և անթարթ յառած աչքերով  
կլանում է Այշային:

—Սիրահարված է:

Բէկը գլխով արեց:

—Եւ նոր չէ սիրահարված. մի ամբողջ տա-  
րի է, բայց Այշայի հայրը չէ տալիս: Բարօն մի  
քիչ լաւ անուն չունի:

—Բաս ի՞նչ պիտի լինի, հարցրի ես միա-  
մտաբար:

—Ի՞նչ պիտի լինի,—ծիծաղեց բէկը,—կը  
փախցնէ ու ամեն ինչ կը վերջանայ. ասում են  
աղջիկն էլ է սիրում Բարոյին. տես խեղճը չէ կա-  
րողանում աչքերը բարձրացնել գետնից:

Քրդունիները մի քանի խմբեր ևս նկարելուց  
յետոյ, որոնց մէջ ես, դժբաղդաբար, այլ ևս չը տե-  
սայ Այշայի նման գեղեցկունի, մենք շտապեցինք  
վերադառնալ մեր վրանը: Կէս-ճանապարհից ես  
նկատեցի, որ Բարօն մեզ հետ չէ. յետ նայեցի և  
տեսայ, որ նա մի ուրիշ քրդի հետ թափառում էր  
Այշայի վրանի շուրջը...

Արարատի գագաթից վերադառնալուց յետոյ  
արդէն, ճանապարհին, իմ ականջիս դիպաւ, որ  
գեղեցկունի Այշան այլ ևս Սարգար-Բուլախի օբա-  
ներում չէ. Բարոյի հետ միասին նա փախել էր

Բայազէդի կողմերը... Ես այդ ժամանակ փոքր  
ինչ տկար էի և զբաղված անձնական առողջու-  
թեան ձանձրալի հոգսերով՝ չը կարողացայ իմա-  
նալ համեստափայլ քրդուհու փախուստի մանրա-  
մասնութիւնները...

XXI

Երեկոյեան, թէյից յետոյ, երբ ընկերներս  
զբաղված էին ուրախ խօսակցութեամբ օրվայ  
տպաւորութիւնների մասին, ես մօտ քաշեցի փոք-  
րիկ աղօտ լապտերը, որ դրված էր վրանի մէջ  
տեղում, և թեք ընկած քիւրդերի օբաներից բեր-  
ված ներքնակների վրա՝ սկսեցի կարդալ Ե. Վէյ-  
դէնրաուտի «Большой Апаратъ и попытки вос-  
хождения на его вершину» վերնագրով գրքոյկը,  
որ վերցրել էր իր հետ Սարգսեանը: Գրքոյկի ըն-  
թերցանութիւնը թողեց ինձ վրա վատ տպաւո-  
րութիւն: Թող ներէ ինձ ընթերցողը, եթէ ես մի  
րօպէ շեղվեմ պատմութեանս ընթացքից և մի քա-  
նի խօսք ասեմ այդ գրքոյկի մասին. չէ՞ որ նրա-  
նից ստացած տպաւորութիւնն էլ կապված է իմ  
մտքում Արարատի ճանապարհորդութեան և յատ-  
կապէս Սարգար-Բուլախի հետ, ուր ես կարդացի  
գրքոյկը, և մի որոշ չափով հասարակական հետա-  
քըքրութիւն է ներկայացնում: Բանն այն է, որ  
գրքոյկի հնախոյզ հեղինակը գտնվել է այնքան...  
վարպետ, որ կարողացել է յայտնի կերպով ար-  
տայայտված տենդենցիա մտցնել իր փոքրիկ՝ դէ-  
սից-դէնից ժողոված բրօշուրի մէջ, ուր ամեն ինչ  
ուրիշինն է, բացի յիշված տենդենցիայից: Սա-

կայն նախ մի-երկու խօսք Արարատի անուան մասին:

Հայերին այդ սարը միշտ յայտնի է եղել Մասիս անունով. Արարատ անուանում են նրան գլխաւորապէս եւրօպացիները: Ուղիղ է, հրէական ականդագրքի և մեր պատմագրքերի մէջ պատահում են «լերինք Արարատայ» խօսքերը, բայց դժբանք չեն նշանակում յատկապէս Մասիս սարը, Մեծը կամ Փոքրը, այլ Այրարատեան նահանգի կամ նոյն իսկ Այրարատեան երկրի՝ Հայաստանի լեռները ընդհանրապէս, ուստի չէ կարելի ասել, որ Արարատեան լեռների վրա Նոյեան տապանի հանգչելու հրէական ականդութիւնը նկատի է ունեցել Մասիսը, ինչպէս ընդունված է այժմ կարծել հասարակօրէն, այլ ընդհանրապէս Արարատեան երկրի լեռները: Արարատ կամ Այրարատ անունը կրում էր միայն այն նահանգը, ուր, ի միջի այլ լեռների, գտնվում է նաև Մասիսը: Տապանի իջնելու ականդութիւնը մեր հին պատմիչներից շատերը, որոնց թւում և Փաւստոս Բիւզանդացին, կապում են Կորդուաց լեռնաշղթայի Մարարող սարի հետ և միայն միջին դարերում, Ալիշանի կարծիքով, այդ ականդութիւնը սկսել է վերագրվել Մասիսին: Շատ հաւանական է. բայց բոլորովին հաւանական չէ մի տարօրինակ կարծիք, որ Ե. Վէյդէնբայում յայտնում է իր վերոյիշեալ բրօշիւրի մէջ այն մասին, թէ ով է աշխատել կապել Նոյեան տապանի ականդութիւնը Մասիսի հետ և ինչ յետին մտքերով: «Շատ հաւանական է,—ասում է բրօշիւրի «գիտնական» հե-

դինակը,—որ Նոյեան տապանի աւանդութեան վերագրումը Մասիսին առաջ է եկել էջմիածնի աթոռի խախտված իրաւունքները ամրապնդելու ցանկութիւնից՝ կրօնական տեսակէտից առաջնակարգ դիրք գրաւելու համար: Նոյեան տապանի հանգչումը Մասիսի գագաթի վրա կարող էր վկայել աներկբայելի և, այսպէս ասած, շօշափելի կերպով, որ Այրարատեան նահանգը, ամենահին ժամանակներից սկսած, դեռ քրիստոնէութեան մուտքից շատ առաջ, ընտրված էր Նախախնամութեան կողմից մարդկութեան փրկութեան համար: Դրա հետ միասին այդ անցքը կարող էր ծառայել որպէս ապացոյց, որ հայերը իրաւունք ունեն համարվելու նախահայր Նոյի ամենամերձաւոր սերունդը»:

Մի այսպիսի անհեթեթ ցանկութիւն՝ հիմնելու էջմիածնական աթոռի նախապատուութեան իրաւունքը կաթողիկոսական այլ աթոռներին՝ ոչ բուն հայկական եկեղեցական-պատմական փաստերի, այլ մի ինչ որ հրէական կողմնակի աւանդութեան վրա, կարող էր առաջ գալ էջմիածնում միայն այն ժամանակ, երբ կաթողիկոսական աթոռը նորից վերահաստատվեց էջմիածնում և երբ էջմիածնականները ամեն ջանք գործ էին դնում կրկին պայծառացնելու նրան: Յայտնի է, որ այդ նշանաւոր դէպքը տեղի ունեցաւ 1441 թւին, XV-րդ դարում: Կարող ենք հաւատացնել բրօշիւրի հեղինակին, որ Գրիգոր Նարեկացին և Յովհան Երզնկացին \*), որոնցից առաջինը արդէն «Արա-

\*) Տես Ալիշանի «Այրարատ», էրես 468:

րատեան լեռն է» կոչում Մասիսին, իսկ երկրորդը ուղղակի տապանի աւանդութիւնը վերագրում է նրան, դարեր առաջ փտել էին իրանց գերեզմաններում և քաղաքական փաստաբանութիւնների ոչ մի խորհուրդ չէին կարող տալ Փիլիպպոս և Մովսէս կաթողիկոսներին: Զարմանալին այն է, որ ինքը Վէյդէնբաում յիշում է եւրօպացի ճանապարհորդ Րուբրուկվիսին, որ 1254 թւին, ուրեմն համարեա երկու դար էջմիածնի վերանորոգմանից առաջ, անցել է Մասիսի մօտով և իր յիշատակարանի մէջ անուանում է Մասիսին «աշխարհի մայր» — mater mundi: Ես ամենեին ուշադրութիւն չէի դարձնի հեղինակի այս սխալ կարծիքի վրա, եթէ փոքրիկ բրօշուրի մի քանի էջերում ճանճրալի կերպով ցրված չը լինէին զանազան ակնարկներ, հեգնութիւններ նոյն նիւթի վերաբերմամբ, որոնց մէկ-մէկ առաջ բերելը աւելորդ եմ համարում այստեղ: Արարատի մասին գրողը, մանաւանդ նա, ով ցանկութիւն ունի գիտնականի հռչակ վայելելու, կարծեմ, կարող է բոլորովին հանգիստ թողնել էջմիածինը և չը համեմել իր «ուսումնասիրութիւնը» ենթադրութիւններով, որոնք նման են բամբասանքների:

## XXII

Հետեւեալ օրը, սեպտեմբերի 18-ին, մենք պէտք է սկսէինք մեր վերելքը դէպի Արարատ, ուստի վերկենալով տեղերիցս՝ անմիջապէս ձեռնամուխ եղանք տեսնելու մեր վերջին պատրաստութիւնները: Օրը թէև պարզ էր և արևը պայ-

Ճառ փայլում էր առաջներին՝ Արաքսի ընդարձակ հոսվտի վրա, բայց և այնպէս ցուրտ էր,—Սարդար-Բուլախը բարձր է ծովի մակերևոյթից 7400 ոտնաչափ—և Մասիսների անջրպետից փչում էր անդուր քամի: Մեծ Մասիսի գագաթը երբեմն բացվում էր և երբեմն ծածկվում. սպիտակ ամպերի մի անընդհատ հոսանք գալով հիւսիս-արևմուտքից՝ նրա գլխի ու կողերի վրայով սահում անցնում էր դէպի հարաւ-արևելք: Մեր վրանի առաջ, կանուխ առաւօտվանից հաւաքված էր ահագին բազմութիւն. քիւրդ բեռնակիրներ,—30—35 հոգի,—«բէկեր», պահապան զինւորներ, հրացանակիր քիւրդ առաջնորդներ, քիւրդ ամբոխ շրջակայ օրաներից—ամենքը իրար էին խառնվել: Մշտապէս լուռ ու անձայն Սարդար-Բուլախը կենդանութիւն էր ստացել. մեզանից մի քանիսի համար պատրաստված ձիերը խրինջում էին և անհամբերութեամբ դո փում գետինը: Մենք շտապ-շտապ քրքրում էինք մեր ծանրոցները և ջոկում իրարից այն, ինչ որ տանելու էինք մեզ հետ դէպի Մասիս և ինչ թողնելու էինք, որպէս աւելորդ ծանրութիւն, Սարդար-Բուլախում: Ա. Եւանգուլեանը, որ մի տարի առաջ ևս, 1902 թւին, կատարել էր նոյն ճանապարհորդութիւնը, խորհուրդ էր տալիս չբթողնել Սարդար-Բուլախում ոչ մի տաք շորեղէն, որ կարող էր պէտք գալ Մասիսի վրա: Վերջապէս մենք կապեցինք մեր բեռները և յանձնեցինք քիւրդ բեռնակիրներին:

Սահմանապահ զօրաբաժնի հրամանատար պ. Աւետեան, որ նոր տեղափոխված էր պաշտօնով

Մարդար-Բուլախի կայարանը, և մի լեհացի զին-  
ւորական բժիշկ՝ նոյն կայարանից՝ ուղևորութեան  
վճռական րօպէին խորհուրդ չէին տալիս մեզ ճա-  
նապարհ ընկնել, ասելով որ մենք 20 օրով ուշա-  
ցել ենք, որ Մասիսի վրա այժմ սաստիկ ցուրտ է  
և ձիւն, և հէնց այս պատճառով մենք միայն նե-  
ղութիւն ու տանջանքներ կը կրենք՝ առանց մեր  
նպատակին հասնել կարողանալու: Նոյն կարծիքին  
էին նաև քիւրդերը: Բայց մեր եռանդը՝ բարձ-  
րանլու ամենքին այդքան ահաբեկող լեռան գլու-  
խը՝ այնքան ջերմ էր, որ մենք յոյս ունէինք նը-  
րանով տաքացնել և հալեցնել Մասիսի ցուրտն  
ու ձիւնը, ուստի առանց ականջ դնելու այս չա-  
րագուշակ խորհուրդներին և առանց մի րօպէ վա-  
րանելու՝ ճանապարհ ընկանք մեր ամբողջ կարա-  
ւանով:

Վերելքն սկսվեց:

Առաւօտեան ժամի ինն էր. քամին դադարեց.  
արևն աւելի բարձրացաւ ու մեղմացրեց եղանա-  
կը. ամպերը չքացան Մասիսի գլխից և ահաւոր  
լեռոր, կարծես գիտմամբ՝ բանալով ամպամերձ  
գլուխը, իր նախայարձակ բլուրների ետևից գցեց  
մեզ վրա մի խրոխտ, սպառնական հայեացք.

— Որդեր, ճիճուներ, չնչին միջատներ... Խնչ-  
պէս էք համարձակվում կուռի բռնվել ինձ հետ.  
այդ ձեզ էժան չի նստի...

Բայց չնչին միջատները անընդհատ առաջ  
էին գնում և մինչև անգամ ուրախ-ուրախ երգում  
էին ու գրւարձանում սպառնացող սարի վեհ կեր-  
պարանքով:

Գեղանկար պատկերով ձգվել էր մեր բազմամարդ խումբը, իբրև մի երկայն, գոյնզգոյն ժապաւէն, խորտ ու բորտ, քարքարուտ շաւղի վրա և կամաց-կամաց իջնում էր դէպի մի լայն ընդարձակ ձորահովիտ: Խմբի առաջից գնում էին բռնակիր քիւրդերը՝ ծանրոցները կապած թիկունքներին՝ և բարձրաձայն աղաղակ—խօսակցութիւնով թնդացնում ձորահովիտը: Նրանց ետևից դանդաղ առաջ էին շարժվում մի քանի ձիաւորներ արշաւախմբի անդամներից, որոնց մէջ էի և ես: Կամենալով խնայել և ժամանակից առաջ իզուր չը սպառուել մեր ոյժերը՝ մի քանի հոգով մենք որոշել էինք ձի նստել և ձիով բարձրանալ այնքան տեղ, որքան հնարաւոր կը լինէր: Մեր ետևից ոտքով, ալպեան երկայն գաւազանները ձեռքերին, գալիս էին արշաւախմբի մնացած անդամները: Գիւղական պահապան զինւորները և քիւրդ հրացանակիրները, դուրս գալով նեղ ճանապարհից, երբեմն անցնում էին առաջ և երբեմն յետ ընկնում: Հեռու, զառիվայրի կէս ճանապարհին, երևում էր գիւղապետ Հասօյի սպիտակ նժոյգը:

Դուրս գալով Սարդար-Բուլաղից, մենք նախ ճանապարհներս ուղղեցինք դէպի արևմուտք և ապա, մի քանի վերստ տարածութեամբ լեռնային արօտներն անցնելուց յետոյ, ծովեցինք դիպի հիւսիս և իջանք այս ձորահովիտը: Նրա յատակում մի նեղ երկարաւուն տափարակի վրա, որի բարձրը, դեղնած խոտերի մէջ ցրված էին բազմաթիւ մանր ու խոշոր քարեր և ուր մեր ձիերը դանդաղ քայլերով հազիւ տռաջ էին գնում՝ ամենայն զը-

գուշութեամբ խուսափելով քարերից՝ մի քիււրդ հրացանակիր և պրիստաւի դիւանատան մի թուրք երիտասարդ աշխոյժ պաշտօնեայ, առաջ անցնելով՝ սկսեցին «Չիրիդ» խաղալ: Երկու «իգիթնեւրը» կարմիր ու մոխրագոյն ձիերով, քամու արագութեամբ վազում էին միասին տափարակի վրա, թռչելով քարերի վրայից, և հասնելով ձորահովտի հանդիպակաց զառիվերին՝ արագ պտոյտով դարձնում էին ձիերի գլուխներն և ուրախ ճշոցով հըրացան արձակում, ճարպիկութեամբ գետին կռանում, քարեր վերցնում ու թռչում կրկին գէպի յետ, դէպի մեր կարաւանը:

Մերունի Հասօն չուզեց նրանցից յետ մնալ. երբ մենք բարձրացանք ձորահովտի գլուխը, որտեղից սկսվում էր մի այլ փոքրիկ տափարակ՝ ծածկված նոյն դեղնած—չորացած բարձր խոտերով, ժայռերի ետևից յանկարծ դուրս թռաւ մի նապաստակ և արագութեամբ սկսեց վազել դէպի մի այլ ձոր, ուր վերջանում էր տափարակը: Հասօն մի վայրենի ճիչ արձակեց և չափ պցեց իր ձին քարերի միջով նապաստակի ետևից: Ամբողջ կարաւանը ուրախ, բարձրաձայն բացականչութիւններով, լարված ուշադրութեամբ, հետևում էր երկու մրցողներին: Հասօյի սպիտակ ձին թռչում էր, ինչպէս փոթորիկ, և քիչ էր մնում, որ հասնէր նապաստակին. բայց խորամանկ կենդանին յանկարծ ծռեց ճանապարհը դէպի քարաժայռերի մի ահադին կուտուածք և անյայտացաւ նրա ետևում, թողնելով Հասօյին շուարած՝ կանգնած ժայռերի առաջ:

Առոյգ ու զուարթ ծերունին յետ դարձաւ ծիծաղելով:

Хасо, гдѣ заяаць? Эхъ, не могъ поймать за хвостъ! հեգնում էին ծերունուն ուսւ ընկերակիցներս:

Ծերունին հասկացաւ հեգնութիւնը:

—Зайць Агри-дагъ пошелъ:—նա ցոյց առեց Մասիսի գոգաթը,—когда будишь на башкѣ, тогда паймай, я тебѣ оставилъ. ասաց նա դիմելով հեգնողներին մէկին:

—А будемъ мы на башкѣ Арарата?

—Какъ я поймалъ зайць, такъ и ты будишь на башкѣ Ааратъ, պատասխանեց ծերունի քիւրդը և խորհրդաւոր կերպով ժպտաց:

Հասօն և միւս քրդերը կարծում էին, որ մենք հէնց առաջին օրվայ դժուարութիւններից յետոյ՝ սանձերս կը դարձնենք դէպի յետ և կիջնենք կըրկին Սարգար-Բուլաղ: Նրանցից շատերը գալիս էին առանց տաք շորերի, բաց կրծքով, մերկ սրբունգներով՝ յոյսերը գրած միայն մեր անաջողութեան վրա: Գուցէ նրանցից շատերը չունէին էլ տաք շորեր, բայց ինչ ունէին՝ այն էլ չէին վերցրել: Յետոյ, ի հարկէ, նրանք սաստիկ տուժեցին այդ սխալ կարծիքի պատճառով, բայց արդէն ուշ էր:

### XXIII

Մի ֆրանսիացի բուսաբան,—Պիտտօն դը-Տուրնըֆօր,—որ տասնութերորդ դարի սկզբներում անաջող փորձ է արել բարձրանալու Մասի-

սի գագաթը, անուանում է մեր ծերուկ Նահապետին ամենաձանձրալի և տխուր սար ամբողջ աշխարհում: Հայր աչքերով էի արդեօք նայում ես իմ շուրջս, աչքեր, որոնց համար թանգ է հայրենի հողի ամեն մի բոյսը, ամեն մի քարն անգամ, տրամադրված էի արդեօք ես էլ այնպէս, որ խոնարհում էի իմ նախահայրերի սրբութեան առաջ, ուստի նա զրկնակի սիրելի էր դարձել իմ աչքում — չը գիտեմ, բայց ես մտքումս յանդիմանում էի Ֆրանսիացի ճանապարհորդին նրա անարդար կարծիքի համար և մեծ զուարճութեամբ նայում չորս կողմս: Չանձրալի և տխուր... Նայեցէք այն ձորակին, որով կամաց-կամաց, կրիայի քայլերով, այժմ լքարձրանում ենք մենք. նրա յատակում և լանջերի վրա, ամեն տեղ, ուր երկիրն ազատ է միայն կենտ-կենտ ու կուտակված ժայռերից, օգոստոսի վերջերին բուսել է թարմ, հիւթալի, թէև կարճահասակ կանաչ, որ հանդարտ ծփում է Մասիսի վերին կողերի վրայով փչող մեղմ հովից: Անհամար գոյնզգոյն ծաղիկներ փռված են կանաչ գորգերի վրա և ուրախ ժպտում են մեզ նոյն իսկ ժայռերի արանքից: Ես կռանում եմ ձիու վրայից դէպի ձախ, դէպի մի սիրուն, փոքրիկ սիգաւէտ մարգագետին՝ եզերաւորված մանր ու խոշով քարերի բոլորակ շարանքով և ուշադրութեամբ դիտում եմ դեղին—ոսկեփայլ ծաղիկների մի հրապուրիչ խումբ, որ բուսել է ուղիղ մարգագետնի մէջտեղում: Կռանում եմ աւելի և ճանաչում ինձ միշտ սիրելի, միշտ անմոռաց անթառամ ծաղիկը: Մի քիւրդ փոքրիկ փունջ է կապում նրանցից ու

տալիս է ինձ: Նայում եմ ես այդ ծաղիկների փոքրիկ, կլորակ, փայլուն թերթիկներին, որոնց մէջ նստած են աւելի ևս փայլուն, փոքրիկ թերթիկներ զեղնակարմիր խմբեր, ու տանում նրանց դէպի իմ շրթունքները... Մի ծանօթ սուր, չորացող խոտի դուրեկան բուրմունք յիշեցնում է ինձ իմ հայրենի Շիրակը, որի բլուրների խճուտ կողերի վրա ես անթիւ անգամ փնջեր եմ կապել այդ յիրաւի տասնեակ տարիների ընթացքում անթառամ մնացող ծաղիկներից: Բայց Շիրակում նրանք աւելի գեղեցիկ են, աւելի շքեղ ու՛ փայլուն, քան Արարատի կողերի վրա, ուր նրանք փոքր ինչ գունատ են ու զեղնած: Սակայն չը պէտք է մոռանալ, որ այստեղ նրանք բուսնում են 8500—9000 ոտնաչափ բարձրութիւն ունեցող հարաւահայեաց ձորերում, այն ինչ Շիրակում նրանք 5500—6000 ոտնաչափից աւելի վեր չեն բարձրանում:

Պահում եմ փունջը ծոցումս և գնում դէպի առաջ: Ահա մի այլ տեղ, երկու ժայռերի արանքում, զանգակ—ծաղիկը կախել է իր սպիտակ, սիրուն զանգակները ու կարծես ընկզմել խոր մտածմունքների մէջ. նրա առաջ, թաւուտ կանաչի միջից, լեռնային առևոյտը պսպղացնում է իր կապուտակ աչքերը, երրորդ տեղում զեղին յօշոջը թեքել է գլուխը և սպիտակ թերթիկների շքեղանակի միջից ուղիղ նայում է դէպի ինձ... Ողջոյն ձեզ, փոքրիկ, սիրունիկ ծաղիկներ, ծաղկեցէք, զարգացէք ազատ ու անվախ ծերուկ Նահապետի հարազատ գոգում. մարդու արգելառիթ ձեռքը չի հասնի ձեզ այնտեղ. և երբ անհնարին

վիշտը գաղտնի ցաւերի գալարումներով կը սկսէ տանջել տարաբաղդ Մերունուն, երբ ոչ ոք մեզանից չի տեսնի ու չի զգայ նրա սրտի խորքերում ծածկված կսկիծը, գոնէ դուք ձեր անոյշ բուբունքով մխիթարեցէք նրան...

Թող յարգված լինի Ֆրանսիացի բուսաբանի յիշատակը,—նա շատ է չարչարվել Մասիսի կողերի վրա,—բայց ես չեմ կարող հետեւել նրա օրինակին և անուանել այս ձորակը, որի նմանները բազմաթիւ են Մասիսի ստորոտներում, «տխուր և ձանձրալի»... Ոչ, հայրենի լեռների հսկան նոյն իսկ իր բարձունքներում, ուր բացի իրար վրա թափթփած վիթխարի ժայռերից և յաւիտենական ձիւնից՝ չը կայ ոչ մի ուրիշ բան, անհամբոյր է և ահարկու, վեհ է և սարսեցնող, բայց ոչ տխուր և ոչ ձանձրալի:

## XXIV

Երկու ժամ անընդհատ բարձրանալուց յետոյ՝ մենք հասանք մի բարձրադիր, լայն տափարակի, որի եզերքին, ուղիղ ձորագլխի վրա, կանգնած է մի ահագին միապաղաղ քարաժայռ՝ սե, փայլուն, կարծես, դիտմամբ յղկված ու կոկված կողերով: Արարատի ճանապարհորդների մէջ սովորութիւն է դարձել այդ քարաժայռը կոչել Աբիխի անունով, անշուշտ նրա համար, որ առաջին անգամ իր ճանապարհորդական նկարագրութեան մէջ այդ գերմանացի երկրաբանն է յիշում նրա մասին: Եւ, յիրաւի, արժէ նրան յիշատակել: Անխառն պորփիւրից կազմված այդ միաձոյլ հսկան

Ի՞ր բարձր գահից այնպէս հպարտ, այնպիսի սպառնալիցան դիրքով նայում է դէպի վայր, դէպի Մասիսի ստորոտի ձորերն ու տափարակները, որ կարծես լերան գագաթից պահապան լինի ուղարկված՝ այս ձորագլխի վրա փակելու ճանապարհը այն յանդուզն մարդկանց առաջ, որոնք կը համարձակվեն մի քայլ ևս անել դէպի վեր, դէպի լերան բարձունքը: Մական անգէն պահապանը իզուր է սպառնում: Ես գիտեմ, ծերունի նահապետը իրաւունք ունի թոյլ չը տալու, որ մարդկային ոտքը պղծէ նրա յաւիտենական ձիւնների անարատ մաքրութիւնը, որ երկաթապատ կօշիկները իրանց սուր մեխերը չը ցցեն նրա առանց այն էլ խոցոտված սիրտը. բայց ո՞վ է ուշք դարձնում այժմ անգէն պահապանների վրա, որոնց պաշտպանութեան միակ միջոցը իրաւունքն է միայն: Ես իջել եմ ձիուց. արպեան գաւազանի սրածայր յրկաթը մխում եմ պահապան-ժայռի վիրաւոր կողի մէջ և ապա մագլցելով հասնում ու ամուր-ամուր կոխում նրա գագաթը: Ժայռը լուռ է. նա ոչինչ չէ խօսում...

Ես աներկիւղ նստում եմ ժայռի գագաթին ու հայեացքս ուղղում դէպի վայր: Իմ առաջ բացվում է մի անսահման տարածութիւն, որի ուղիղ մէջ տեղում կանգնած է Փոքր Մասիսը՝ իր լայն հիմքից հաւասարապէս դէպի վեր, դէպի կոնաձև գագաթը բարձրացող կողերով: Այժմ ես տեսնում եմ նրա հրաբխային բաժակի բոլորակ, կարծես մարդկային ձեռքով քաշած, կանօնաւոր շրջագծի մեծ մասը, որի կենտրոնում բարձրանում են

գորշ-դեղնաւուն, լերան ստորոտից անտեսանելի բլուրներ: Մի մեծ ակօս, սկսվելով գագաթից՝ ճեղքում է նրա կողը ու հասնում մինչև ստորոտը: Գորշ-կապուտակ ճեղքվածքի մէջ ես տեսնում եմ տեղ տեղ սրածայր ժայռեր՝ նետերի նըման ցցված լերան վիրաւոր սրտի մէջ: Ա՛, սիրուն, բոլորակ, փոքրիկ հսկայ, դու է՛լ ցաւեր ես ունեցել, դու է՛լ անտարբեր չես, մեծ եղբօրդ նըման, դէպի հայրենի երկրի վիճակը: Այն, փոքրիկ, գեղեցիկ հսկայ, դու չէիր կարող անտարբեր լինել. չէ՞ որ դու կանգնած ես մի հին, դարաւոր, խորունկ վէրքի վրա, չէ՞ որ քո լայն պատուանդանիդ տակ ապրում է մաս-մաս կտրատված ու դեռ չը մեռած մի վիթխարի մարմին, որ իր խոհերով ու հառաչանքներով գուցէ օր ու գիշեր հանգիստ չէ տալիս քեզ: Ես նայում եմ յետ՝ Մեծ-Մասիսի գագաթին և ապա նորից դարձնում հայեացքս դէպի Փոքրը. ու իմ մտքիցս անցնում է, թէ դիտմամբ չէ՞ ուղղել արդեօք նա իր ճեղքված, վիրաւոր սիրտը ուղիղ Մեծի կողմը, չէ՞ բացել դիտմամբ իր հսկայական ակօս-վէրքը մեծ եղբօր առաջ... Ու երբ դալիս է գիշեր, երբ անթափանց խաւարով սքօղված լուում, խաղաղում է ամբողջ աշխարհը, երբ այս ամայի անջրպետի մէջ չէ թռչում ոչ մի թևաւոր անգամ, փոքրիկ հսկան գաղտնի շշուկով չէ պատմում մեծին իր ճեղքված սրտի անհամար ցաւերը...

XXV

Կարաւանը հանգստացաւ. նա նորից առաջ է

գնում: Բեռնակիր քիւրդերը, չը նայելով մէջքերին կապած ծանրութիւններին, արագ և աշխոյժ փոխում են ոտները. մենք, ձիաւորներս, հազիւ ենք հասնում նրանց ետեից. հետեակ ընկերներս մնացել են յետ, նրանք այլ ևս չեն երևում: Անցնում ենք նորից ձորեր, բարձրանում փոքրիկ տափարակներ ու կրկին մտնում մի այլ ձոր, մի այլ հովիտ, որոնց երկու կողքերում անփոփոխ կանգնած են լերկ քարակոյտերից կազմված բարձր ու ցածր բլուրներ: Ճանապարհը քանի գնում աւելի եւ աւելի դժուարանում է. քարերն ու ժայռերը բազմանում են, բուսականութիւնը փոքր առ փոքր աղքատանում ու չքանում է: Մենք մտնում ենք Արարատի ժայռուտների միահեծան աիրապետութեան սահմանը:

Այն հազիւ նշմարելի արահետը, որով մենք մինչև այժմ առաջ էինք գնում, արդէն կորել է. ձիերը քրտնել են և հեալով ու լարելով իրանց ամբողջ ոյժը՝ հազիւ կարողանում են մի բօպէում մի քանի քայլ փոխել: Ես նայում եմ իմ յոգնած, փրփրակալած կարմիր նժոյգին և իմ խիղճս տանջում է ինձ. յուսահատաբար նա թափահարում է գլուխը, և թւում է ինձ, թէ նա զանգատվում է մարդկային անխղճութիւնից:

—Ահմէդ-բէկ,—դիմում եմ ես մեր երիտասարդ քիւրդ առաջնորդին, որ բռնել է Հասոյի տեղը և մեզ հետ միասին պէտք է բարձրանայ Մասիսի գլուխը,—ձիերը յոգնել են, պէտք է կանգ առնել և սպասել, որ յետ մնացողները հասնեն. չը կամի մի յարմարաւոր տափարակ տեղ:

—Շուտով, շուտով կը լինի, այ, տեսնում էք  
այն քարերը,—Ահմէդը ցոյց է տալիս ինձ մի ժա-  
ռոտ բլուր,—նրա տակ լաւ տափարակ տեղ կայ,  
այնտեղ կանգ կառնենք. մտրակեցէք ձիուն:

Բայց ես հրաժարվում եմ մտրակելուց խեղճ  
կենդանուն և վայր եմ իջնում ու տալիս սանձը  
մի քիւրդ բեռնակրի:

Չորս ժամ անընդհատ ձիու վրա նստելուց՝  
ոտներս ընդարմացել են. ես հազիւ կարողանում  
եմ փոխել նրանց, բայց մի քանի տասնեակ քայլ  
անցնելուց յետոյ՝ ոտներս բացվում են և ես թե-  
թևութեամբ սկսում եմ ոստոստել մի քարից դէ-  
պի միւսը,

Յուսալով, որ կարաւանը կանգ կառնի Ահ-  
մէդի ցոյց տուած տեղում, ես շեղվում եմ ճանա-  
պարհից և մօտենում մի բլրի, որ առանձնապէս  
զբաւում է իմ ուշադրութիւնը: Իս բլուր չէ, այլ  
լերկ, մոխրագոյն, համարեա միաչափ մեծ ժայ-  
ռերի կուտակում. կարծես նրա տեղ մի ժամանակ  
կանգնած է եղել մի մեծ, տիտանեան շինութիւն,  
որ կործանվելով չէ ցրել իր հսկայական բեկոր-  
ները այս ու այն կողմ, այլ ամփոփ պահել է մի  
տեղում՝ ընդունելով նեղ, երկարաւուն սրածայր  
բլրի կերպարանք: Բայց իսկապէս ինքը բլուրը  
չէ զբաւում իմ ուշադրութիւնը,—այդպիսի բլուր-  
ներ շատ են իմ շուրջս,—այլ հեռուից պատի նը-  
մանութիւն ունեցող մի գիծ, որ սկսվում է բլրի  
վերին հիւսիսասայեաց ծայրից և անցնելով նրա  
արևելեան ստորոտով՝ չքանում է իմ աչքից հա-  
րաւում: «Միթէ յիրաւի շինութեան մնացորդ է»

անցնում է իմ մտքից: Ես արագութեամբ մօտե-  
նում եմ նրան՝ թռչկոտելով խիտ առ խիտ կու-  
տակված քարերի վրայով: Մի քանի բօպէից յե-  
տոյ ես կանգնած եմ արդէն նրա առաջ և ապշած  
դիտում եմ մի հսկայական ջրանցք, անկասկած  
շինված մարդկային ձեռքով: Ջրանցքը մի կողմից  
յենվում է բլրին, որ և կազմում է նրա արևմը-  
տեան պատը, իսկ առաջի կողմից վիթխարի վե-  
մերով բանձրացրած է լայն, հաստատուն ուղղա-  
ձիգ պատնէշ, որի միջից չէ ընկել ոչ մի քար ան-  
գամ: Ես բարձրանում եմ պատնէշի վրա և դի-  
տում ջրանցքի յատակը. նա բաւականին խոր է.  
ահագին սալաքարեր ծածկում են այդ յատակը,  
որի վրա տեղ-տեղ թափթփած են բլրի վրայից  
գլորված ժայռեր. տեղ-տեղ երևում են նաև հողի  
և աւազի կոյտեր. ես նշմարում եմ մինչև անգամ  
կարճահասակ կանաչ նիհարիկ խոտեր և մի փոք-  
րիկ, սպիտակագլուխ ծաղիկ, որ փոել է իր ման-  
րիկ տերևները արևի տակ և տաքանում է նրա  
մեղմ դուրեկան ճառագայթներով: Ջրանցքը կը-  
րում է իր վրա խորին հնութեան կնիք: Երբ տե-  
զի դրութեան և շրջակայ բլուրների ու ձորերի  
դասաւորութեան հետ ես աւելի մօտ ծանօթացայ,  
երևաց, որ ջրանցքն սկսվում է երկու խորածորե-  
րի խաչաձև կտրուածքից, դէպի ուր հոսում են  
Մասիսի յաւիտենական ձիւների ու սառոյցների  
ամենաստորին սահմանից բղխած ջրերը, և այս  
ցիկլօպեան ջրանցքը ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի  
արհեստական շտեմարան, ուր ամբարվում էին  
Մասիսի այնքան թանգագին ջրերը ու հոսում դէ-

պի Կոգովտի մի ժամանակ բարերեր և բուռաշատ, իսկ այժմ չոր, ամայի, անբնակ գաւառը: Բայց ինչպիսի հոգածու ձեռքերով շինված է ջրանցքը, ինչպիսի խնամքով դարսված ու յարմարեցրած են քարերը նրա պատնէշի մէջ, Անցել են դարեր, գլորվել է գուցէ մի ամբողջ հազարամեակ, տասնեակ անգամ դղրագցել է տեղից Մասիսի ամբողջ զանգվածը, վաղուց կորել, անյայտացել են հոգատար ձեռքերը, կործանվել է անհետ մի հին ու չքնադ քաղաքակրթութիւն, բայց դեռ անկործան, դեռ այնպէս հաստատուն՝ ու ամուր մնացել է մի բեկոր այդ քաղաքակրթութիւնից Մասիսի խորխորատներում, իբրև մի պերճախօս վկայ կորստի անհնարին դառնութեան... Պօսեցէք, անմուռնչ քարեր, սր են ձեր տէրիւրը, վճիտ ջրերի հոսանքն ինչո՞ւ այլ ևս չէ անցնում ձեր միջից... Ռր անգութ ձեռքը ցամաքեցրեց ձեզ...

### XXVI

Ժամի 1-ին Մասիսի լեռնային վերջին տափարակներից մէկի վրա ճաշելուց յետոյ՝ մենք հրաժեշտ տուինք քիւրդ բէկերին, արձակեցինք զինուորական պահապաններին և յանձնելով նրանց ձիերը՝ միացանք մեր հետևակ ընկերներին: Ձրով այլ ևս առաջ գնալ անհնար էր. այդ տափարակից սկսվում էր մի թեք, դժուարակոխ գառիվեր, որի վրա բարձրանալու համար՝ լեռնային ճանապարհներին այնքան ընտելացած քիւրդերն անգամ ստիպված էին լարել իրանց բոլոր ոյժե-

րը: Կարաւանը, որ այժմ բաղկացած էր միայն արշաւաւախմբի 14 անդամներից, մօտ 25 քիւրդ բեռնակիրներից, մի հրացանակիր քիւրդից և մի առաջնորդից, աւելի ես կամաց ու դանդաղ, քան առաջ, տեղ-տեղ հանգստանալով, մագլցում էր դէպի մի բարձր քարակոյտ, որով վերջանում էր թեք զառիվերը: Դժուարութիւնն այն էր, որ զառիվերը ծածկված էր մանր խիճով և մեր ոտները շատ անգամ թաղվում էին նրա մէջ ու վեր բարձրանալու փոխարէն՝ սահում դէպի վայր. բայց և այնպէս ալպեան գաւազանի օգնութեամբ մենք անընդհատ առաջ էինք գնում: Տիկին էքիզ-Կրիմը իր սեռին ոչ բոլորովին յատուկ աշխուժով յետ չէր մնում մեզանից. յետ չէին մնում նաև Սուլթան-Կրիմ-Գերէյն և Եւանգուլեանը, որոնց տարիքը 50-ին մօտ կամ գուցէ նաև 50-ից անց են:

Մի ժամի չափ միասին գնալուց յետոյ, ևս, Սարգսեանը և ուրս ինժեներ Դավիդօվսկին առաջ անցանք ու հասանք այն քարակոյտին, որ երեւում էր ներքևից: Դուրս եկաւ, որ քարակոյտը կազմում էր լեռնային մի նեղ ձորի եզերք, որի տակով մենք պէտք է շարունակէինք մեր ճանապարհը դէպի վեր: Ոչ ոք մեզանից չէր յոգնել, բայց մեզ տանջում էր ծարաւը. աղի երշիկով և խաշած աղի մսով ճաշելուց յետոյ, մենք հնարաւորութիւն չունէինք ոչ մի տեղ յազեցնելու մեր ծարաւը. յոյսերս Մասիսի ձիւների վրա էինք դրել: Եւ որքան մեծ եղաւ իմ ուրախութիւնը, երբ ես վերևից տեսայ ձիւնի և սառոյցի մի երկայն՝ տեղ-տեղ ընդհատվող՝ շերտ, որ սպիտակ

նեղ ժապաւէնի նման ձգւում էր ձորի յատակում: Թռչկոտելով քարերի վրայից՝ ես իսկոյն վայր իջայ և ընկայ ջրի վրա, որ դուրս գալով ձիւնի և սառոյցի հաստ շերտի տակից՝ հաճելի քլքլոցով սահում էր քարերի միջով դէպի վայր և ծծւում ու կորչում զառիւկերի խճուտների մէջ: Ջուրը պարզ էր և սառն, ինչպէս ձիւն: Ընկերներս գնում էին բարձրից, քարակոյտի տակով, իսկ ես բռնեցի լեռնային այդ փոքրիկ սիրուն գետակի ճանապարհը և նրա քաղցր քլքլոցի միանման ներդաշնակութեանն ականջ դնելով՝ սկսեցի առաջ գնալ հակառակ նրա ընթացքին: Մի քանի հարիւր քայլ անցնելուց յետոյ՝ ձիւնի և սառոյցի ընդհատվող շերտերը վերջացան և գետակը բացեց իմ առաջ իր ականակիտ ջրերի ամբողջ հայելին: Անշուշտ նա գալիս էր մի այլ, աւելի ընդարձակ ձիւնաբանի ծոցից, որ գտնւում էր երևի ձորի վերին մասերում, և անշուշտ այդ գետակն էր, որ մի ժամանակ արհեստական տաշտի միջոցով, թերևս միացած ուրիշ գետակների հետ, հոսում էր դէպի ցիկլոպեան ջրանցքը: Ուղիղ գծով ջրանցքը հեռու չէր այս տեղից: Եւ յիրաւի մի կէս ժամվայ ճանապարհից յետոյ՝ Սարգսեանը, Դավիդովսկին և ես հասանք մի մեծ, բոլորակաձև ձիւնեղէն տաբածութեան, որ բռնել էր ձորագլխի հիւսիս-արևելեան լանջը: Ձիւնը հաստ էր և ամուր, — նա ամենևին չէր ճնշւում մեր ոտների տակ, — բայց ոչ մաքուր. նրա երեսը գորշ-դեղնաւուն գոյն ունէր և երևի կեղտոտվել էր Մասիսի անընդհատ քամիների բերած փոշուց և մանրիկ աւազից:

**Քրքրելով** ձիւնի երեսի հաստ շերտը՝ ես սկսեցի ոււտել նրա խոշոր, սառցային հատիկները, որոնց ամեն մէկի մեծութիւնը համարեա մի-մի սիսեռի չափ էր: Ձիւնի այդպիսի խոշոր հատիկներ ես երբէք չէի տեսել իմ կեանքում. ձեռքի մէջ վեր ու վայր գցելիս, իրար դիպչելով, նրանք չխկչըխկում ու խշխշում էին, կարծես յիրաւի բոված սիսեռի հատիկներ լինէին: Քիւրդ բեռնակիրներից մի քանիսը մեզանից առաջ հասել էին այնտեղ և նստած քարերի վրա հանգստանում էին. մենք ևս պառկեցինք ձիւնի կողքին, արևի ճառագայթներից տաքացած խճուտի վրա՝ հանգստանալու և սպասելու մեր ընկերներին: Շուտով նըրանք երևացին: Ա. Եւանգուլեանի և Մարգսեանի արած հաշիւներից իմացվեց, որ այդ ձիւնեղէն տարածութիւնը գտնվում է մօտաւորապէս 11,000 ոտնաչափ բարձրութեան վրա:

Օրը արդէն երեկոյանում էր. արևը թեքվում էր դէպի իր մուտքը. հարկաւոր էր շտապել և ժամ առաջ հասնել Մասիսի այն վերջին տափարակին, ուր անց էինք կացնելու գիշերը. ուստի կարաւանը, այստեղ փոքր ինչ դազար առնելուց յետոյ, նորից ճանապարհ ընկաւ: Ճանապարհ. եթէ այդպէս լինէր նոյն իսկ դրախտի ուղին՝ ես համոզված եմ, որ հանդերձեալ կեանքում ոչ ոք չէր ցանկանայ այնտեղ գնալ: Սև, փայլուն, սրածայր, ահագին ժայռեր, կուտակված իրար վրա, կանգնած են առաջիդ, պատի նման, և դու ստիպված ես նախ մտածել գոնէ մի քանի վայրկեան և ապա միայն ալպեան գաւազանը ցցելով մի տեղ

ժայռերի արանքում, իբրև նեցուկ, դնել ուտքդ որ  
և է ահագին բարի սուր ծայրին: Շատ անգամ  
այդ էլ բաւական չէ. հարկաւոր է օգնութեան  
կանչել և երկու ձեռքը ու բառացի մտքով չորս  
ոտանի դարձած՝ ճանկոտել ժայռերն ու այդպէս  
միայն հասնել որ և է քարակոյտի գլուխ՝ տխրու-  
թեամբ համոզվելու համար, որ առաջիդ կանգնած  
մի ուրիշ գժուարակոխ քարակոյտ պահանջում է  
բեզանից նոյնը, եթէ ոչ աւելին: Եւ այսպիսի «ճա-  
նապարհով» մենք ստիպված էինք գնալ ոչ պա-  
կաս քան երեք ժամ: Զարմանալին այն էր, որ  
ոչ ոք մեզանից չէր գանգատվում ոտների շոգ-  
նածութեան վրա, թէև ամենքն էլ շնչում էին  
ծանր, հեւալով, աշխատելով լայն բանալ թոքերը՝  
աւելի մեծ քանակութեամբ օդ կուլ տալու հա-  
մար. լեռնային բարձր շերտերի օդը փոքր առ  
փոքր զգացնել էր տալիս մեզ իր ոյժը:

— Հասանք, հասանք, լսվեց յանկարծ բարձ-  
րից մեր ընկերներից մէկի ձայնը, որ բեռնակիր  
քիւրդերի և առաջնորդի հետ միասին առաջ էր  
անցել. — հասանք գիշերելու տեղին:

Եւ ժամանակ էր հասնելու. մութն ընկնում  
էր. փչում էր արդէն ցուրտ, սառեցնող քամի.  
ամենքը քաղցած էին և հանգիստ էին խընդ-  
րում:

## XXVII

Մասիսի հարաւ-արևելեան կողի լեռնային  
այն վերջին տափարակը, որի վրա մենք կանգ ա-  
ռանք գիշերելու համար, բաւական մեծ տարա-

ծուծիւնն է բռնում: Հաւանականօրէն նրա երկայնուծիւնը պակաս չի լինի 120—130, իսկ լայնուծիւնը 40—50 սաժէնից: Յածրադիր ժայռերի մի ուղղաձիգ շարք կտրում է նրան մէջտեղից և բաժանում երկու մասի: Տափարակի վերին եզերքի մօտ, շրջապատող բարձրուծիւնների ցածուն լանջերի վրա, տարածվում է մի ընդարձակ ձիւնաբան, որի տակից, այս և այն տեղում, բղխում են մաքուր, ականակիտ ջրերի հալուածքներ և միանալով իրար հետ կազմում լեռնային մի սիրուն առուակ: Տափարակը արևելեան և արևմտեան կողմից շրջապատված է ժայռոտ բարձրուծիւններով և փոքր ինչ պաշտպանված է քամիներից. կարճահասակ ցածր կանաչուտներ տեղ-տեղ ծածկում են նրան ու դարձնում վերին աստիճանի հաճելի մի վայր շրջապատող տխուր բնուծեան մէջ:

Երբ մենք հասանք տափարակին՝ քամին աւելի սաստկացաւ և սկսեց փչել փոթորիկի զօրութեամբ: Չը նայելով՝ որ մենք հագանք ձմեռային հաստ վերարկուներս և ձգեցինք վրայից եափնջիներ, այսուամենայնիւ անհնար եղաւ պաշտպանվել ցրտասարսուռ քամու ազդեցութիւնից. շատերը մեզանից սկսեցին դողդողալ, ատամ ատամի խփել, իսկ մէկը մինչև անգամ հիւանդացաւ և բռնվեց տենդով: Ոեղճը մտնում էր ժայռերի պաշտպանութեան տակ կուչ եկած ընկերների արանքը և աշխատում է մի կերպ տաքացնել զլիւից մինչև ոռները դողդողացող մարմինը: Մեր ընկերներից նրանք, որոնք աւելի քաջ էին,

շտապ-շտապ խփում էին սպիտակ, բարակ կաթ-  
րից կարված, ցածր, նեղ ու երկայն վրանը, խռեղ  
բեռնակիր քիւրդերից մի քանիսը կրակ էին աս-  
նում թէյ պատրաստելու համար, միւսները՝ մտաւած  
ժայռերի խոռոչների մէջ կամ բոլորված կրակէջ  
շուրջը՝ դողդողում էին աւելի քան թէ մենք:

Վերջապէս վրանը խփվեց և մենք սողալով  
մտանք նրա տակ: Տաք էր, հազիւ արշին ու կէս  
բարձրութիւն ունեցող, երկկողանի նեղ վրանը  
մեզ թւաց մի հոյակապ ապարանք, արքայական  
մի պալատ, չը նայելով որ այդ արքայական պա-  
լատի մէջ մենք կուչ էինք եկել ու սեղմվել իրար  
աւելի, քան գուցէ սեղմվում են ոչխարները նեղ  
փարախում. իսկ երբ թէյը պատրաստվեց և մե-  
զանից իւրաքանչիւրը իրար վրա ազահաբար կուչ  
տուեց մի քանի բաժակ՝ հացի, պանրի և երշիկի  
հետ միասին՝ այդ ժամանակ արդէն մենք զգա-  
ցինք մեզ կանգնած երկրային ու բոլոր երկնա-  
յին երանութիւնների գագաթնակէտի վրա: Ամեն  
ինչ լրիւ էր. պէտք էր միայն քնել ու հանգստա-  
նալ՝ վերանորոգելու մեր՝ բաւականաչափ սպառ-  
ված ոյժերը՝ հետևեալ օրվայ աւելի ևս դժուար  
վերելքի համար:

Անցաւ մի կէս ժամ և լուութիւնը տիրեց վը-  
րանում. ամենքը խաղաղ քնած էին հաստ վերար-  
կունների և վերմակների տակ, իսկ դուրսը մեր  
ընկերներից մի քանիսը, որոնց համար տեղ չը  
կար վրանում, ոտով գլխով մտել էին թաղիքեայ  
մեծ ու հաստ, յատկապէս լեռնային ճանապարհ-  
հորդութիւնների համար կարել տուած, պարկերի

մէջ և նոյնպէս քնած էին անշարժ: Ես էի միայն, որ  
աւրթուն հսկում էի ամբողջ գիշեր և արագ-արագ  
ծխում մի գլանակ միւսից յետոյ: Իմ քունս չէր տա-  
նուում. ես մի քովէ անգամ չը կարողացայ փակել  
աչքերս. լեռնային անօսր օդի ազդեցութիւնն էր  
դա արդեօք, թէ օրվայ տպաւորութիւնները դեռ  
չէին տեղաւորվել, գտել իրանց որոշ անկիւնները  
ուղեղիս մէջ ու խառնված ուրիշ հոգսերի ու մտած-  
մունքների հետ՝ իբրև անմարմին ուրուականներ,  
թափառում էին անընդհատ բորբոքված երևակա-  
յութեանս առաջ: Քամին արդէն հանդարտվել էր.  
Երա սուր, անդուրեկան վղզոցն ու հառաչն այլ  
ևս չէր լսվում: Չէր լսվում նաև քիւրդերի դողդո-  
ղալու և բարձրաձայն խօսակցութեան ձայնը. ե-  
րևի նրանք էլ լռել էին ու քնել, վարակվելով Մա-  
սիսի նիւրհոգ ժայռերից: Չորս կողմը տիրել էր  
գերեզմանական լուռ անշարժութիւն: Չէի շարժ-  
վում և ես: Գլուխս հանած վրանից դուրս՝ ես նա-  
յում էի պարզ, կապուտակ երկնքին, որի վրա իր  
արծաթ—ճառագայթներով փայլում էր նորալու-  
սինը և շողշողում էին մի քանի աստղ ու մոլո-  
րակ: Ժայռերի բարձր շարքերը փակել էին լեռան  
ստորոտի տեսարանը. ես միայն տեսնում էի Փո-  
քըր Մասիսի մշուշապատ բոլորակ գագաթը, որ  
իբրև անխօս, մթազնած արձան՝ կանգնած էր իմ  
առաջ: Իմ միտքս թռչում էր հեռու, շատ հեռու.  
Նա թռչում էր լեռան բարձրութիւնից դէպի վայր,  
դէպի հայրենի դաշտերն ու լեռները, որոնք բո-  
լորվել են ծերուկ Նահապետի շուրջը: Արդեօք  
քնած են հիմա այնտեղ փոքրիկ խաղաղիկ գիւ-

զերն ու քաղաքները՝ թէ արթուն հսկում են ինձ նման՝ բռնված գալիք օրերի սպառնալից հոգաւորով: Արդեօք ի՞նչ է կատարվում այնտեղ...

### XXVIII

Կէս գիշերից անց՝ եղանակը փոխվեց. երկինքը ծածկվեց սպիտակ-մթնազոյն ամպերով հանդարտված քամին բարձրացաւ նորից ու նորից սկսեց իր ճնշող, սրտամաշ երաժշտութիւնը. թեթև, սպիտակ, թափանցիկ մառախուղը մէկ ծածկում էր վրանն ու շրջակայ ժայռերը, մէկ ցրվում, հեռանում՝ սահելով դէպի Մասիսի ստորին խորածորերը. կարկտի մանրիկ հատիկները ծեծում էին վրանը և բարձրաձայն խշշոցով ծածկում տափարակը: Սարի հեռաւոր գագաթից լռովեց խուլ, սպառնական գոռոց: Ես գլուխս ներս քաշեցի վրանի տակ ու մնացի անշարժ մինչև լուսաբաց:

Երբ կանուխ առաւօտեան սկսվեց քիւրզերի գոռգոռոց—խօսակցութիւնը՝ ես վեր կացայ տեղիցս և կամաց դուրս եկայ վրանից: Տափարակը ծածկված էր կարկտի սպիտակ հատիկներով. առուն սառել էր և կտրել իր դուրեկան քէքոցը, արին այնքան հաճութեամբ ես ականջ էի դնում երէկ: Մասիսի գագաթն ու կողերը ամբողջովին ծածկված էին թանձր, մութ մառախուղով. մերձակայ ձիւնարանը հազիւ երևում էր սպիտակ մշուշի միջից: Ես աչքս դարձրի դէպի վայր, դէպի Մասիսի ստորոտները. նրանք բաց ու ազատ էին ամպ ու մառախուղից. այնտեղ՝ ժայռերի

քառասական կուտուածքների վրա՝ արեւելակողմի  
ամպերը ճեղքելով, մերթ ընդ մերթ փայլում էին  
կանուխ առաւօտի կարմիր-դեղնաւուն ճառագայթ-  
ները և տեղ-տեղ միայն, սպիտակ սիրուն կա-  
րասպների նման, այս ու այն ժայռի կրծքի վրա  
մի վայրկեան հանգչելուց յետոյ՝ թռչում, անց-  
նում էին թեթև, թափանցիկ ամպերի փոքրիկ  
ծուէններ:

Սա մօտեցայ քիւրդերին. նրանք դուրս էին ե-  
կել իրանց խոռոչներից և հաւաքվել կրակարանի  
շուրջը, որ շատ յարմարաւոր կերպով շինված էր  
երեսք մեծ քարերից: Մի քանի քիւրդեր, որոնք  
յամնձն էին առել մեզ ծառայել, աշխատում էին  
կրակ անել թէյ պատրաստելու համար, իսկ միւս-  
ները՝ անհամբերութեամբ սպասելով կրակին՝ դող-  
գողում էին ամբողջ մարմնով ու ոտները խփում  
քարերին:

—Ի՞նչպէս անցկացրիք գիշերը, քերվաներ,  
հարցրեցի ես նրանց:

«Քիւրվաները» միաձայն գոռգոռոցով պա-  
տասխանեցին, որ ոչ ոք նրանցից չէ կարողացել  
քնել և բոլորն էլ ամբողջ գիշերը դողդողալով են  
անցկացրել: Բայց առանց հարց ու պատասխանի  
էլ ամեն ինչ պարզ էր: Սա նայեցի մի րօպէ նը-  
րանց կապտած, չորացած դէմքերին, նրանց բոր-  
բոքված աչքերին, որոնց միջից հոսում էին ա-  
կամայ արտասուքի կաթիլներ, նրանց պատառո-  
տուն, բարակ ցնցոտիներին, որոնք հազիւ ծած-  
կում էին դողդողացող մարմինների մերկութիւ-  
նը, և թողի հեռացայ նրանցից: Իմ խիղճս թոյլ

չէր տալիս աւելի երկար նայելու այդ թշուառ արարածների վրա, որոնց քաշել բերել էինք մենք, իբրև գրաստներ, Մասիսի այս սառցարանները՝ առանց նրանց մասին մի վայրկեան անգամ մտածելու: Եթէ այդ գրաստները լինէին ձի, եղ, էշ կամ գոմէշ, մենք ի հարկէ, աւելի կը մտածէինք նրանց մասին, կերակուր կը տայինք—քիւրդերին մենք մի կտոր հաց անգամ չը տուինք,—կը պաշտպանէինք ցրտից, կը փայփայէինք, բայց մարդկային անխղճութիւնը հասնում է շատ անգամ այն զգուշելի աստիճանին, որ նա աւելի ստոր է դասում մարդուն, քան ձիուն կամ գոմէշին: Վերելք դէպի Արարատ. ի հարկէ հեշտ է այդ, երբ բեռնում ես. քո ամբողջ ծանրութիւնդ, քո տաք վերարկուներդ, վերմակներդ, ուտելիքդ ու խմելիքդ ուրբշ՝ քեզ նման մարդկանց վրա և հարկաւոր ժամանակ վերցնում այդ բոլորը՝ թողնելով նրբանց դողդողալու ամբողջ գիշերը լառանց ծածկոյթի, չոր հացի յուսով, գուցէ նաև քաղցած: Բեռնակիր քիւրդերի կապտած դէմքերն ու նրանց ակամայ արտասուքը երևի դեռ երկար չեն հեռանայ արշաւախմբի անդամների աչքերի առաջից և դեռ երկար կը տանջեն մեր խիզճը:

XVIX

Առաւօտվայ թէյից յետոյ՝ մենք բոլորս, կուչ եկած ցրտից, տխուր կանգնել էինք վրանի մօտ և հայեացքներս ուղղել դէպի Մասիսի մառախլապատ գագաթը. ամեն մէկը մեզանից որոճում էր իր առանձին մտածմունքը. քամին վզգում ու ու-

նում էր կատաղութեամբ, լերան վերնակողերի  
ժայռերն այնպիսի ահարկու հայեացքով նայում  
էին բարձրից... «Գնալ արդեօք առաջ, դէպի այդ  
սարսեցնող, անհլւրընկալ քարակոյտերը, դէպի  
այդ մութ ամպերը ու ենթարկել կեանքը ամեն  
տեսակ՝ վտանգի, թէ յետ դառնալ դէպի Սարդար-  
Բուլաղի հոյակապ վրանը, դէպի տաքն ու հան-  
գիստը», — ամեն մէկը մեզանից այս երկունքի  
մէջ էր:

— Ես յետ եմ գնում, — լավեց յանկարծ մի  
վճռական ձայն խմբի միջից, — տաք շորեր չու-  
նեմ, մրսում եմ:

Ամենքը կարծես սպասում էին հէնց այդ ա-  
ռաջին ձայնին, որ մի որոշ եզրակացութեան գան,  
մի վճիռ կայացնեն իրանց մէջ: Երկունքը վերջա-  
ցաւ. բոլորն էլ շարժվեցին տեղերից:

— Իսկ ես գնում եմ առաջ, ինչ ուզում է թող  
լինի, ես վճռել եմ. և ինչ պիտի լինի որ... սկսեց  
տաք-տաք խօսել մի ուրիշը: Այդ քաջը ապացու-  
ցանում էր, որ լեռներում եզանակը յաճախ փո-  
փոխական է լինում, քամին կարող է շուտով դա-  
դարել, եզանակը լաւանալ:

Ոսքը, ի հարկէ, միշտ քաջերինն է. այդ  
հին ճշմարտութիւնը Մասիսի բարձր կողերի վրա  
ևս արդարացաւ: Սմբի մեծամասնութիւնը հետևեց  
քաջին, իսկ փոքրամասնութիւնը միայն՝ բազկա-  
ցած չորս հոգուց, որոնց մէջ էին Սուլթան-Կրիմ-  
Գիրէյն և տիկին Էքիզ-Կրիմը՝ այն անձին, որ յայտ-  
նեց թէ տաք շորեր չէ վերցրել իր հետ:

Վճիռը կայացնելուց յետոյ՝ ամեն մէկը սկը-

սեց շատապ-շատապ պատրաստվել իրագործելու նը-  
րան: Քիւրդերը, որոնք անհամբերութեամբ սպա-  
սոււմ էին մեր խորհրդակցութեան վախճանին,  
խեղճ-խեղճ կախեցին գլուխները. ուրախ էին նը-  
րանք միայն, որոնք վերագարձողների հետ պէտք  
է իջնէին Սարգար-Բուլաղ ու յետ ասնէին նը-  
րանց... ասք շորերը:

Առաջ գնացողներից իւրաքանչիւրը իւր ա-  
ռանձին միջոցները ձեռք առաւ ցրտից պաշտպան-  
վելու համար. մէկը հագաւ մորթիով աստառած  
կարճ վերարկու, միւսը՝ բթաչափ հաստութեան  
բրդեայ բաճկոնակ, երրորդը շաա յարմարաւոր  
կերպով փաթաթեց ամբողջ իրանը պլէդով, իսկ  
ես, որ չունէի և ոչ մէկը դրանցից, մերկ մարմ-  
նիս վրայ հագայ երկու բրդեայ շապիկ (Ֆուֆայ-  
կա) իրանց անբաժան ընկերներով և երկու զոյգ  
հասա գուլպա, մի բան, որ ես, ասենք, յաճախ  
անոււմ եմ ոչ միայն Արարատի վրա... Մասիսի  
ժայռերը չը խրանեցնելու համար՝ մենք առաջին  
օրը թողել էինք եւրօպական գլխարկները. նրա  
ստորոտում ու ծածկել ասիական գզակներ, որոնց  
վրայից այժմ ամուր փաթաթեցինք բրդեայ հաստ  
գլխանոցներ: Չը մոռացանք հագնել նաև ձեռնոց-  
ներ ու գնել մոխրագոյն կամ կապոյա ակնոցներ.  
և այսպէս կազմ ու պատրաստ, մէկ-մէկ... խեղ-  
կատակ դարձած, ալպեան գաւազանները ձեռքե-  
րիս, փոխեցինք առաջին քայլը դէպի վեր:

— Օ՞ն անդր, յառանջ, ուրախ բացականչեցի ես  
ինձ ու ինձ, նկատելով, որ մեր քաջ ընկերի գա-  
շակութեան համաձայն, եղանակը յերաւի սկսում

է լաւանալ:

Իմ կողքից գնում էր Թիֆլիսի Ֆիզիքական դիատորանի կառավարիչ Գլասսէկը. նա խէթ-խէթ նայեց ինձ. «Ի՞նչ է բլբլում այս պարոնը» հարցնում էին անշուշտ նրա աչքերը. ես ժպտացի և դարձրի հայեացքս Մասիսի ժայռերին, որոնց վրա արդէն խաղում էին արևի պայծառ ճառագայթները: «Օ՛ն անդր, յառաջ» ուրախ արձագանք կրկնեցին ինձ այդ ժայռերը: Հայրենի լեռան անմուռենչ բեկորները աւելի լաւ էին հասկանում իմ լեզուն ու միտքը, քան ինձ շրջապատողները: Ձէլին կարօտել արդեօք նրանք այս հինաւուրց խօսքերին...

### XXX

Կարելով մերձակայ ընդարձակ ձիւնաբանի ամբողջ լայնութիւնը՝ ես և Գլասսէկը բարձրացանք արևելակողմի ժայռերի գլուխը և միացանք մեր միւս ընկերներին, որոնք գնում էին ուրիշ ճանապարհով: Կարաւանը մէկ կորչում էր քարքարուտների արանքներում, մէկ երևում որ և է բարձր բլրի գագաթին. ամենքը ուստուսում ու Թոչկոտում էին աշխոյժ և ոգևորված, ամենքի դէմքին, չը նայելով ճանապարհի դժուարութեան, փայլում էր ուրախ ժպիտ. և այդ ուրախութեան միակ աղբիւրը պարզ ու պայծառ արևն էր, որ շողշողում էր ամպերից ազատված կապոյտ երկընքում և տաքացնում մեր՝ ցրտից սառած մարմինները: Քամին դադարել էր: Մասիսի դեռ այնքան հեռու գագաթին ևս պարզել ու ամբողջովին

բացիլ էր մեր առաջ իր ձիւնափայլ, մաքուր վարսերը: Երկիւղն ինպառ չքացաւ մեր սրտից: Լեբան խորխա վերնակողերը, որոնք մի ժամ առաջ այնպիսի ահ ու սարսափ էին ազդում մեզ վրա, այժմ ջերմ արևի կախարդական ճառագայթների տակ՝ այնքան մատչելի, այնքան սիրալիր էին երևում, որ մեզ թւում էր, թէ արժէ միայն մի քանի ժամ ևս թռչկոտել անընդհատ, նոյն եռանդով, դէպի այդ վերնակողերը և մենք կանգնած կը լինենք լեբան գազաթիֆն: Բայց ժամերն անցնում էին ժամերի ետևից, առանց համարեա դադար առնելու, լարած մեր բոլոր սյուղերը՝ մենք մազլցում էինք դէպի վեր, սակայն Մասիսի դիւթական սպիտակահեր կատարը կանգնած էր նոյն անմատչելի հեռաւորութեան ու բարձրութեան վրա և, կարծես, մազաչափ անգամ մենք չէինք մօտենում մեր նպատակին. ընդհակառակը, որքան մենք բարձրանում էինք, թրւում էր, թէ այնքան աւելի այդ խորհրդաւոր կատարը հեռանում է մեզանից—հակայական սարք բաց էր անում մեր առաջ իր թագնված սևաթոյր կուրծքը՝ ժայռուաների և գերբուկների ահագին նորանոր տարածութիւններ:

Անցան ժամեր, անցաւ և կէսօրը—աչ ոք մեզանից չէր մտածում ուտելու կամ հանգստանալու մասին: Ուղիղ է, մենք յաճախ ֆուտում էինք և մի կտոր շփօղաղ կամ մի հատիկ անուշադէն ձգում բերաններս—բայց դա չուէր օգտակար հանգստ էր՝ կանօնաւորելու շնչառութիւնը: որ քանի գնում, այնքան աւելի գծնարար

նում էր. մենք հեռւմ էինք այնպէս բարձրաձայն,  
այնպիսի ազահութեամբ արագ-արագ կուլ տալիս  
լեռնային շերտերի անօր օդը, որ կարծես խեղդ-  
վելիս լինէինք որ և է փակված ու զմռսած սե-  
նեակի անօդ մթնոլորտում: Եւ հեշտ է ասելը.  
մենք արդէն գտնվում էինք մօտ 15,000 ոտնաչափ  
բարձրութեան վրա, ուրեմն ակելի վեր, քան  
Փոքր-Մասիսի և Արագածի կատարները և հա-  
տարեա մօտ կազաէկի բարձրութեան: Սակայն  
այդպէս թւում էր միայն այն ժամանակ, երբ  
մենք՝ ներվային շարժման մէջ՝ գործ էինք դնում  
մեր բոլոր ոյժերը, մեր ամբողջ ֆիզիքական և  
նոյն իսկ մտաւոր կարողութիւնը՝ բարձրանալու՝  
և միմիայն բարձրանալու վրա՝ կշռելով նախօ-  
րօք մեր ամեն մի քալը, քննելով ամեն մի ոտնփո-  
խը՝ նրանցից ամենահեշտն ու դիւրինը ընտրե-  
լու համար: Բայց երբ նստում էինք մի քայլ՝  
այդ անհաճոյ զգացմունքը շուտով անցնում էր.  
կրծքի մի քանի լայն, շղանդական ելեէջներ ան-  
ուստ օդ էին մատակարարում անկուշտ թոքերին  
և արագութեամբ կանօնաւորում խանգարված  
շնչառութիւնը: Օ՛, այդ քայլահան հրաշալի հան-  
գիստները... ես երբէք չեմ մոռանանայ նրանց-  
նրանք անպիսի հիացմունք էին պատճառում ինձ,  
որ ես վայրկեանաբար մոռանում էի բարձրանա-  
լու աստիճանի չարչարանքը և ամբողջ հոգով ու  
սրտով զգում այն ծայրագոյն երջանակութիւնը,  
որ միայն մտաշելի է մարդուն այս զեղեցիկ աշ-  
խարհում: Յաւիտեական ձիւնելի միջից ես ձը-  
գում էի հայնացքս դէպի վայր, դէպի իմ ան-

ուսջ բացված ունեզք, անծայրածիր տարածու-  
թիւնը՝ ողորդված արեւի պայծառ ճառագայթնե-  
րով, և թւում էր ինձ, թէ այդ կախարդական  
տեսարանը չէ կարող լինել մի շօշափելի իրակա-  
նութիւն, թէ դա մի դիւթական երազ է, մի ու-  
կի ցնորք, և ես՝ մի անմարմին էակ կապոյտ եր-  
կնքում, մաքուր, ձիւնափայլ ամպերի վրա: Ա՛խ,  
եթէ ես գիտենայի, որ մէկը կը կատարէ իմ վեր-  
ջին կամքը՝ ես կը կտակէի, որ իմ գիտկս տա-  
նեն դէպի հայրենի լեռան այդ ձիւնոտ բարձուն-  
քը, ուր թիկն առած որ և է ժայռի՝ ես կարո-  
ղանայի սառած աչքերով միշտ նայել ու նայել  
այդ երազ-տեսարանին, այդ ցնորական երկնա-  
յին պատկերին, մինչև որ անկուշա աչքերս  
ձածկվէին յաւիտենական ձիւներով, թաղվէին  
մշանջենաւոր սառոյցների տակ:

Իմ անսահման քարձրութիւնից ես նայում  
էի դէպի վայր և առաջին անգամ չէի կարողա-  
նում ըմբռնել, թէ ուր եմ և ինչ եմ տեսնում իմ ա-  
ռաջին: Հեռու, հեռու արեւելքում Սիւնեաց կա-  
պուտակ լեռները չեն արդեօք նրանք, որ ձրգ-  
վում են, թեթև մշուշի շղարշով սքողված, այնպէս  
երկար, այնպէս անվերջ դէպի հարաւ ու կորչում  
անհուն տարածութեան մէջ՝ միանալով երկնքի ու  
երկրի հետ. սպիտակ, թեթև, գեղեցիկ ամպեր, ո՞վ  
գիտէ, գուցէ, նաև ձիւնեղէն ձածկոյթներ, տեղ-  
տեղ փայլում են նրանց կատարներին. տեղ-տեղ  
որ և է ըմբոսս լեռնազագաթ ճեղքել, գուրս է  
հանել իր գորշ-կապուտակ գլուխն այդ ամպերի  
միջից ու իր՝ հեռու դիտարանից տինազիչ նա-

յաւում է ծերուկ նահապետին: Արմաքսը չէ տրդեօք  
տայն երկայն կապուտակ գիծը, որ սակի փոշխով  
լցոյժած լայնալիւն հովառում անհամար պտոյտներով  
գննում, անյայտանում է հեռու, հազիւ նշմարելի  
հօրիզօնում. քմահան գետը իբ զձանկ գազարում-  
նեքի մէջ ամուր գրկել է կանաչագեղ, սիրուն  
ձաբանդներ, դուրջ նաև այգիներ ու պարտէզ-  
ներ, ու իբ յանկարծական ոլորումների տեղում  
երբեմն երբեմն փայլում ու պսպղում է, յղկոյժ  
պողպատի նման, արևի պարզ շողերի տակ: Փոքր  
Մասիսը չէ արդեօք այն կլորիկ, սիրուն սարը,  
որ կանգնած է հարաւում իմ գէմ յանդիման և  
ցոյց է տալիս ինձ ամբողջովին իբ նազելի իրա-  
նը, իբ բոլորակ գագաթի վրա բազմած մանրիկ,  
գեղեցիկ բլուրները: Նա, կարծես, ցածրացել է.  
Նա այնքան փոքր է երևում այստեղից, որ թւում  
է, թէ մի նորահաս պատանի է կանգնած հսկայ  
Մերունու տուօ: Իսկ նրանք, հարաւ-արևմուտ-  
քում տարածվալ այն ընդարձակ հովիտը, այն  
լայնեղր գեղեցիկ սարահարթերը, լեռների մէկը  
միւսի ետևից բարձրացած այն անվերջ շարքերը...  
Ի՞նչ աշխարհ է դա... Ա՛, սղջայն քեզ, արիւնտտ  
երկիր, սղջայն քեզ, հարիւր-հազարաւոր մարտի-  
րտաների խորթ-մայր հայրենիք, այդ գու ես փրո-  
ված իմ տուօ. ձեզ եմ ես տեսնում, ով կարմիր  
գաշակը, արցունքով ցօզված լեռներ ու հովիտ,  
այն սև օրերից յետոյ թնչպէս կարողանում էք  
դառն այդպէս անտարբեր նայել կապոյտ երկրն-  
քին, թնչպէս կարողանում էք դեռ փայլել ու  
պննովել պայծառ առեփ տակ... Լացէք, սև հա-

գէջ, խաւար ու սուգով ծածկեցէք ձեր դէմքն-  
այդ աւելի կը վայելէ ձեզ, իսկ ուր թափուր էք  
ձնացել հայից, ուր այլ չեն լսվում արևաբացի  
կանուխ ժամերին հայ շինականի դաշտային ա-  
նոյշ, քաղցր սաղերը, ուր դուք դարձել էք ա-  
արիւնածարաւ քիւրդի ու թիւրքի լոկ որջեր  
միայն՝ փուլ սկէք, լեռներ, չորացէք գաղտեր, և  
դու, մյ հովիտ, ուր արագէս ուրախ ժպտում է  
արևն, ծածկվիր ու թաղվիր նոցի, մոխրի տափ...

XXXI

Ժամի երեքին մօտ էր արդէն, որ բեռնա-  
կիր քիւրդերը կանգ առան մի տեղ, ձիւների  
վրա, և յայտնեցին, որ այլ ևս առաջ գնալ չեն  
կարող: Նայելով նրանց գունաթափ, սնքած դէմ-  
քերին, նրանց տենդային փայլով վառվող աչքե-  
րին, անկարելի էր պահանջել, որ շարունակեն  
ճանապարհը, թէպէտ և մենք յոգնած չէինք և կարող  
էինք դեռ ևս առաջ գնալ: Մեզ համար ձեռնտու էր,  
որքան կարելի է, այդ օրը վեր բարձրանալ և, եթէ  
հնար է, գիշերել ուղիդ լեռան գագաթի տակ, որ-  
պէս զի հեռուեալ արաւօտեան մինչև ժամի 10-ը,  
երբ Մասիսի գլուխը սո՛վորաբար ազատ է լի-  
նում ամպերից, կարելի լինէր բարձրանալ կա-  
տարը և ապա նոյն օրը իջնել Սարդար-Բուլախ  
Սրարատի ճանապարհորդների միաբերան. վիա-  
յաւթեամբ՝ վերելքի աջողութեան առաջնակարգ  
պայտաններից մէկն է դա: Բայց և արագէս մենք  
ստիպված էինք տեղի տալ քիւրդերի՝ բարբարացի  
պահանջի առաջ և կանգ առնել ու գիշերելու փոքր

ի շատէ յարմարաւոր տեղ ուրոնել մեզ համար: Յարմարաւոր տեղ, բայց մի կարող է գտնել մի աշդպիտի բան Մասիսի ձիւնոտ բարձունքների վրա, ուր գիշերում են միայն, ժայռերի խոռոչները մտած, երկնքի հազազիւտ թռչունները և առելի ևս հազազիւտ վայրի այծերը: Զառիվերը այնքան թեք է, որ նրա վրա մի քանի քայլ տնդամ հարթ-հաւատար տեղ գտնել անհնար է և մենք էլի քիւրդերին ենք պարտաւան, որ երկար որոնումներէց յետոյ, գտնվեց մի փոքրիկ տարածութիւն, ուր մի քանի հողի միասին կարող էին ձգվել ու պառկել: Տարաբախտաբար այդ տեղը լողորովին բաց էր և անպաշտպան արևմտեան քամուց, որ նորից բարձրացել էր և կատաղութեամբ փչում ու իր սառեցնող շնչով մանում էր մեր ոսկրների մէջ:

Քիւրդերը վայր գրին մեր ծանրոցները և սկսեցին արագ-արագ իջնել սարից՝ գիշերելու մեր վրանի տակ, որ մենք թողել էինք անշարժ իր նախկին տեղում: Մնալ մեզ մօտ-նրանք չէին կարող, որովհետև նախ գիշերելու մի այլ յարմարաւոր տեղ չը կար նրանց համար և յետոյ՝ չունենալով ցրտից պաշտպանվելու ոչ մի միջոց՝ նրանք կարող էին ստուչել այդ գիշեր: Հեռակալ առաւօտեան նրանք նորից պէտք է բարձրանային մեզ մօտ՝ ծանրոցները վայր տանելու, երբ մենք արդէն իջած կը լինէինք: Մասիսի դազաթից: Մեզ մօտ մնացին միայն քիւրդ առաջնորդ Անմէր-բեկը, ծերունի Հասան և մի-երկու ուրիշ քիւրդեր, որոնք տաք վերաբերմանը ունէին և մեզ

հետ միասին առաւօտեան պէտք է բարձրանային սարի գլուխը:

Սկզբեց մի եռանդոտ աշխատանք կարգի բերելու մեր հոյակապ ննջարանը. մի քանիսը մեզանից շատաշատաջ քերում էին ձիւնը, որի տակից դուրս էր գալիս սև, աւազախառն սառոյց, միւսները աշխատում էին հաւասարեցնել տեղը՝ հրելով ձիւնի և աւազի կոշտերը վերևից դէպի վայր, մի այլ խումբ մանր ու խոշոր քարեր կրելով չորս կողմից՝ յանձնում էր ուսւ ինժեներ հուլանդին, որ արհեստական պատե՛նէջ էր կանգնեցնում՝ պաշտպանելու ննջարանը քամու ազդեցութիւնից, և վերջապէս մի-երկու հոգի էլ զբաղված էին այդ ձեռաց թիղած պատուարի ծակերը... ձիւնի սուադով ծեփելու աշխատութեամբ: Մի քանի քայլ մեզանից հեռու, ժայռերի խոռոչի մէջ, մեզ մօտ մնացած քիւրդերը արդէն կրակ էին արել և դրել վրան ձիւնով լի ահագին թէյամանը:

Երբ մի-երկու ժամից յետոյ թէյը պատրաստվեց և մենք, հաստ վերաբեռնների ու եսփընջիների մէջ փաթաթված, կուչ եկանք իրար մօտ բրէզէն տի վրա, օ, ինչպիսի անմահական նեկտար թւաց մեզ թիթեղեայ կապոյտ ընդունակների մէջ ածած այդ պղտոր, սև թէյը, որ մենք ծնում էինք աւելի մեծ ախորժակով, քան դուցէ երեխան իր մօր կաթը: Մի կենդանաբար, դուրեկան ջերմութիւն նրա հետ միասին՝ ստորածվում էր ստուած մարմնիս ամենահեռաւոր մասերը և ես մաքուս օրհնում էի քաջարի Ման

մէջդին, որ մի այդպիսի մեծ բաւականութիւն պատճառուեց ինձ: Բայց բանն այն է, որ ոչ միայն նոյն, այլ գոնէ փոքր ինչ նման բաւականութիւն չէր կարող պատճառել մեզ ուտելիքը. հացը,— մենք նրանում վերցրել էինք լաւաշի ահագին պաշար,—էլի մի կերպ տանելի էր, թէև նա էլ քարթուացել և կորցրել էր համը, բայց, Տէր-Աստուած, Մօսկվայի այդ ապխտած քար-երշիկը և շվէյցարական աղառած—պանիրը, որ ստուել ու փշրվում էր աւազի նման,—նրանք ուղղակի ներս չէին գնում իմ կոկորդից և ես ստիպված էի թէյով ու հացով բաւականանալ: Ամբողջ օրերի տաժանելի վերելքից յետոյ այդպիսի սնունդը շատ քիչ էր, ի հարկէ, մարմնի համար. բայց Մասիսի ձիւնների մէջ տարաբախտաբար ոչ ոք չէր նախատեսել անկոչ հիւրերի գալուստը և համեղ խորտակներ չէր պատրաստել մեզ համար. իսկ մենք նախօրօք հեռատես էինք եղել այնքան միայն, որ յոյսերս բոլորովին չէինք դրել լեոնային այդ աներևոյթ հիւրընկալների վրա և գէթ հաց ու թէյ վերցրել էինք մեզ հետ: Ասենք, այդ փրկարար թէյն էլ հետեւալ օրը... գողացան կամ վերջացաւ,—առաջին հանգամանքի վրա պնդում էին մեր տնտեսական կառավարիչները, իսկ երկրորդի վրա՝ քիւրդերը,—և մենք մնացինք ատամներս սրած ժայռերին նայելով... Ջարմանալին այն էր, որ չը նայելով—10 աստիճան ցրտին՝ ոչ ոք մեզանից, նոյն իսկ մեր ոռւս ընկերներից, չէր մօտենում օդի, կոնեակի և այլ ոգելից ըմպելիքների շէրին, որոնց ատատ պաշարը այս ու այն

տեղերում թափթփված էր ձիւների մէջ՝ առանց  
սիրտիանք պատճառելու որ և է մէկին:

XXXII

Երեկոն վրա հասաւ. քամին, որ իր առան-  
ձին քմահաճոյքներն ու երաժշտական նուազներն  
ունի Մասիսի բարձունքներում, դադարեց նորից  
և առժամանակ հանգիստ թողեց մեր մարմին-  
ներն. ու լսելիքը. արևը մտաւ լերան գագաթի  
ետևը. երկու Մասիսների հսկայական սառուե-  
րները, երկուսն էլ կոնսաձե, երկուսն էլ բոլորովին  
համան միմեանց, միայն մէկը միւսից փոքր ինչ  
մեծ, կողք կողքի ձգվեցին իրար մօտ արևելքում  
և իբրև զոյգ եղբայրներ, պատրաստվեցին հա-  
զբատանալու Արաքսի հովտի հարազատ ծոցում,  
դնելով դուռները գետի եզերային կանաչագեղ  
փափուկ բարձերի վրա: Քիւրզերը, բնութեան այդ  
զաւակները, հեռեցին լեռների օրինակին և մտած  
իրար հետ այն ժայռախորշը, որ մեզ ծառայում  
էր իբրև խոհանոց, լոեցին ու կտրեցին աղձուկ-  
խօսակցութիւնը: Մենք ևս խիտ առ խիտ պառ-  
կեցինք մեր ոչ բօլորովին ուզղայառակ ու անձուկ  
ննջարանում և զանազոս ձևի ու կերպարանքի հաստ  
շորեր ձգած վրաններս՝ պատրաստվեցինք քնելու  
երկնակամարի կապոյտ ծածկոյթի տակ: Նստած  
մնացին տեղերում նրանք միայն, որոնց մէջ բնու-  
թեան տեսարանների սէրը, երևում էր, գերակշիռ  
էր աւելի, քան հանգստանալու ցանկութիւնը: Նւ  
արժէր դիմադրել այդ ցանկութեանը:— Մարդկա-  
յին աչքով անգրկելի լայն, անսահման տար-

ծուլութիւն, հեռու արեւելքում ուղղաձիգ, անվերջ լեռնաշղթայ, որ ամբողջովին լողում է արեւմտի ճառագայթների մէջ, Մասիսի երկու կողքերից ուղիղ դէպի հարաւ ձգվող երկու անվերջ-երկայն, լայն, ծոցաւէտ հովիտներ, որոնցից մէկում երեկոյի դեռ ևս թափանցիկ օսկեգոյն-սպիտակ մշուշի մէջ Արաքսն է գործում իր մանուածոյ պտոյտները, իսկ միւսի մէջ հազիւ նշմարվում է մի անծանօթ գետակ, որ քերելով լեռան արեւմտեան ստորոտները, ձգվում է ուղիղ, ինչպէս նետ, դէպի հարաւակողմի հեռու լեռները ու կորչում նրջանց արանքում. արեւմուտքում՝ Բայազէտի և Մակուի լեռնաշարքերի խտացած, գորշ ստուերում ազատօրէն փոխած սարահարթեր, որոնց վրա տեղ տեղ միայն, ով գիտէ, լեռների որ բացվածքից ընկած փայլուն հսկայական լեզուակներ հասնում են մինչև հովտի բարձր եզերքը, և նորից լեռներ, բլուրներ, դաշտեր, ձորակներ, անծանօթ, անյայտ, գուցէ նաև անանուն.— ո՞վ կը տար մեզ այս ամենը ուրիշ անգամ. ո՞վ կը դնէր մեր առաջ Փոքր Մասիսի այնքան գեղեցիկ կազմուածքը, որ այդ անհուն տարածութեան մէջ նազանքով նստած, նորահարօթի նման, զարդարել էր իր գլուխը հարսենական կարմիր-վարդագոյն քողով ու փայլում և վառվում էր արեւմտի վերջին շողերով: Մօտիկ, մի քանի տասնեակ քայլ հեռու մեզանից, հարթ-հաւասար սպիտակ մակերևոյթով փոխած էր մեր առաջ մի հսկայական ձիւնաբան, որ սկզբելով լեռան գագաթից՝ ահաւոր թեքվածքով իջնում էր դէպի մեր կայանն. և անցնելով մեր

մօտից՝ կորչում լերան ստորին կողերում: Ջիւ-  
նարանի արեւելեան եզերքին, այնտեղ, ուր նա  
անշուշտ իջնում էր դէպի Թաքալթուի կառարը,  
կանգնած էր ժայռերի մի անազին կուտուածք,  
որ իր սրածայր գլուխը թեքած փոքր ինչ դէպի  
հիւսիս, երեկոյի խոր լուսթեան մէջ, երևում է,  
պատրաստովում էր մեզ նման նինջ տոնելու: Եւ  
որքան ես նայում էի այդ չքնաղ պատկերին, այդ  
դիւթական տեսարանին, այնքան աւելի ուզում  
էի չը քնել և նայել, նայել անվերջ, մինչև լոյս:

Եւ ես նայեցի մինչև լոյս...

Գիշերը իջաւ,—պարզ, խաղաղ, անշուշտ գի-  
շեր. կապոյտ, խոր երկնքում, ուր չէր երևում  
ամպի ոչ մի նշոյլ անգամ, վառվեց լուսինը և իր  
սպիտակ փայլուն ճառագայթները սփռեց մերձա-  
կայ ժայռերի ու ձիւների վրա: Աստղերի կենտ-  
կենտ աղամանդներ, ցիր ու ցան երկնակամարի  
այս և այն կողմում, ուղղեցին իրանց շողերը  
դէպի Մասիսի բարձրունքը. ոսկեփայլ Իւպիտե-  
րը կանգնեց ուղիղ Փոքր-Մասիսի գագաթին.  
փոքր ինչ հեռու նրանից, արևմուտքում, իր դե-  
ղին-գունաթափ փայլով պսպղաց մի այլ անծա-  
նօթ մոլորակ. հեռաւոր ու մերձաւոր լեռներ՝ ա-  
մենքն էլ մնացին տեսանելի, միայն ընդունեցին  
ուրիշ, խորհրդաւոր-մշուշային դէմքեր: Մերձակայ  
վիթխարի ձիւնարանի անաւոր թեքվածքը սկսեց  
պսպղալ ու փայլել լուսնի լոյսի տակ. ժայռերն  
ստացան տարօրինակ կերպարանքներ... Ահա մէ-  
կը նրանցից, մի քանի կանգուն հեռու ինձանից,  
իբրև մի հսկայ առիւծ, մեկնեց ձիրաները դէպի

առաջ և թաւուտ գլուխը դրեց թաթերի վրա. նա քնեց խաղաղ, անշարժ ու անձայն. ահա մի այլ տեղ, մի քանի քանի քայլ հեռու նրանից, անդրըջըհեղեղեան մի անճոռնի տիտան կախեց ահապին ցուկը ձիւնարանի վրա և սկսեց հարդարտ շարժել է նրան մէկ դէպի ձիւնարանը, մէկ դէպի ժայռերը. ահա մի ուրիշը՝ աւելի հեռու՝ վիթխարի արծիւ թէ մի այլ գիշատիչ թռչուն՝ լայն բացեց հուժկու թևերն և սրածայր կտուց—ժանիքը մեխեց զոհի մարմնի մէջ: Խոր, լուռ մեռելային գիշեր. քունս չէ տանում, գլուխս այրվում է, երեակայտութիւնս գործում է անընդհատ... Ես երկար նայում եմ արծուին ու զոհին. նայում եմ և իմ մտքիս մէջ ծնունդ են առնում հազարաւոր նման պատկերներ: Եւ ահա յանկարծ ականջիս հասնում են հանդարտ ոտնաձայներ. կարծես մէկը շրջում է ձիւնի վրա. հայեացքս ձգում եմ ձիւնարանին և ամբողջ մարմնով մնում քարացած: Մասիսի գագաթից, սպիտակ, ահաւոր թեքուածքի վրայով, կամաց-աներկիւղ իջնում է մի ըստուեր, — պարթևահասակ մի թիկնաւէտ ծերունի. Սպիտակ, երկար, գանգուր վարսեր ծածկում են են նրա վեհ գլուխը. մարմարեայ լայն ճակատը փայլում է, իբրև մաքուր փղոսկր, գունաթափ այտերը եղերաւորված են ձիւնափայլ, փառահեղ մօրուբով և միայն թաւուտ-սպիտակ յօնքերի տակից վառվում են զոյգ շողշողուն աչքեր, ինչպէս երկու բոց-կրակներ: Ծերունին ձգել է իր վրա մաքուր սպիտակ քղամիտ և վեհ ու հանդարտ իջնում է սարից: Ահա նա անցաւ դէպի

ձիւնարանի եզերային քարակոյտն ու կանգնեց  
այնտեղ. յենված ժայռերին՝ նա վայր է նայում.  
Նա նայում է դէպի Արաքսի հովիտը, որ արծա-  
թի փայլման մէջ փոփած է նրա առաջ: Ինձ թը-  
ւում է, որ նա երկար, շատ երկար կանգնեց այն-  
տեղ և երբ նորից դարձաւ դէպի յետ՝ կախել էր  
գլուխը լայն կուրծքի վրա և նրա մեռելային  
գունաթափ դէմքից գլորվում էին բիւրեղ—ար-  
ցունքներ: Նոյն վեհ, հանդարտ քայլուածքով ծե-  
րունին անցաւ ժայռերի վրայով իմ առաջից դէ-  
պի մի այլ ձիւնարան, որ փոփած էր լեռան ա-  
րևմտեան ուռուցիկ գաւակի վրա. կանգնելով նը-  
րա մէջ տեղում՝ ծերունին ուղղեց իր դէմքը դէ-  
պի Վասպուրականի հեռաւոր լեռները և ինձ թը-  
ւաց, որ նրա լայն ուսերը ջղաձգաբար վեր ու  
վայր են շարժվում. ապա նա դարձաւ դէպի հա-  
րաւ՝ րօպէսկան մի ակնարկ ձգեց Մակուի սա-  
րերի խառնիճաղանճի վրա և յետ եկաւ նորից:  
Չիւնապատ ժայռերի վրայից, հանդարտ ոտնա-  
ձայնով, ծերունին ուղիղ գալիս էր դէպի ինձ.  
Իմ սիրտս բաբախում էր ուժգին, կարծես, ու-  
զում էր դուրս թռչել տեղից: Մագերս, իբրև  
փուշ, ցցվել էին գլխիս վրա, ահաւոր սարսուռ  
ցնցում էր մարմինս: Ահա ծերունին հասաւ այն  
քարերին, որի ետևում նստած էի ես, ու կան-  
գնեց իմ առաջ: Լուսնի փայլը ուղիղ ընկնում էր  
նրա ձիւնափայլ մազերի, նրա մարմարեայ դէմքի  
վրա. ծերունին նայեց ինձ այնպիսի տխուր, այն-  
պիսի անփարատ ցաւից մորմոքող աչքերով, որ  
նրա հայեացքը շամփրեց իմ սիրտս ու սուր նե-

տի նման թափանցեց հոգուս խորին խորքերը:  
Ես ճանաչեցի նրան. երկիւղը վայրկենապէս չբա-  
ցաւ իմ սրտից:

—Ա՛հ, Մասեաց Ոգի՛ն ես դու, անգին ծե-  
րու՛նի, ճչացի ես յանկարծ ու շնչարգել վեր թը-  
ռայ տեղիցս գրկելու նրա ոտները... Բայց ծերու-  
նու՛ին արդէն անյայտացել էր և ես բօպէական  
քնից արթնացած՝ ոչինչ գրկեցի...

### XXXIII

Ընկերներս զարթեցին, երբ այգը բաց-  
վում էր:

—Ա՛խ, ինչ գեղեցիկ է, բացականչեց մէկը,  
քնաթաթախ աչքերը տրորելով:

—Ո՛րպիսի հրաշալիք...

—Օ՛, չքնաղ պատկեր..

Ընկերներս իրաւունք ունէին. հեռու հօրի-  
գօնը Զանգեզուրի և Ղարաբաղի լեռների բարձր  
շարքերի վրա, նրանց ամբողջ երկարութեամբ,  
սկսած Գեղամայ բարձունքներից մինչև Նախիջե-  
ւանի իջուածքները, շառագունել էր և այդ հսկա-  
յական դեղնակարմիր շերտի կենտրօնը, մի քանի  
վերստ տարածութեամբ, ուղիղ մեր դէմ յանդի-  
ման, վառվում էր բոսորային ցոլքերով: Սակայն  
այն կէտը, որտեղից պէտք է ծագէր արևը, յայտ-  
նապէս գեռ չէր երևում: Ակնդէտ նայում էի ես  
մի կամայական կէտի և ահամայ հիանում գոյնե-  
րի այն տարօրինակ խաղով, որ նկատվում էր  
հօրիգօնի ամբողջ երկարութեան վրա և առանձ-  
նապէս նրա կենտրօնում: Իւրաքանչիւր բօպէ

գոյները փոխում էին իրանց տեղերը. ամենաստորին կարմիր քրքումի վրա շարված էին վարդագոյն, դեղնակարմիր, նարնջի, մուգ-մանիշակագոյն շերտեր, որոնք փայլում ու ցոլում էին, անընդհատ դէպի վեր, դէպի բաց կապոյտ երկինքը բարձրանալով: Ընկերներս տաք-տաք վիճում էին գոյների քանակութեան մասին. մէկը համարում էր ծիածանի բոլոր հիմնական գոյներից զատ՝ նաև նրանց նրբութիւնները: Ես չէի մասնակցում վէճին և հայեացքս ուղղած դէպի վայր՝ դիտում էի բնութեան մի այլ հազուագիւտ երեւոյթ: Երկրի օդեղէն հանդերձը ակնյայտնի կերպով երկու մաս էր բաժանված. վերին մասում երկինքը՝ լուսաւորված այգի վառվուռն ցուքերով, հետզհետէ աւելի պարզվում ու բացվում էր. աստղերը վաղուց թաղվել էին նրա խորքում և միայն իր ոսկի փայլից զրկված՝ գունաթափ Իւպիտերն էր, որ հազիւ նշմարելի կերպով առկայծում էր արեւուտքում: Մասիսի վերնակողերը, ուր գտնվում էինք մենք, նոյնպէս ստացել էին իրանց բաժինը այգի կենսաբեր շոգերից. ևս պարզ տեսնում էի մեր շուրջը գտնվող բոլոր առարկաները, — ձիւն, ժայռեր, քարակոյտեր, որոնք կորցրել էին արդէն գիշերային իրանց անհեթեթ կերպարանքը. մերձակայ լայնածաւալ ձիւնարանը փայլում էր իր անբիծ մաքրութեամբ. բայց ներքևում, մթնոլորտի ստորին մասում, դեռ ամեն ինչ ծածկված էր թանձր խաւարով. չէին երևում ոչ Մասիսի ստորոտները և ոչ Արաքսի հովիտը: Եւ խաւարը այնտեղ անհանգիստ

էր. կարծես վախեցած արևի մօտալուտ ծագում-  
մից, նա խառնվում, գալարվում էր հովտի մէջ հրա-  
կայահան ոլորապտոյտ զանգվածներով և նրա վերին  
մակերևոյթի վրա, մեղանից փոքր ինչ ցածր, ե-  
րևում էին աղջամուղջի սև-մոխրագոյն հրէշային  
լեզուներ, որոնք բարձրանալով մթնոլորտի վե-  
րին լուսաւոր մասը՝ ցրվում, չքանում էին նրա  
մէջ: Խաւարի այդ անհանգիստ խառնուածքը,  
նրա քմահաճ վիթխարի պտոյտները հովտի ամ-  
բողջ տարածութեան մէջ՝ ինձ վրա թողնում էին  
այնպիսի տպաւորութիւն, որ կարծես ես ներկայ  
էի արարչագործութեան լեզենդային քասօսական  
օրերին, երբ դեռ լոյսը նոր էր ստեղծվում:

— Ծագում է, արևը ծագում է, նայեցէք,  
նորից լավեցին մի քանի բացականչութիւններ  
իրար հետ և ես նորից ուղղեցի հայեացքս դէպի  
արևելք:

Ոչ այն կէտից, ուր ես ակնդէտ նայում էի  
առաջ, այլ մի քիչ հեռու՝ դէպի հարաւ նրանից՝  
կարծես առաջ հրելով լեռնային բարձր կատար-  
ները և ինքն իրան վեր-վեր ձգելով ու խաղա-  
լով՝ արագ-արագ բարձրանում էր մի հրաշէկ,  
բոսորային գունդ, ցերեկի աննման լուսատուն—  
ամենագեղեցիկ ստեղծվածը ամբողջ տիեզերքում:  
Առաջին ոսկեզէնիկ ճառագայթը ընկաւ ուզիդ իմ  
աչքերիս մէջ, երկրորդը փայլեցրեց մերձակայ  
ձիւնարանի սպիտակ, փոքր ինչ ուռուցիկ կուրծ-  
քը, երրորդը լուսաւորեց բազալտային մի վիթ-  
խարի քարաժայռի ճակատ, որի հրաբխային  
խառնուածքի մէջ այս ու այն տեղում ցրված

բծերը սկսեցին պսպղալ, ինչպէս առաւօտեան ցօղի գոհար—կաթիլներ: Եւ վեր կացայ տեղիցս և բարձրացայ մի ցածրադիր քարակոյտի գլուխ, որ ծածկում էր մեզանից Մասիսի գագաթը: Եւ ես չը զղջացի, որ հեռացայ տաքացրածս տեղից. լերան կատարի արևելահայեաց ձիւնարանի մի հսկայական բոլորակ կտոր, որ երևում էր իմ կանգնած տեղից, վառվում ու փայլում էր, ինչպէս մի առասպելական վարդ՝ ինչպէս մի կախարդական կարմրաթուշ խնձոր՝ կախված երկնքից: Ուզիդ դագաթի տակ, փոքր ինչ հարաւ վարդ—ձիւնարանից, այժմ այնպէս պարզ, այնպէս մեկին երևում էին խրոխտ քարաժայռեր՝ թեթևակի լուսաւորված գունաթափ—կարմիր շողերով՝ որ մի վայրկեան կասկած շարժվեց իմ սրտում—պիտի կարողմանք արդեօք մենք յաղթահարել այդ հսկաներին: Քարակոյտի բարձրութիւնից իջնելիս, իմ հեայեացքս ընկաւ Փոքր-Մասիսի գագաթին. նա դեռ ևս քրնած էր կանուխ առաւօտի նոր-նոր պարզվող խաւարի մէջ. Ալաքսի հովիտը դեռ լիքն էր գիշերային ստուերներով և միայն ինքը գետն էր, որ, երևի, անքուն ինձ նման ամբողջ գիշեր՝ այժմ յոգնած և ուժասպառ հազիւ հազ փայլում ու դանդաղ գալարում էր իր անվերջ պտոյտները...  
Երազ—առաւօտ, արգեօք մի անգամ էլ դու պէտք է կրկնվէս իմ կեանքում:

XXXIV

Նեկտար-թէյով նորից կազդուրելով և տա-

**քայնելով** սառած մարմիններս,—ցուրտը հասնում էր—10 աստիճանի,—մենք շտապեցինք ճանապարհ ընկնել դէպի վեր՝ կէսօրին Մասիսի գագաթը հասնելու յուսով: Մի խումբ մեր ընկերակիցներին՝ բաղկացած վեց հոգուց՝ Մահմէդ-բէկի և մի քիւրդ հրացանակրի հետ միասին, արդէն ճանապարհ էր ընկել մեզանից մի քառորդ ժամ առաջ և արագ-արագ բարձրանում էր ժայռերի ու ձիււների միջով դէպի վեր. շուտով նա անյայտացաւ մեր աչքից՝ անցնելով ցիրուցան քարակոյտերի ետևը: Մեր խումբը՝ բաղկացած նոյնպէս վեց հոգուց՝ գնում էր կամաց ու դանդաղ՝ ժամ առաջ ոյժերը չը սպառելու զգուշութեամբ: Բայց որքան էլ կամաց գնայինք և որքան էլ խնայէինք մեր ոյժերը՝ այնու ամենայնիւ նրանք սպառվում էին այնպիսի թաւալազլոր արագութեամբ, որ արդէն մի ժամից յետոյ մեր ընկերներից մէկը, երիտասարդ ոռւս ուսանող Չուբարով, որ նախընթաց օրը փոքր ինչ տկար էր ըզզում իրան, ստիպուած էր բոլորովին կանգ առնել. նա ցանկութիւն յայտնեց վայր իջնել և ըսպասել մեզ գիշերային մեր վերջին օթեանում, ուր մենք թողել էինք, մի քանի քիւրդերի հսկողութեան տակ, մեր բոլոր իրերը: Հիւանդ ընկերին թոյլ տալ՝ որ մենակ վայր իջնի՝ անհնար էր. սով կարող էր գուշակել, թէ ինչ կը պատահի նրան լեռնային ամայի ժառուտներում, ուր ամեն մի քայլափոխում նա կարող էր ենթարկվել վտանգի. ուստի մեզանից մէկը՝ բժիշկ Մ. Շտրէյխեր՝ յանձն առաւ ուղեկցել հիւանդին մինչև օթեանը՝

չը մոռանալով բժկի կոչումը նաև Մասիսի ձիւ-  
նապատ բարձունքներում:

Թող ներէ ինձ բժիշկ Շարէյիէր, եթէ ես,  
առիթից օգտվելով, մի-երկու խօսքով շօշափեամ  
նրա հազուադիւտ համեստութիւնը: Մի այդպիսի  
վերին աստիճանի համակրելի անձնաւորութիւն  
ես շատ քիչ էի տեսել իմ կեանքում. եռանդոտ,  
խոհուն, անսահման-բարի, անձնազոհ՝ հրէա բը-  
ժիշկը, կարծես, բաղկացած էր միմիայն զգաց-  
մունքներից և ամենքի վերաբերմամբ վերին աս-  
տիճանի ուշադիր՝ ամենևին ուշք չէր դարձնում  
իր անձնականի, իր առողջութեան, իր յարմա-  
րութիւնների վրա... Գուցէ միայն հրէա և նրա  
նման ազգերի մէջ կարող են ծնվել այդպիսի  
փայլուն անձնաւորութիւններ, որպէս հակակշիռ  
ընդհանուրի եսասիրութեան: Նայելով երբեմն  
այդ բժկին, որ սառած, դողդողացող ձեռքերով  
որ և է դեղ կամ կերակուր էր պատրաստում ար-  
շաւախմբի հիւանդ անդամներից մէկի կամ միւսի  
համար՝ ես յաճախ մտածում էի,—ինչպէս կա-  
րող է մի ժողովուրդ, որի մէջ կան այդ տեսակ  
ճանմարմին էակներ», մնալ դեռ հալածական,  
ցրված ուրիշի դռների առաջ, խեղճ ու անհայրե-  
նիք. չէ որ մի հատիկ այդպիսի անձնաւորու-  
թիւն միայն կարող էր լեռներ շարժել տեղից, մի  
ամբողջ յեղաշրջումն առաջ բերել իր ժողովրդի  
կեանքի մէջ, ինչպէս արեց 1900 սարի առաջ  
նրա հայրենակիցներից մէկը, թէև, դժբաղդաբար,  
ապարդիւն գոնէ իր հայրենիքի համար...

Մենք աւելի ևս դանդաղեցրինք մեր վերել-

քը՝ սպասեցիով որ բժիշկը հասցնէ հիւանդին գիշերային օթեանը և ապա յետ դառնալով միանայ մեր խմբին: Եւ յիրաւի  $1^{1/2}$ —2 ժամից յետոյ մենք նկատեցինք, որ բժիշկը արագ-արագ ճանկըռտում է ժայռերը և շտապում հասնել մեր ետևից: Սակայն շտապելն աւելորդ էր. մենք կանգ էինք առել և այլ ևս չէինք կարողանում առաջ գնալ. բարձրացիլ էր մի այնպիսի ցրտաշունչ, գօրեղ քամի, որ իւրաքանչիւր րօպէ սպանում էր գետին գլորել մեզ. և գետին գլորելը փորձանքներից դեռ ամենաթեթեւը կը լինէր: Մենք բարձրանում էինք վերև մի լայնածաւալ ձիւնարանի եզերքով, որի ողորկ, սառած, փայլուն, առհելի թեքուածքը զարհուրանք էր ազդում ամենքին: Տեղ-տեղ մենք ստիպված էինք, ալպեան գաւազանի օգնութեամբ, կոխել նոյն խսկ նրա ափերը՝ խուսափելու համար ահագին ժայռակոյտերից. և եթէ քամին վայր ձգէր ու քշէր մեզանից մէկն ու մէկին դէպի ձիւնարանը, այն ժամանակ խմբի մնացած անդամների զարհուրած մտքի մէջ մի տձև գնդակի արագութեամբ գլորվելու տրտուր յիշատակը միայն կը մնար այդ բաղդաւոր բնկերից: Առանձնապէս կանգ առնելու վրա պընդում էր Գլասսէկ, Թիֆլիսի դիտարանի կառավարիչը, և խորհուրդ էր տալիս գոնէ փոքր ինչ սպասել, մինչև որ քամին դադարի: Եւ ուրիշ կերպ անհնար էլ էր վարվել. մենք հասել էինք մի այնպիսի տեղ, ուր մեր առաջ, բարձր աշտարակների նման, ցցւել էին Մասիսի գագաթի տակ շարված ահագնատեսիլ քարածայռերը, և մենք

պէտք է բարձրանայինք նրանց գլուխը... **Կազմ**  
ժայռերին հասնելու համար հարկաւոր էր մօտ  
15—20 քայլ անցել սարսեցնող ձիւնարանի վրա-  
յով: Փոթորկի այդ ահաւոր ժամին, երբ մենք  
ժողովում էինք մեր բոլոր ոյժերը՝ ոտքի վրա  
հաստատուն կանգնելու համար, թի սիրտ կանէր  
մագլցել ժայռերի գլուխը կամ ոտքը դնել ձիւ-  
նարանի վրա. և զարմանալի էր, թէ ինչպէս էր  
անցել այդ տեղով մեր ընկերների առաջին խում-  
բը, որից մենք ոչ մի տեղեկութիւն չունէինք:  
Անշուշտ այդ խումբն անցել էր այն ժամանակ,  
երբ քամին չէր փչում այսպիսի անողորմ կատա-  
ղութեամբ:

Մենք որոնում էինք մի ժայռ, որի հովանու-  
տակ կարելի լինէր առ ժամանակ պատսպարվել փո-  
թորկից և սպասել այս անակնկալ ձախորդութեան  
ելբին: Բայց այդպիսի պահապան ժայռ չը գտնվեց  
և մենք ստիպվեցանք յենվել միասին ձիւնի մէջ  
խրված մի ցածր ու երկայն ապառաժի, որ մեզ ա-  
մենեւին չէր պաշտպանում քամու սառեցնող շնչից:  
Անցաւ մի ամբողջ ժամ. քամին քանի դնում այն-  
քան աւելի սաստկանում էր. մի երկու կանգուն  
մեզանից հեռու տարածվող ձիւնարանի փայլուն  
մակերևոյթի վրա՝ փոթորիկը բարձրացնում էր  
ձիւնեղէն ամպեր և քշում դէպի լեռան ստորին  
կողերը. արևը թէև փայլում էր բոլորովին պարզ  
ու պայծառ, բայց մենք դողդողում էինք ցրտից  
այնպէս, ինչպէս գիշերվայ կիսին, ձմերային սառ-  
նամանիքների ժամանակ, տանից դուրս արած...  
կենդանիներ: Գլխասէկը հիւանդացաւ. տենդա-

յին սարաուռով նա դողդողում էր ամենից աւելի: Մնալ այդտեղ աւելի երկար անհնար էր, ուստի մենք որոշեցինք վայր իջնել գիշերային օթևանը և այնտեղ սպասել մեր ընկերներին: Ես յայտնեցի, թէ համաձայն եմ իջնել՝ միայն այն պայմանով, որ մնանք այդ գիշեր վերին օթևանում և հետևալ օրն ևս փորձ անենք բարձրանալու. ինձ հետ համաձայնվեցին Եւանգուլեանը, բժիշկ Շտրէյխէր և ինժեներ Դավիդովսկին: Մենք վայր իջանք:

Մի-երկու ժամից յետոյ իջան նաև մեր ընկերները, որոնք մեզանից առաջ էին անցել. նրանք պատմեցին, որ ահաւոր ժայռերն և ձիւնարանի երկիւղալի տեղը, ուր մենք կանգ էինք առել, անցել են թէև դժուարութեամբ, բայց առանց վտանգի. սակայն վերևում, լերան զագաթից մի քանի հարիւր քայլ ներքև, բարձրացել է այնպիսի կատաղի քամի, որ նրանք ստիպուած են եղել թոկով կապվել միմեանցից՝ ձիւնարանը չը գլորվելու համար՝ և առաջ գնալ սողալով գետնի վրա: Սակայն այդ էլ դուրս է եկել անօգուտ և նրանք, համոզելով որ անհնար է այդպիսի եղանակին աւելի ևս բարձրանալ վերև, վճռել են, մեզ նման, վայր իջնել՝ ձիւնարանին զոհ տալով միայն լեհացի բուսաբանի մորթու բաւականին թանգ գտակը, որ նրա ուղեկիցներէից մէկի, կատակաբան Սալադիլովի ասելով, գլորվել է ուղիղ դէպի ս. Յակոբի ձորը և մի բօպէից յետոյ բազմել մի քիւրդ հովուի գլխին, իբրև երկնային ընծայ:

Դժբաղդաբար մեր այդ վեց ընկերները չը

կամեցան միանալ մեր որոշմանը՝ հետևեալ օրէն  
ես փորձ անել բարձրանալու լերան գագաթը՝ և  
մի ժամ հանգստանալուց յետոյ՝ յանձնելով իրանց  
շորերը քիւրդերին, սկսեցին արագ-արագ վայր  
իջնել սարից՝ գիշերը Մարդար-Բուլախի տաք  
վրանում անցկացնելու դիտաւորութեամբ: Վերին  
օթևանում մնացինք հինգ հոգի միայն՝ հիւանդ  
Չուբարովը, Եւանգուլեանը, Շտրէյխէրը, Դավի-  
դովակին և ես: Որքան ուրախ էին այն քիւրդե-  
րը, որոնք իջան վայր մեր ընկերների հետ, և  
որքան տխուր նրանք, որոնք հազար ու մի հա-  
մողումներից և խոստումներից յետոյ՝ համաձայն-  
վեցին մնալ վերին գիշերօթում: Մեզ հետ մնաց  
նաև քիւրդ առաջնորդ Ահմէդ-բէկը:

XXXV

Նոյն անքուն գիշերը, կանուխ առաւօտի  
նոյն հրաշալիքները՝ մի տարբերութեամբ սա-  
կայն, որ նախընթաց գիշերը թէև ցուրտ էր,  
բայց խաղաղ, իսկ այս գիշեր և ցուրտ էր, և  
քամի, որ երբեմն փչում էր կատաղութեամբ ու  
խփում երեսներին ձիւնի ու սառոյցի մանրիկ  
հատիկներ՝ ժողոված մերձակայ ձիւնարանից ու  
ձիւնածածկ ժայռուաններից՝ և երբեմն մեղմանում  
ու խաղաղում խղճալով մի բուն ճանապարհորդ-  
ների, որոնք նրանից պաշտպանվելու չունէին ոչ  
մի հնար: Չը նայելով այս հանգամանքին, օգոս-  
տոսի 21-ին, վաղ առաւօտեան, ժամը 6-ին, մենք  
երեքս՝ բժիշկ Շտրէյխէրը, ինժինէր Դավիդովակին  
և ես, կազմ ու պատրաստ էինք նորից ճանա-

պարօ՞ ընկնելու գէպի վեր և փորձ անելու յաղթել վերջապէս այն հսկային, որ իր վէս գագաթով կանգնած մեր առաջ՝ մարտի օրհասական հրաւէր էր կարդում իր անմատչելի դիրքից— պարզ, կապոյտ երկնքից: Եւ մենք ընդունեցինք հրաւէրն ու առանց նոյն իսկ թէյ խմելու, մի քիչ 20 40 լազ ու գալէտ դնելով գրպաններս՝ ճանապարհ ընկանք: Ա. Եւանգուլեանը դիտմամբ չեկաւ մեզ հետ, որպէսզի մենք հնարաւորութիւն ունենայինք առաց նրան աւելի արագ բարձրանալու. նա սիրալիր կերպով մնաց օթևանում հոգալու մեր կերակրի և մեր վերադարձի պատրաստութիւնների մասին:

Քամին փոքր ինչ խաղաղել էր. երկինքը պարզ էր բոլորովին և նորածագ արևը առատութեամբ սփռում էր իր շողերը Մասիսի վերնակողերի վրա: Երեք ընկերներս, առանց խնայելու մեր ոյժերը, արագ-արագ բարձրանում էինք ժայռերի ու քարակոշկոռների վրայով. առաջից, մի փոքրիկ բեռ ուսած, գնում էր Ահմէդ-բէկը: Երկու ժամից յետոյ մենք արդէն հասանք այն պարսպանման ժայռերին, ուր նախընթաց օրը կանգ էինք առել և որոշել էինք յետ դառնալ: Վեհերոտ զգուշութեամբ անցնելով 15—20 քայլ ձիւնարանի վրայով մենք սկսեցինք մագլցել ժայռերի գլուխը: Ահաւոր ձիւնարանը, որ իջնում էր սարի գագաթից, իր փայլուն, ողորկ թեքվածքով գտնվում էր ուղիղ մեր ոտների տակ. եթէ մեզանից մէկի գլուխը պտոյտ գար այդ բուռներին բարձրութեան վրա կամ ոտըը սայթա-

քէր ու սահէր ժայռից գէթ մի անգամ, նա պէտք է յաւիտեան մնաս բարով անէր և իր ընկերներին, և պայծառ արևին, եթէ միայն ժամանակ ու ցանկութիւն ունենար այդ անելու: Արարատի ճանապարհի ամենադժուար տեղերից մէկն է դա և խուսափել նրանից անհնար է: Նրա աջ կողմից տարածվում է ձիւնարանը, որի վրայով բարձրանալու մասին մտածելն անգամ աւելորդ է—այնքան թեք է նա, կամ գուցէ դրա համար հարկաւոր են առանձին պատրաստութիւններ,—իսկ ձախ կողմից սկսվում է մի երկայն խճալից գառիվեր, որ ձգվում է համարեա մինչև լեռան գագաթը և որի վրայով բարձրանալը թէ երկիւղալի է և թէ տաժանելի: Համեմատաբար ամենից հեշտը և ամենից աւելի ապահովը ժայռերի ճանապարհն է, որով և մենք առաջ էինք գնում:

Երբ գիշերային օթևանից մենք նայում էինք Մասիսի գագաթին, մեզ թւում էր, թէ այդ ժայռերը գանվում են ուղիղ նրա տակ, և թէ հասնել ժայռերին նշանակում է հասնել գագաթին, բայց հիմա, ժայռերի գլուխը բարձրանալուց յետոյ, մենք զարմանքով տեսանք, որ լեռան գլուխը դեռ շատ հեռու է մեզանից և դեռ շատ ոյժ պէտք է գործ դնել նրան հասնելու համար: Սակայն այս հանգամանքը մեղ չը յուսահատեցրեց. կրկնապատկած ուժով մենք սկսեցինք նորից մագլցիլ, կախ ընկնել ժայռերից, յենված մի ձեռքի կամ գաւազանի վրա՝ միւսով քաշել դէպի վեր մարմնի ամբողջ ծանրութիւնը, սողալ օձի նման, գործել ձեռքով, ոտքով, մէջքով, գա-

ւազանով, ինչքան և ինչ կերպ միայն ընդունակ է մաքրու գիւրաթեք մարմինը: Չէ, հրաշալի է այդ մարմինը իր ճկունութեան կողմից և նրան կարող են նախանձովել շատ անգամ այն կենդանիները, որոնք յայտնի են, որպէս լաւ մազլցողներ: Մեր ջանքերը պսակվեցին աջողութեամբ. մի ժամ համարեա անընդհատ ժայռից ժայռ բարձրանալուց յետոյ՝ մենք անցանք վերջապէս այդ դժուար կիրճը և կանգնեցինք մի խճուտ թեքուածքի առաջ: Պէտք էր հիմնաւորապէս հանգստանալ, մանաւանդ որ մեզանից մէկը՝ Դավիդովսկին, որ հագել էր մորթիով աստառած հաստ կիսավերարկու, — Շտրէյխէրը բարակ սիւրտուկով էր, իսկ ես հաստ պիղժակով, — արդէն յոգնել էր և դժուարութեամբ էր բարձրանում. նրա գլուխը երբեմն երբեմն պտոյտ էր գալիս և աչքերը մթնում էին: Նստած ժայռերի վրա ու հանած գրպաններիցս չոր, անհամ դալէտը, որից ես զզուել էի այնքան, որքան Մօսկվայի երշիկից և շվէյցարական սառած պանրից, մենք սկսեցինք նախաձաշել և նայել մեր առաջ բացված տեսարաններին, որոնք, քանի մենք վեր էինք բարձրանում, այնքան աւելի լայն, աւելի հրաշալի էին դառնում: Ես հարց ու փորձ էի անում քիւրդ Մահմէդին, թէ չը կան արդեօք հայաբնակ գիւղեր երկու Մասիսների արևմտեան ստորոտներում, թիւրքա՛յայաստանի կամ Պարսկահայոց սահմաններում, և տխրութեամբ ստիպուած էի լսել, որ այդտեղ չէ մնացել ոչ մի հայ գիւղ. ամենամօտիկ հայաբնակ տեղը Բայազէտն էր, որ

երևում էր մեզ մի հեռուոր սարահարթի վրա՝ մէջքը դէմ տուած լեռներին:

Քառորդ ժամի չափ հանգստանալուց յետոյ, մենք շարունակեցինք ճանապարհը խճուտ շեռնալանջով. նա բաւական երկար, բաւական թեք և բաւական տաժանելի էր. դիտմամբ գործ եմ ասում ես այս «բաւական» անորոշ խօսքը, որովհետև աւելի որոշը գործ դնել չեմ կարող,—վերելքի այդ ամենադժուար ժամերին ես կորցրել էի ժամանակի և տարածութեան գաղափարը, բօպէն ինձ թւում էր ժամ, մի քանի քայլը— ահագին ճանապարհ. և որ ամենից գլխաւորն է՝ մեր շնչառութիւնը սկսել էր դժուարանալ. կարծես մենք տանում էինք դէպի վեր ոչ մեր մարմնի սովորական ծանրութիւնը միայն, այլ ահագին բեռներ. ինձ թւում էր, որ ես լծված եմ մի ծանր սայլի և սայլը անհնարին ուժով քաշում է ինձ դէպի վայր: Մի այլ դժբախտութիւնն այն էր, որ անկարելի էր այդ խճուտ թեքվածքի վրա գոնէ մի րօպէ նստել հանգստանալու, ինչպէս անում էինք մենք յաճախ ժայռերի մէջ,—ծծումբի զօրեղ, անտանելի հոտը լցնում էր իմ քիթս ու բերանս և ստիպում շուտով հեռանալ, փախչել այդ զարհուրելի տեղից: Արիսի և Բրայսի կարծիքով ծծմբային հոտը այստեղ առաջանում է նրանից, որ լերան՝ որձաքարերից բաղկացած զանգվածի մէջ գտնվում են երկաթային ծրծումբի բիւրեղներ, որոնք քիմիապէս անընդհատ լուծվելով՝ արձակում են այդ անտանելի հոտը: Ծծմբային խճուտ տարածութիւնը համա-

ընա բուրոսովին ազատ էր ձիւնից: Հեռանալով  
այդ տեղից՝ մենք նորից ընկանք ժայռերի մէջ.  
դրանք արդէն լեռնագագաթի վերջին արգիլքներն  
էին, որ նա հանդէս էր բերում՝ կանգնեցնելու  
մեր յաղթական ընթացքը. բայց հայրենի լեռնե-  
րի նահապետը շատ է ծերացել և նա չը կարո-  
ղացաւ տանել յաղթութիւնը. 1—1½ ժամից յի-  
տոյ, երբ մենք, գլուխներս կախած, առանց այս  
ու այն կողմ նայելու, շնչասպառ հեկուով, մի  
կերպ քարշ էինք տալիս ոտներս դէպի վեր, լավց  
յանկարծ բծիշկ Շտրէյխէրի ձայնը վերեկից.—

— Ուռն, հասանք, հասանք:

— Ուռն, կրկնեցինք մենք փոքր ինչ ներ-  
քեկից և ոյժ տուինք ոտներին:

Մի քանի բօպէից յետոյ մենք արդէն կանգ-  
նած էինք Մասիսի ձիւնապատ գագաթի ժայռոտ  
շրթունքին:

25—30 քայլ հեռու մեզանից, գագաթի ա-  
մենաբարձր կէտի վրա, խրված յաւիտենական  
ձիւնի ու սառոյցի մէջ, փոքր ինչ թեքված դէպի  
հարաւ- արեւելք, կանգնած էր օդերևոյթաբանա-  
կան կայարանի չորսոտնեայ նեղ ու բարձր փայ-  
տեայ շինուածքը. հարկաւոր էր հասնել նրան.  
բայց դա հեշտ չէր. քամին, որ անընդհատ փչում  
էր ամբողջ ճանապարհին, գագաթի վրա կրկնա-  
պատկեց իր զօրութիւնը. անցնել այդ 25—30  
քայլն առանց օժանդակ միջոցի անհնար էր. գա-  
գաթը ամբողջովին ծածկված էր սառցանման, ա-  
մուր, փայլուն ձիւնի հսկայական շերտով, որ  
զգալի կերպով թեքված էր դէպի արեւելք. մի

անզգոյշ քայլ, քամու մի զօրեղ շունչ՝ և մինք կը գլորվէինք դէպի Մասիսի անյատակ Վիհը—դէպի ս.Յակոբի պատառուածքը, ուստի մեր միջի ամենից աւելի քաջն և անձնագորհը, ի հարկէ, բժիշկ Շտրէյ-խէյը, կապեց մէջքից մի հաստ թոկ, որ մենք վերցրել էինք մեզ հետ, հագաւ երկաթեայ սուր գամերով կօշկատակեր, վերցրեց ալպեան երկու գաւազան և առաջ ընկաւ: Դողդողալով և ջղային թափով խրում էր նա կօշիկներն ու երկու գաւազանները սառոյց-ձիւնի մէջ, իսկ մենք սրտատրոփ սպասում էինք նրա անվեհեր քաջագործութեան ելքին. վերջապէս նա հասաւ կայարանին և քանդելով թոկը մէջքից, նրա մի ծայրը կապեց կայարանի սիւնին. թոկի միւս ծայրը գտնվում էր առաջնորդ Ահմէդ-բէկի ձեռքում: Բռնելով մի ձեռքով պինդ ձգված թոկից, իսկ միւսով ամուր-ամուր խրելով գաւազանը ձիւնի մէջ՝ ես ու Դաւիթովսկին ևս իրար ետևից հասանք կայարանին: Մենք գտնվում էինք արդէն Մասիսի հարաւարեւելեան գագաթի ամենարարձր կէտի վրա...

### XXXVI

Օ՛, անկրկնելի բօպէներ, օ, անմոռաց յիշատակ... Մոլորված, սառած աչքերով ես մի դանդաղ հայեացք ձգեցի հայրենի լեռան բոլորակ, ձիւնափայլ, անբիծ գագաթին, մի այլ դանդաղ ու ծանր հայեացք դէպի վայր, դէպի հայրենի խրճուղի աշխարհը՝ այնպիսի լուռ ու երկիւղած խոնարհութեամբ բոլորված ձերունի լեռան շուրջը՝ ու ծունկ չօքեցի: Մանկութեան վաղուց անհետ

Ջրացած օրերից ես ատում էի արտասուքը. դեռ  
եօթ-ութ տարեկան չարաճճի երեխայ, երբ մայրս,  
որ և է չարութեան համար, հասցնում էր երեսիս  
մի ծանր ապտակ կամ երբ դպրոցում մանկա-  
վարժ—ուսուցչի անողորմ քանոնը կապտեցնում  
էր ձեռքս՝ ես ոչ մի ծպտուն չէի հանում, արտա-  
սուքի ոչ մի կաթիլ չէր երևում իմ աչքերում.  
Ես միայն կրճտացնում էի փոքրիկ ատամներս ու  
բոց-աչքերով նայում պատժողին: Այնուհետև,  
տասնեակ տարիների ընթացքում, կեանքի ամե-  
նադառն ժամերին, իմ աչքերս չեն իմացել ար-  
տասուք. բայց այդ րօպէին մի ծանր հոգեհան  
գունդ բարձրացաւ սրտիցս դէպի վեր ու սկսեց  
խեղդել կոկորդս. աչքերս մթնեցին: Առանց ու-  
շադրութիւն դարձնելու ընկերներիս վրա, որոնք  
զբաղված էին կայարանը բանալով, ես դրի երեսս  
հայրենի լերան սառն գազաթին ու սկսեցի հեկե-  
կալ... հեկեկալ անզուսպ, սանձարձակ, վաղուց  
զսպված արտասուքի այրող դառանութեամբ... Տա-  
րածելով ձեռքերս՝ ես փայփայում էի ծերունի լերան  
սպիտակ վարսերը, քսում էի երեսս նրա սառած  
երեսին, անյագուրդ ազահութեամբ համբուրում էի  
նրա ձիւնեղէն ճակատը, անսահման կարօտով տրո-  
բում էի այտերս նրա սառոյց-այտերին ու խե-  
լագարի նման կրկնում անընդհատ.— ասս, խօսիր,  
իմ անգին, իմ հոգի, իմ խղճուկ... Ասս  
ինձ քո վիշտդ, պատմիր դարերով ամբարված  
ցաւերդ... Երբ սև գիշերին, մռայլոտ ամպեր հա-  
ւաքած գլխիդ՝ հուր ես շաղ տալիս աշխարհի  
վրա ու լուսաւորվում մի խաւար երկիր, ուր սար-

սափահար՝ մահվան երկիւղով բռնված դողում ենք մենք խաւարի անեղ ճնշումից, աստ, չե՞ս ուզում արդեօք դու վառել քո բոց—կրակով վախկոտ սրտերը ու քո շանթերդ դնել նրանց մէջկամ երբ փոթորկի անեղ ժամերին՝ հուր—կայծակներով ճեղքում ես ամպերն երկնքի վրա, աստ, չե՞ս ուզում արդեօք քո կայծակն անգութ, անողորմ այն էակի դէմ, որ այնքան անսիրտ, այնքան անտարբեր նայում է բարձրից դարերը շարունակ... Սօսիր, իմ անգին, բաց ինձ քո սիրտդ...

### XXXII

Մի մեծ, բոլորակաձև, ընդհանուր պատուանդանի վրա բարձրացած երկու վեհ կիսագընդեր՝ ծածկված սպիտակ, ողորկ, մաքուր, յաւիտենական ձիւն ու սառոյցով, որոնք տեղ-տեղ փայլում ու պսպղում են միջօրէի արևի ճառագայթների տակ, իբրև առաւօտեան ցօղ-աղամանդներ, մի լայն, ցածրայատակ բիւրեղ-սառոյցի նման փայլփլող ձորակ, որ անցնելով հիւսիս-արևմուտքից դէպի հարաւ-արևելք, իբրև մշտական անջրպետ բաժանում է իրարից այդ գոյգ կիսագունդ-եղբայրներին, ձիւն փրփուր զառիվերներ, որոնք յանկարծական զօրեղ թեքուածքով կիսագընդերի կատարներից իջնում են դէմ առ դէմ դէպի միջավայրի ձորակը մի կողմից և միւս կողմից աւելի թոյլ թեքուածքով դէպի լեռնագագաթի արտաքին շրջագիծը, և այս ամենի գլխին բաց-կապոյտ շողշողուն երկինք, որ խոնարհած դէպի վայր՝

համբուռում է հիւսիս-արևմտեան կիսագնդի ամենաբարձր կէտը—ահա ինչպէս տեսայ ես Մասիսի գագաթը: Վեհ, ազդո՛ւ տեսարան. կարծես փրփուր-ծովի մէջ երկու հսկայական ալիքներ բարձրացել են դէմ առ դէմ փոթորկի ժամին ու այդպէս մնացել անշարժ մինչև յաւիտեան: Նայում ես, նայում այդ ձիւն-ալիքներին, որոնք այնպէս լուռ, այնպէս անսահման բարձր՝ հեռու, ցածրում երևացող աշխարհից՝ կանգնած են առաջիդ, և թըւում է քեզ, թէ դա մի երկրային պատկեր չէ, որ տեսնում ես դու, այլ մի անտես, անճանաչ, ընդ միշտ սառած ու մեռած մոլորակի մի հրաշալի բեկոր, որ գլորվել է մի անգամ երկնքի խորքից ու ընդմիշտ կանգ առել երկնքի ու երկրի մէջ տեղում:

Ամարային պարզ, խաղաղ, լուսնկայ գիշերին, երբ ամեն ինչ աշխարհում ստանում է խորհըրդաւոր մշուշային կերպարանք, ինձ յաճախ պատահում է պարտէզի առանձնութեան մէջ նրստել ու երկար-երկար նայել լիալուսնին, նայել երկնակամարի այս ու այն կողմում ցրված կենտկենտ աստղերին,—որոնք այնպիսի թովիչ նազանքով անցնում են ամառնամուտի թեթև, թափանցիկ ամպերի միջից ու այնպիսի քաղցր հրապոյրով նայում են մարդու երեսին: Այդ ժամանակ, մի ցնորական երազի մէջ՝ երբեմն ես շնջում եմ ինքս ինձ. «Ախ, եթէ մի վայրկեան, գէթ մի վայրկեան ես կարողանայի թռչել դէպի այդ գեղեցիկ երկնային մարմինները, գէթ մի անգամ մօտիկից հայեացք

ձգէի նրանց վրա ու յետ դառնայի նորից»... **ԶԵՐ** կատարվել արդեօք այդ իմ իղձը Արարատի գագաթին և ես չէի՞ տեսնում իմ առաջ մի ցնորական երկնային պատկեր՝ երկու ձիւնափայլ շողշողուն կիսագնդեր՝ կախված երկնքից աշխարհի անհուն խորութեան վրա:

### XXXVIII

Փոքր ինչ յետոյ, հանդարտված, ես սկսեցի դիտել Մասիսի գագաթի մանրամասնութիւնները: Իր ամբողջութեամբ գագաթը բոլորակ է, 200—250 սաժէնաչափ շրջագծով, բայց այդ ամբողջութիւնը, ինչպէս ասացի, մի ձորակով բաժանվում է համարեա երկու հաւասար կիսագնդերի—երկու գագաթների. ձորակի լայնութիւնը, երևի, աւելի չլինի 70—80 սաժէնից, իսկ խորութիւնը 9—10 սաժէնից. գագաթներից մէկը՝ հիւսիս-արևմտեանը նկատելի կերպով բարձր է միւսից՝ հարաւ-արևելեանից, բայց այդ բարձրութիւնը, իմ աչքի չափով, յամենայն դէպս աւելի չէ 15—20 ոտնաչափից: Փոթորկի կատաղի զօրութեամբ փչող քամու պատճառով մենք փորձ անգամ չարինք մտնելու ձորակը և ապա բարձրանալու հանդիպակաց հիւսիս-արևմտեան գագաթը, որովհետև նախ պէտք էր հրաժարվել այս աշխարհից և մտադրվել տեսածը պատմելու միւս, անձանօթ աշխարհում, ուր գուցէ Մասիսով հետաքրքրվող անգամ չը կայ, և ապա՝ աւելորդ էլ էր այդ երկիրդալի փորձը—հանդիպակաց գագաթը բոլորովին նոյն ձևն ու կազմութիւնն ունէր, ինչ-

պէս և հարաւ-արեւելեանը, որի վրա կանգնած էինք մենք,—նոյն սպիտակ, մաքուր, ուռուցիկ կեանազունաւոր, թեք, փայլուն գառիվայրով ձորակի կողմից և աւելի նուազ թեքուածքով դէպի գագաթի կիսաբոլորակ արտաքին շրջագիծը: Մօտենալ գագաթի ափերին և նայել այնտեղից դէպի վայր՝ դէպի լեռան կողերը, անկասկած, դժուար է նոյն իսկ խաղաղ հղանակին, իսկ փոթորկի ժամին՝ բոլորովին անկարելի. սակայն բարձրանալիս արդէն մենք տեսանք, որ ափերի արեւմտեան, հարաւային և արեւելեան շրջագծից,—հիւսիսայինը մեզ չէր երևում,—բացի մի նեղ, երկայն տարածութիւնից, որով մենք բարձրացել էինք, յանկարծական թեքվածքով իջնում են դէպի վայրահոնի ընդարձակ ձիւնարաններ և լայն նստուածքով փովում—զլորվում դէպ լեռան կողերն ու անդունդները: Զարմանալին այն էր, որ Մասիսի խոր ձիւներով ու սառոյցներով ծածկված գլուխը ունէր մի տեղ մի փոքրիկ... բիծ, երևի արդարացնելու համար այն ասացուածքը, թէ անբիծ չէ նաև արևը: 40—50 քայլի հեռաւորութիւնից մենք տեսնում էինք գագաթի հիւսիս-արեւելեան ափի մօտ մի փոքրիկ տարածութիւն՝ բոլորովին բաց ու ազատ ձիւնից. նա ծածկված էր սև հողով ու քարերով և նրա վրա շարված էր մի արշին բարձրութեան՝ բոլորակաձև, ցածր պատուար մանր ու խոշոր քարերից, որոնց ետևում, կարծեմ, Արարատի գագաթի այցելուներից մէկը՝ Պասաուխով՝ դրել է իր օդաչափական գործիքները: Ինձ խնդրել էին մի բռնն

հող վերցնել այնտեղից և նայել գործիքներին, և ես ուղեցի մի փորձ անել իջնելու դէպի այդ բաց տարածութիւնը, մանաւանդ որ պագաթի թեքուածքը այդ կողմում աննշան էր, սակայն ընկերներս չը թողին՝ քամու պատճառով չափազանց վտանգաւոր համարելով մի այդպիսի փորձ: Տարօրինակ տպաւորութիւն էր գործում փոքրիկ հողածածկ տարածութիւնը յաւիտենական ձիւնների և սառոյցի մէջ. մշտապէս սառած ու ճնշված նրանց ծանրութիւն տակ՝ վիթխարի լեռը կարծես մի անգամ ուժգին թափով ցնցել էր հսկայ գլուխը և մի փոքրիկ տեղում գէթ մի աննշան ան: ք բացել իմ համար դէպի կատուակ երկինքն ու արևի պարզ ճառագայթները՝ երբեմնապէս զուարճանալու նրանց տեսքով ու ջերմութեամբ: Կարծում եմ, որ այդ բաց տարածութիւնը գտնվում է ուղիղ Մասիսի հիւսիս-արևելեան մեծ պատառուածքի գլխին, ուր երևի թափվում է նրա վրա նստող ձիւնը՝ արևմտեան հողմերի զօրութեամբ:

Հարաւ-արևելեան գագաթի ամենաբարձր կէտի վրա, անցեալ 1902 թւականից սկսած, նրստած է մի նոր... տապան, թէև այդ թւականին կամ նրանից քիչ առաջ, կարծեմ, ջրհեղեղ չէ եղել, և նոր աշխարհի Նոյը՝ Ա. Եւանգուլեան, չէ կանգնեցրել այնտեղ տապանը մարդկութիւնը ջնջման վտանգից փրկելու համար: Ես չը գիտեմ ինչ ձև ունէր հին տապանը, որի հետքը գտնելու համար մեզանից ոչ ոք նեղութեան յանձն չառաւ, բայց նոր տապանը՝ օգերևոյթաբանական կայա-

բանը՝ ունէր հետեւալ կազմութիւնը: Չորս հաս-  
քառակուսի, երեք վերջօկ հաստութիւն և մօտ 4  
արշին բարձրութիւն ունեցող սիւներ խորունկ  
թաղված են գագաթի մշանջենական ձիւների մէջ  
է միւսեանց հետ երեք տեղում կապված փայտեայ  
խաչաձև կապերով. առաջին կապը՝ հազիւ մի  
քանի վերջօկ բարձր ձիւնինի մակերևոյթից՝ տեղ-  
տեղ արդէն թաղվել էր ձիւնի մէջ, այն ինչ մի  
տարի առաջ նա բաւական բարձր է եղել ձիւ-  
նից. երկրորդ կապը բարձր է առաջինից մօտ  
2 արշին, իսկ երրորդը բարձր երկրորդից մօտ  
1<sup>1</sup>/<sub>2</sub> արշին: Երկրորդ և երրորդ կապերի միջի  
տարածութիւնը չորս կողմից ծածկված է հօրի-  
զօնական տախտակեայ ձողերով, որոնք <sup>1</sup>/<sub>2</sub> վեր-  
ջօկաչափ հեռու են իրարից, և բացի սրանից այդ  
մի և նոյն տարածութիւնը ձողերի տակ չորս  
կողմից ծածկված է երկաթաթելի մի զոյգ  
դեղին ցանցով, որ Արարատի գագաթի անեղ  
հողմերի շնչից տեղ-տեղ պատառտովել ու  
կախ էր ընկել: Սիւների վերին մասը այս-  
պիսով նմանութիւն է ստացել մի փոքրիկ  
տնակի, որի յատակը կպած է երկրորդ խաչաձև  
կապին, իսկ կտուրը նստած է երրորդ կապի  
վրա: Տնակի մէջ դրված են զանազան օդերևոյ-  
թաբանական գործիքներ՝ օդաչափեր, ծանրաչա-  
փեր, ջերմաչափեր և այլն: Ընկերներս, համարեա  
մի ամբողջ ժամ դողդողալով, աշխատում էին  
կայարանի առաջ,—կապտած ձեռքերով յետ էին  
անում պտուտակները, ստուգում գործիքները, գը-  
րում նրանց ցոյց տուած թւանշանները: Մաքսի-

մալ և մինիմալ ջերմաչափերի ցոյց տուած Թււս-  
նըշաններից երևաց, որ օդի ամենաբարձր ջեր-  
մութիւնը Մասիսի գագաթին, ստուերի մէջ, ա-  
ւելի չէ զերօյից, իսկ ցուրտը հասնում է—50 աւ-  
տիճանի:

Ես այդ ժամանակ քամուց պաշտպանվելու  
համար՝ կանգնած մի սաժէնաչափ բարձրութիւն  
ունեցող սառած ձիւնի փոքրիկ բլրակի առաջ, որ  
հաւաքվել էր կայարանի հարաւ-արևմտեան սիւ-  
նի մօտ, դիտում էի այն լայնածաւալ անզուգա-  
կան տեսարանը, որ բացվում է Մասիսի գագա-  
թից, մօտ 17,000 (16,920) ոտնաչափ բարձրու-  
թիւնից:

Ամենից առաջ ես հայեացքս ուղղեցի դէպի  
հիւսիս, դէպի մեր հայրենի հին բնագաւառը, ուր  
երկայնանիստ լայն փոռածքով հիւսիս-արևմուտ-  
քից դէպի հարաւ-արևելք տարածվում է Արա-  
բատեան գաշտը: Աննման գեղեցիկ է այդ գաշտը  
իր ամբողջութեամբ, որ ես գրկում եմ հայեացքի  
վայրկենական պտոյտով: Եզերաւորված համարեա-  
լ ըլլոր կողմերից, բացի հարաւ-արևելքից, լեռնե-  
րի բարձր ու ցածր, գրեթէ անընդհատ ձգող  
ալիքանման շղթաների հսկայական բազուկներով՝  
եա գրկել է իր մէջ անհամար մանր ու խոշոր  
կանաչագեղ օազիսներ, որոնք տեղ-տեղ կպչում—  
միանում են իրար ու կազմում ընդարձակ կանա-  
չուտների գեղատեսիլ փոռածքներ, և տեղ-տեղ  
հեռանում իրարից ու բաց անում դաշտի՝ ամա-  
րային բարկ արևից խանձված ու դեղնած կուրծ-  
քը: Դիտակի օգնութեամբ ես տեսնում եմ ան-

ամար գլուղեր՝ երբեմն մօտ-մօտ, երբեմն և հեռու  
րարբից՝ ցրված օազիսների զմրուխտ ծոցի մէջ-  
տեսնում եմ մօտիկ՝ առաջիս, դաշտի բուն կենտ-  
րոնում, արձակ-համարձակ փոված դալարագեղ  
մի ծովակ և սկսում որոնել նրա մէջ ծանօթ շի-  
նուածքներ. դիտակս անընդհատ շարժում եմ վեր  
ու վայր, նայում եմ տեսողութեանս ամբողջ ու-  
ժով կանաչուտների մէջ թափնված ցածրիկ, հա-  
զիւ գետնից մի քանի բթաչափ բարձրացող գորշ-  
դեղնաւուն, երբեմն և սպիտակ տնակներին և չեմ  
գտնում որոնածս. և ահա յանկարծ, դիտակի ա-  
նակնեկալ շարժման ժամանակ, երևում է ինձ մի  
փայլուն, պսպղուն կէտ, որ կարծես նստած է հա-  
զիւ նշմարելի մի փոքրիկ, կարմրաւուն գմբէթի  
գագաթին. ա՛, յաւիտենական ձիւների միջից ես  
նորից տեսայ ձեզ, հինաւուրց վանքեր. ողջոյն ձեզ  
կրկին...

Իմ դէմ յանդիման կանգնած է Արագածը՝  
աջ ու ձախ փռած իր երկայն, ահագին թևերը և  
անհամար բլուրներով, ձորերով ու դարաւանդնե-  
րով ծածկված կուրծքը ուղղած դէպի Արարատեան  
դաշտը: Շիրակի բարձրագլուխ հսկան բոլորովին  
այլ կերպարանք ունի այստեղից: Ցածր, լայնու-  
թեան վրա ուռած ու փքված՝ կարծես մէկը հուժ-  
կու ձեռքով խփել է նրա գագաթին և խրել պա-  
րանոցը լերան լայն կրծքի մէջ. և այսպէս բազ-  
մաճիղ գագաթը մնացել է նստած հսկայի լայն  
ուսերի վրա առանց պարանոցի, առանց գագաթ-  
նամերձ բարձրութեան, ակամայ կարծել տալով,  
որ նա կարող էր դրված լինել և մի այլ տեղ այդ

ընդարձակ ուսերի վրա: Շիրակի կողմից միշտ ձիւնապատ ու խրոխա՝ այս կողմից նա համառոտագուրկ է ձիւնեղէն զարդից և միայն տեղ-տեղ սպիտակ շերտեր հազիւ փայլում են նրա փոքրիկ, ցածրիկ գագաթի վրա. ո՛չ, այդ թիկնաւէտ, լայնալանջ, ուռուցիկ տիտանը այն գեղեցիկ սարը է, որին ես, ծնունդ Շիրակի, այնքան սիրում էի մանկութեանս օրերում: Փոքր ինչ հեռու Արագածից, դէպի արևելք, երևում են Արայի լեռաւը, Մայմեխը, հիւսիս-արևելքում Գեղամայ լեռների շարքերը, տեղ-տեղ ձիւնապատ գագաթներով, իսկ հեռու—հեռու հիւսիսում, մշուշի թանձր քողով պատած, կանգնած է կովկասեան լեռների հսկայական շղթան. անհամար գագաթներ շարված են այնտեղ կողք կողքի և թւում է քեզ, թէ դա մի ծով է, մի ովկիանոս, որի վրա փոթորկի ժամին բարձրանում և իջնում են վիթխարի ալիքներ: Ջիւնազարդ հսկաները, մէկն արևմուտքում, իսկ երկու-երեքը ուղիղ իմ դէմ յանդիման, պարզ երևեցնում են իրանց գլուխները մշուշի միջից: Այ՛ո, ծերունի Մասիսը անթարթ հայեացքով միշտ նայում ու տեսնում է իր բաղդակից ծերուկ էլբօրուսին, և ձվ կարող է ասել, թէ ինչ են խօսում իրար հետ գաղանաբար ձիւն ու սառուցով շղթայված այդ հսկաները... Հիւսիս-արևմուտքում, աւելի ևս թանձր մշուշով պատած, երևում է մի կորնթարթ, բաւականաչափ երկայն, կարծես, կապոյտ գիծ. ի՛նչ է այդ. արդեօք Սև ծովը չէ՞ դա, որ լեռների անվերջ խառնուածքի միջից գտել է մի բաց տեղ և իր անհանդարտ ալիքները երևեց-

նում է Մասիսին, թէ դա լոկ երևակայութիւն է միայն, տեսողութեան պատրանք—դժուար է ասել. յամենայն դէպս հինաւուրց Պօնտոսը իզուր է նեղութիւն կրում. ծերունի Մասիսը... ակնոցներ չէ կրում և հազիւ թէ տեսնում է նրան:

Արևելքում, Արաքսի ընդարձակ հովտի հեռաւոր սահմաններում, ցիր ու ցան բարձրանում-իջնում են բազմաթիւ մանր ու խոշոր, գորշ-կարմրաւուն բլուրներ, որոնց ետևում կանգնած են Չանգեզուրի և ապա Ղարաբաղի լեռները: Նըրանք ևս, երևում է, ունեն իրանց մէջ ձիւնազարդ գլուխներ, որոնք լեռների խառնիխուռն կուտուածքների ետևից՝ երկարացնում են պարանոցները՝ հարիւրաւոր վերստերի հեռաւորութիւնից մի ակնարկ ձգելու ծերուկ նահապետի վրա. և այդ աջողվում է նրանց. դիտակով ես պարզ տեսնում եմ Չանգեզուրի լեռների մէջ մի հսկայ, որ շրջակայ բարձրութիւնների վրա դրած կապոյտ ուսերը՝ սպիտակահեր գլուխը ուղղել է դէպի ինձ. և կամ գուցէ ես սխալվում եմ. դա թերևս Արցախի ծանօթ Արթիւնայ-սարն է և ոչ անճանաչ մի սար անճանաչ Չանգեզուրում:

Եւ առհասարակ շատ դժուար է ճշտութեամբ որոշել լեռնային երկրորդական հսկաների տեղերն ու անունները—այնքան նրանք տարօրինակ տեսք ունեն այստեղից, այնքան խառնված ու խճողված են միւս լեռների հետ: Ընդհանուր տեսքը արևելքից՝ Գեղամայ, ապա և հիւսիսային ու հարաւային Սիւնիքի լեռնային բարձր պարիսպն է, որ ձգվում-իջնում է դէպի Նախիջևան

և այնտեղ այայտանում հեռու հօրիզօնում:

Արևելահարաւից աննման սիրուն ու գեղջիկ է Արաքսի լայն, անծայր հովիտը, որ ի մտեղում անհամար քմահաճ պտոյտներով հոսում անցնում է մայր—Արաքսը. նրա ափերի ամբողջ երկարութիւնը, որքան միայն կարող է կտրեմարդու աչքը, ծածկված է դալար կանաչուտների անընդհատ ժապաւէնով, որ այնքան դուրեկան կերպով տարբերվում է հովտի աջ ու ձախ կողմից տարածվող արևախանձ գորշ դաշտավայրների անվերջ տեսարաններից: Ո՞րտեղ է անյայտանում Արաքսը—դժուար է ասել, միայն երեւում է, որ նրա պտոյտները նկատելի կերպով, ուղիղ դէպի հարաւ ընթանալուց յետոյ, շեղվում են դէպի արևելք և չքանում մի հարթ—հաւասար մշուշապատ տարածութեան մէջ: Կասպից ծովն է դա—յամենայն դէպս պնդել այդ հանգամանքի վրա ինձ թոյլ չէ տալիս դիտակս, որ շատ էլ զօրեղներից չէ:

Հարաւի մերձակայ տեսարանը ամբողջովին բռնել է Փոքր-Մասիսը իր ամփոփ ստորտաներով, որոնցից արևելեանը իջնում է դէպի Արաքսի հովիտը, իսկ արևմտեանը դէպի մի այլ հովիտ, որ ձգվում է երկու Մասիսների կողքից ուղիղ դէպի հարաւ: Փոքր և Մեծ Մասիսների մէջ տեղում, այդ արևմտեան հովտի եզերքին, երևում են բազմաթիւ բարձր ու ցածր, կարմիր-մոխրագոյն բլուրներ, որոնց գլուխները հրաբխային բաժակի միանման բոլորակ ձև ունեն. նրանցից մէկի գոգաւորութեան մէջ ես տեսնում եմ մոխ-

րի կուլտուրածքներ, միևսի մէջ ջրային կանաչով ծածկելած մի փոքրիկ լճակ, որ երբեմն-երբեմն պսպղացնում է իր պղտոր ալիքները արևի տակ, երրորդի մէջ՝ սև, ջրախառն տիղմ, որ լեռնաբաժակի արևելեան կողի մի մասը ճեղքած՝ թւում է թէ հոսում է դէպի վայր: Ահմէղք ցոյց է տալիս ինձ նրանց մէջ այն բլուրը, որի վրայով անցնում են երեք պետութիւնների սահմանները. ես արագութեամբ երեսս շուռ եմ տալիս, և երջանիկ քիւրդը, որի ամբողջ աշխարհը կազմում է Աղրի-դաղը, չէ հասկանում, որ կոպիտ մատը անզգուշութեամբ դնում է մի հին, ցաւոտ վէրքի վրա...

Արևմտեան հովիտը, որի վերին՝ հիւսիսային մասը պատկանում է Թիւրքիային և կազմում է Բայազէդի սանջակի մի գաւառակը, իսկ ստորին, հարաւային մասը մտնում է Մակուի պարսկական խանութեան մէջ, լիքն է ընդարձակ քարքարուտներով, որոնք երկու Մասիսների ստորոտներից իջնում—տարածվում են հովտի մէջ մինչև նրա լայնութեան կէսը, ուր մի անծանօթ գետակ, ուղիղ, առանց նկատելի կերպով աջ ու ձախ թեքելու իր ընթացքը, ձգվում է դէպի հարաւ. գետակի ափերում տեղ-տեղ երևում են փոքրիկ կանաչուտներ՝ ջրդերի ձմերային օթեաններ՝ զետեղված, Մահմէդի ասելով, հին հայկական գիւղատեղերում... Այդ ընդարձակ հովտում և ապա նրա արևմտեան եզերքից սկսվող աւելի ևս ընդարձակ լեռնադաշտերի վրա, մինչև Բայազէդ մի կողմից և միւս կողմից մինչև Մակուի սարերը, չեն մնա-

ցել հայ գիւղեր և միայն մի քանի աղաւտոյ վա-  
անուններ քրդերի բերանում պահում են միշտ  
այժմ նրանց տխուր յիշատակը:

Հարաւային Կողմում, Փոքր-Մասիսի գագաթ-  
թի վրայից և ապա հարաւ արեւմուտքից, հեռու  
երևում է Կորդուաց լեռների շղթան, որ մի հըս-  
կայական բազուկով պտոյտ է գործում ու միա-  
նում Տաւրոսի և Վասպուրականի լեռների հետ:

Հրաշալի են արեւմուտքում կարեւորահարա-  
ւում Բարձր-Հայքի, Սասունի և Վասպուրականի  
լեռները Արարատի գագաթից. շարք-շարք, մէկը  
միւսից յետոյ, մէկը միւսից բարձր, կանգնած են  
թափանցիկ մառախուղի անսահման հեռաւորու-  
թեան մէջ այդ շղթաները, և թւում է թէ մէկը  
դիտմամբ շարել է նրանց այդ կարգով, որպէս զի  
ամենքն էլ, առանց մէկը միւսին նախանձվելու,  
տեսնեն հայրենի լեռների հսկային և ոչ ոք տե-  
ղիք չունենայ գանգատվելու: Մէկիկ-մէկիկ ես  
համարում եմ ինն երկայն, հիւսիս-արեւմուտքից  
դէպի հարաւ-արեւելք տարածվող ուղղածիզ շար-  
քեր և ապա դիտակս կենտրոնացնում Սիփանի  
վրա:

Չքննդ գագաթ, արժանի՝ երկրորդ Մասիս  
կոչվելու. լեռների անվերջ շարքերի ետևից նա  
բարձրացրել է ամբողջապէս ձիւների մէջ թաղ-  
ված գլուխը և կարծես մրցում է Մասիսի հետ  
իր վեհութեամբ: Հասարակ աչքով, նոյն իսկ ա-  
ռանց դիտակի, ես տեսնում եմ նրա հպարտ բարձ-  
րութիւնը, նրա սպիտակ, երկնամերձ ձիւները,  
նրա գորշ-կապուտակ վերնակողերը: Եւ ով կը

տաբ խնձ այն երջանիկ օրը, երբ ես, ինչպէս այժմ, կարողանայի կանգնել նրա յաւիտենական ձիւններէ վրա ու նայել այնտեղից Մասիսի գագաթին. այդ հրաշալի լեռները մօտիկից տեսնելու բազդը շատ քչերին է վիճակվում մեզանից... և, մի վ գիտէ, արդեօք դեռ երկամբ պէտք է դատապարտված լինենք մենք նայելու մեր հայրենի լեռներէ չքնաղ տեսարանին հեռու, շատ հեռու, անմատչելի դիտարաններից...

Այո, դա ամբողջ Հայաստանն է, որ երևում է Մասիսի գագաթից իր հեռաւոր և մերձաւոր սահմաններով, իր ծովածալ դաշտերով, իր լայն հովիտներով, իր կապուտակ գետերով, լեռների իր այնքան սիրուն շարքերով,—նրանք այնպէս գեղեցիկ, այնպէս սերտ, այնպէս համբրաշխ շրջանով բոլորված են ծերուկ նահապետի շուրջը, որ նրանց քակտել ու բաժանել իրարից չէ կարող ոչ մի զօրութիւն: Օ՛, երկրպագում եմ ես քեզ Մասիսի գագաթից, ով իմ անոյշ հայրենիք, ով դրախտ—երկիր:

### XXXIX

Հրաժեշտի մի վերջին կարօտակէղ հայեացք եմ ձգում ես Մասիսի երկու ուռուցիկ ձիւնափայլ կիսագնդերին, մի այլ ընդհանուր հայեացք հայաշխարհի հրաշագեղ տեսարանին և ընկերներիս հետ՝ նորից թոկի օգնութեամբ՝ գագաթի բարձր կէտից իջնում այնտեղ, ուր մի ժայռի վրա նըստած է Ահմէդը: Նա խնդրում է գրել իր անունը մերձակայ ժայռի բաց կուրծքի վրա և բժիշկ

Շտրէյխէրը կատարում է նրա խնդիրքը: Կարմիր  
ներկի հաստ գծերով նա անմահացնում է Ահմէդի  
անունը և ապա իր կողմից խնդրում քիւրդի-ն  
բռնել իր ձեռքը և օգնել վայր իջնելու: Բժիշկը  
դողում է ամբողջ մարմնով. նրա դէմքը կապտել  
է, ձեռքերը մոխրի գոյն են ստացել, ծնկները  
ծարվում են և նա հաղիւ հագ, Ահմէդի օգնու-  
թեամբ, կարողանում է կամաց-կամաց վայր իջ-  
նել սարից: Աւելի լաւ դրութեան մէջ չեն և իմ  
ու Դավիդովսկու երես ու ձեռները, բայց մենք  
չենք դողողում. և հասկանալի է,—մենք աւելի  
տաք ենք հագնված, քան բժիշկը, որ սառեցնող  
քամու և 20 աստիճան ցրտի մէջ ամբողջ ժամ  
կանգնած էր բարակ սիւրտուկով: Մենք իջնում  
ենք ուրախ տրամադրութեան տակ, որ վերջապէս  
հասանք մեր ճանապարհորդութեան նպատակին, և  
իջնում ենք հաժեմատաբար շատ ունելի արագ ու  
հեշտութեամբ, քան բարձրացել էինք: Ծծմբային  
թեքվածքից փախչելուց յետոյ՝ մենք նորից մըտ-  
նում ենք երկիւղալի ժայռերի սահմանը, անց-  
նում ձիւնարանի վտանգաւոր կիրճից և ընկնում  
մեր նախկին ժայռոտ, ձիւնածածկ, բայց ապա-  
հով ճանապարհը: Լերան գագաթից շատ լաւ ե-  
րևում է այդ ճանապարհի ամբողջ երկարութիւ-  
նը. քարակոշկոռներով ծածկված՝ դա մինեղ տա-  
րածութիւն է, որի աջ և ձախ կողմից տարած-  
վում են ընդարձակ ձիւնարաններ, սակայն ա-  
րևմտեան ձիւնարանի և ճանապարհ—քարակոյ-  
տերի մէջտեղում, լերան ամբողջ բարձրութեան  
վրա, ստորոտից մինչև գագաթը, ձգվում են նախ

իւճուտ, ապա և ահագին ժայռերով լցված խորածորեր, մինչդեռ արևելեան ձիւնարանը կաշում է իւր եզերքներով ճանապարհին: Մասիսի գագաթը բոլոր միւս կողմերից համարեա անմատչելի է. Աբիխից յետոյ սա է միակ ճանապարհը, որով կատարվում են վերեքները դէպի Արարատ և միայն Պարրօտն էր, որ 1824 թւի սեպտեմբերի 29-ին, սուաջինը թերևս մահկանացուներից, ոտք գրեց Արարատի արևմտա-հիւսիսային գագաթի վրա ս. Յակոբի ձորի կողմից:

Արևմտեան խորածորերի մէջ, իջնելիս, ևս նկատեցի մի բան, որ իմ աչքից խուսափել էր բարձրանալու ժամանակ. դա աշտարակաձև հըսկայական քարաժայռերի մի շարք էր, որ, կարծես, մարդկային ձեռքով շինված ահագին պարխպնութի նման, բարձրացել էր խոր ձորի յատակից և իր ատամնաւոր կատարները հասցնում էր մեր ճանապարհի բարձրութեան: Ժայռ-աշտարակները կարմիր-դեղնաւուն գոյն ունէին և տարօրինակ տպաւորութիւն էին գործում սև, փայլուն ժայռուտների մէջ, որոնք Մասիսի յատկանիշն են կազմում: Մեր առաստեղական քաջերի բնակարանները չե՛ն արդեօք դրանք,—վայրկենաբար անցաւ իմ մտքից,—բայց բարեբաղդաբար թէ ես և թէ իմ ընկերները, որոնց ես հաղորդեցի հայկական այդ հիճա առասպելը, չը տեսանք ոչ քաջեր և ոչ որսասէր Արտաւազդին: Ասենք, դժբաղդ արքան և նրա շղթաները կրծող գամիրաները, ինչպէս նաև քաջերը, կարող էին թագնված լինել այդ կարմրագոյն վիթխարի աշտարակների

ետեր կամ նրանց ընդարձակ խորշերում, բայց ես սիրտ չարի նրանց մօտենալ... մի՞ գուցէ,— մտածում էի ես,— քաջերը ինձ էլ բռնեն և հիւր ուղարկեն Արտաւազդին, մանաւանդ որ լեբան ատորոտից «յազատն ի վեր ի Մասիս» տանելու նեղութիւնն էլ չը պիտի կրէին— ես ինքս իմ ոտքով էի բարձրացել նրանց բնակարանները:

Երկու ժամից յետոյ, մօտ ժամի 3-ին, մենք հասանք մեր վերին գիշերօթը, ուր մի ժամ հանգստանալուց և մի բաժակ բուլիօն խմելուց յետոյ, որ չը գիտեմ որտեղից ճարել էր բժիշկ Շարէյխէրը, շարունակեցինք իջնել դէպի վայր, դէպի ստորին օթեան— տափարակը: Քիւրդերը, որոնք բարձրացել էին այնտեղից մեր վերին գիշերօթը՝ տանելու մեր ծանրոցները, թէև կապտել ու դողդողում էին, բայց անչափ ուրախ էին, որ այդ օրը վերջապէս կազատվեն մեր ձեռքից և Մասիսի ցրտերից:

— Братъ, куртинъ пропалъ! ատամ ատամի խփելով դիմում էր շարունակ նրանցից մի «ուսագէտ» իմ ընկերներին, որպէս նախաբան ծխախոտ խնդրելու, և ստանում էր խնդրածը, թէպէտև ծխախոտը ամենեկին չէ պատկանում տաքացնող իրերի թւին:

Ժամի 6-ին, երբ մութն արդէն սկսում էր ընկնել, մենք հասանք մեր առաջին գիշերօթը և ապա օգտվելով լուսնի լոյսից՝ շարունակեցինք իջնել դէպի Սարդար-Բուլաղ: Պարզ, խաղաղ գիշեր էր. ընկերներս գնում էին առոյգ և զուարթ, իսկ ես՝ յոգնած, թուլացած և ուժասպառ: Հիւան-

դանաշու հերթը հասել էր ինձ: Վերջին անքուն գիշերքների և վատ սնունդի ազդեցութիւնը իմ ծարմնիս վրա սկսում էր երևան գալ. իմ սիրտս յաճախ խառնում էր և ամբողջ ծարմնիս մէջ ըզգում էի թուլութիւն: Բայց շուտով ես գտայ մի շատ հասարակ և դուրեկան միջոց սրտի խառնոցքի դէմ. ամեն մի 10—20 քայլափոխին ես կռանում էի և վերցնում մի բուն մաքուր, սրսուռ ձիւն և ուտում այնպիսի ախորժակով, ինչպէս ուտում է քաղցած մարդը իր սիրած համեղ խորտիկը: Լերան ստորին կողերի վրա այդ հիւանդութիւնն անցաւ և մնաց միայն թուլութիւնը. բայց և այնպէս ես մի կերպ քարշ տուի ոտներս մինչև Սարդար-Բուլաղի վրանը, ուր և հասանք գիշերվայ ժամի 12-ին:

XL

Հիմա մնաց մի րօպէ միայն տանել քեզ դէպի Մասեաց Վիհը, ինչպէս կոչում էին մեր հրները Մասիսի հիւսիս-արևելեան մեծ պատահուածքը, և այնուհետև՝ մնաս—բարով, ընթերցող. ես շատ տանջեցի քեզ Մասիսի խորածորեքում, շատ չարչարեցի նրա ձիւնոտ բարձունքների վրա. բայց էլ ու՛մ, եթէ ոչ քեզ միայն, իմ արիւն—հարազատ, ես կարող էի պատմել այն ցաւերը, որոնք երբեմն այրում էին իմ սիրտս դառն կակիծով. գիտեմ, նոյն ցաւերով լիքն է և քո սիրտդ, նոյն հոգսերն ու մտածմունքները մաշում են և քո կեանքդ, բայց դու լուռ, անձայն, դալիք պայծառ օրերի յուսով, տանում ես այդ ա-

մենը, իսկ ես չը կարողացայ լռել հայրենի լեռան  
կողերի վրա դեգերելիս ու ակամայ շատախօսե-  
ցի. ներքի ինձ այդ շատախօսութեան համար և  
մի րօպէ ևս նուիրիր քո ուշադրութիւնդ:

Օգոստոսի 22-ին, առաւօտեան, երբ մենք  
վեր կացանք տեղերիցս և դուրս եկանք վրանից՝  
ապշելով տեսանք Մասիսի ցրտերի և սառեցնող  
հողմերի դրոշմած զարհուրելի կնիքը մեր դէմքե-  
րի վրա. ինժեներ Դավիդովսկու երեսը ուռել էր  
ամբողջովին. նրա կաշին ճաքճքել էր, տեղ-տեղ  
փոթ եկել ու կախվել մանրիկ թեփուկների նման-  
աւելի լաւ դրութեան մէջ չէին և իմ ու բժիշկ  
Շտրէյխէրի դէմքերը. բժշկի քիթն ուռել և ըս-  
պառնալից տեսքով փքվել, նստել էր նրա նիւար  
դէմքի վրա՝ Մասիսի մի վիթխարի քարածայռի  
նման, իսկ իմ դէմքս թէև չէր ուռել, բայց, Դա-  
վիդովսկու դէմքի պէս, ճաքճքել, տրաքտրաքել  
էր և սևացել այնպէս, որ քիչ էր մնում վախեց-  
նէր տիկին էքիզ-Կրիմին. նա ինձ խորհուրդ էր  
տալիս վաղօրօք մտածել ամուսնալուծութեան  
մասին, որովհետև ոչ մի կին, ասում էր նա, թոյլ  
չի տայ ինձ այդպիսի երեսով տուն մտնել. տի-  
կինը իրաւունք ունէր,—նա չէր ճանաչում իմ  
կնոջս... Մեր միւս ընկերների դէմքերն ևս շատ  
ու քիչ փնտովել էին և նրանց մէջ ամենից աւելի  
ինժեներ Կուլլանդինը: Դժբախտութիւնն այն էր,  
որ երեք-չորս օր անլուայ մնալուց յետոյ՝ այժմ  
մէնք չէինք կարող լուանալ երեսներս և վայր  
անել նրանց վրայից օրերով նստած ազտն ու  
կեղտը. երեք բժիշկներն ևս—Շտրէյխէր, Վիտ-

կօվակէի և Էքիզ-Կրիմ—միաբերան խստիւ արգելում էին այդ բանը և ամենայն եռանդով քսում դէմքերէս վազելինի բաղադրութիւն ունեցող մի դեղ, որ բարեբախտաբար իր հետ վերցրել էր տիկինը:

Սարգար-Բուլախում մենք իմացանք, որ երեք հոգի մեր ընկերներից, որոնք առաջին գիշերօթից յետոյ այլ ևս չը շարունակեցին ճանապարհը և վայր իջան սարից, վարձատրել են իրանց՝ կատարելով մի այլ վերելք դէպի Փոքր-Մասիսի գագաթը: Տիկին Էքիզ-Կրիմը, Սուլթան Կրիմ-Գիրէյը և Տերլէցկին, մի քիւրդի առաջնորդութեամբ, հինգ ժամվայ ընթացքում ամենայն աջողութեամբ բարձրացել էին լեռան գլուխը, գտել այնտեղ մի գերեզմանաքար արաբական արձանագրութեամբ, գուտրճացել լեռան կատարից բացվող գեղեցիկ տեսարանով, նախաճաշել գագաթի վրայից բղխող աղբիւրի մօտ և կրկին աջողութեամբ երեք ժամվայ մէջ վայր իջել սարից: Նրանք այցելել էին Սարգար-Բուլաղի շրջակաները և, ի միջի այլոց, գտել էին տափարակի միջով անցնող փոքրիկ ձորակում մի մեծ այր, որի կամարները, նրանց ասելով, այնքան կանօնաւոր են, որ անշուշտ կրում են իրանց վրա մարդկային կերտուածքի հետքեր: Ես ակամայ յիշեցի, որ Ալիշանը առասպելական Փառախտոր համարում է հիմնված այժմեան Սարգար-Բուլախի մօտքերում: Ժամանակի սղութեան պատճառով ես, դժբախտաբար, չը կարողացայ տեսնել այդ այրը. հարկաւոր էր շտապել այցելելու և:

Յակոբի ձորը և այնտեղից նոյն օրը ճանապարհ  
ընկել դէպի Ղամարլու:

Արագ-արագ մենք հաւաքեցինք մեր շորերը,  
կապկպեցինք և յանձնելով բոլոր ծանրոցները  
ուղտապաններին՝ տանելու ուղիղ դէպի Ղամար-  
լու՝ ինքներս ձիով ճանապարհ ընկանք դէպի  
Ակոռի:

Ես մոռացայ յիշել, որ Թիֆլիսի ֆիզիքա-  
կան դիտարանի կառավարիչ Գլասսէկ և նրա օգ-  
նական Շմերլինգ Սարգար-Բուլախում, սահմա-  
նապահ զինւորների զօրանոցի գաւթում, երեք-  
չորս օրվայ մէջ, կանգնեցրին օդերևոյդարանա-  
կան մի նոր կայարան, որի բոլոր մասերը պատ-  
րաստի բերել էին իրանց հետ Թիֆլիսից: Շմեր-  
լինգ յատկապէս դրա համար էլ եկել էր Սար-  
գար-Բուլախ. նա չը մասնակցեց մեր վերելքին:

## XL I

Հրաժեշտ տալով և շնորհակալութիւն յայտ-  
նելով այն բոլոր անձերին, որոնք որ և է դիւ-  
րութիւն էին պատճառել մեզ վերելքի ժամանակ՝  
մենք մոռացանք նոյնը անել և... բեռնակիր քիւր-  
դերի վերաբերմամբ. հեռու կանգնած մեր վրա-  
նից՝ խումբ-խումբ հաւաքվել էին նրանք և աղ-  
մուկ—աղաղակով բաժանում էին իրանց մէջ  
չորս օրվայ գերմարդկային—տաժանելի աշխա-  
տանքի համար ստացած վարձը... Եւ ոչ մի գըլ-  
խարկ չը բարձրացաւ մեր միջից մնաս բարով ա-  
սելու նրանց, ոչ մի ձեռք չերկարացաւ՝ ամուր-  
ամուր սեղմելու նրանց կոշտ և ուժեղ ձեռքերը,

որոնք այնպիսի անփոխարինելի ծառայութիւն էին մատուցել մեզ և առանց որոնց մենք երազել անգամ չէինք կարող Մասիսի գլուխը բարձրանալու մասին: Այսպէս է աշխարհը... վարակված շրջապատի մթնոլորտով՝ լաւ, հանգիստ ձի որոնելու հոգսի մէջ, նոյն տեսակ վարվեցի և ես... Հեռուից միայն, երբ մենք արդէն անցել էինք 30—40 քայլ, յիշելով աններելի պարտազանցութիւնս, ես շուռ տուի ձիուս դուխը և սկսեցի ճօճացնել գլխարկս օդի մէջ ու հրաժեշտի խօսքեր աղաղակել քիւրդերին... Յանցանքի ուշացած քաւութիւն...

Տաք, արև, սիրուն կէսօր էր. ձիերը շարված իրար ետևից՝ մէկ մտնում էին ձորերը, մէկ բարձրանում լեռնային տափարակների վրա. մենք ուրախ-ուրախ երգում, խօսում, ծիծաղում և զուարճանում էինք Մասիսի արևելեան կողերի տեսարաններով: Շուտով մենք հասանք Թեաքալթուին, պատմական Գինոյ բլրին, որի հարթ—հաւասար, դեղնաւուն, բարձր խոտերով ծածկված զառիվերները մի ժամանակ ծածկված էին համատարած գեղեցիկ այգիներով և որի գլխին 947 թւականին, Մեծն Ներսէսի նման, հոգևորականներով շրջապատված, աղօթում էր Եղիշէ հայրապետը, մինչ ներքևում Գազիկ Արծրունու փոքրաթիւ քաջերը յաղթական կռիւ էին մղում 30,000 արաբների դէմ: Այժմ Գինոյ բլուրն ամայի է. այնտեղ ոչ միայն գինու, այլ և ջրի կաթիլ չէ մնացել. Մասիսի ծործորներից այնքան դժուարութեամբ բերած ջրանցքները ցամաքել

են, այգիները չքացել և ամեն ինչ մատնվել է տխուր լուսթեան և աւերի...

Մի լեռնային հովտի մէջ, Մասիսի արևելահայեաց ստորոտում, Թեաքալթուի և Ակոռիի մէջտեղում, Ա. Եւանգուլեանը իմ ուշադրութիւնս գարձնում է երկայն, հովտի լայնութեամբ ձգվող մի արհեստական պատի վրա, որ ուրիշ բան չէ կարող լինել, եթէ ոչ ճանապարհի ցածրադիր կողմը պաշտպանելու համար ժայռերից և խոշոր քարերից կանգնեցրած մի պատուար. տեղ-տեղ այդ հին ճանապարհը մնացել է անջնաս՝ ծածկված երկայնացողուն— դեղնաւուն խոտերով և տեղ-տեղ պատուարի քանդվելուց՝ փուլ եկել ու աւերվել է նաև ճանապարհը: Ոչ մեր նախնիքներին իդէալականացնելու համար, որոնցից . ես ամենևին շնորհակալ չեմ, որ մեզ թողին մի աւեր հայրենիք, այլ աչքիս տեսքը միայն վկայելու ցանկութեամբ՝ պէտք է ասեմ, որ Մասիսի ուշադիր այցելուն ամեն մի քայլափոխում հանդիպում է մի հին, հրաշալի, կորած կուլտուրայի հետքերի, որ գիտէր օգուտ քաղել նոյն իսկ լեռնային այս գծուարակօխ լանջերից և նրա զառիվերները, ուր միայն կար ամենափոքր հնաւորութիւն, դարձնել պարտէզ ու այգի: Այնտեղ, ուր մեր ձիերը հիմա հազիւ փոխում են իրանց ոտները լեռնային մի նեղ արահետի վրա, մի ժամանակ անցնում էր լայն, ուղիղ, գեղեցիկ ճանապարհ...

Ժամի 4-ին կէսօրից յետոյ՝ մենք հասանք Թիւրքարնակ Ակոռի գիւղը և իջևանեցինք սահմանապահ զինուորների մի այլ զօրախմբի հրա-

մանաստար՝ պ. Ալանդէրի տանը: Պ. Ալանդէրը տանը չէր և մեզ ուրախութեամբ ընդունեց տիկինն Ալանդէր, մի ժամանակ օրիորդ Աւետեան: Կէս ժամի չափ այնտեղ հանգստանալուց և հետուից՝ աւերված հայ Ակոռի գիւղը դիտելուց յետոյ, որ գտնվում էր մի խոր ունեղ ձորակի հանդէպակաց ափին, Մասիսի արևելեան պատառուածքից դէպի Արաքսի հովիտը իջնող զառիվերի վրէժ, մենք ոտքով, մի թուրքի առաջնորդութեամբ, ճանապարհ ընկանք տեսնելու Մասեաց Վիհը: 1840 թւականի յունիսի 20-ին, Մասիս անաւոր, տղմային—Նրախառն ժայթքումից և փլուզումներից անակնկալ կործանված Ակոռի գիւղը մօտիկից տեսնելու հարկ չը կար, որովհետև մեր կանգնած տեղից արդէն պարզ երևում էր ամեն ինչ: Այնտեղ այժմ չէ մնացել ոչ մի հետք այդ դժբախտ հայ գիւղից, ուր մի ժամանակ աստիճանաւոր այգիների և պարտէզների շքեղ հովանու տակ, տասնեակ դարերի ընթացքում, խաղաղ ապրում և աշխատում էր հայ շինականների մի ստուար բազմութիւն: Գիւղատեղը այժմ ծածկուած է այս ու այն կողմում ցիր ու ցան թափթփած ժայռերի կտորտանքով, որոնց միջավայրերում բուսել, երկարացել են Մասիսի ստորին լանջերը բնորոշող բարձրացողուն, հասկանման գլուխ ունեցող խոտեր: Գոնէ մի կիսաքանդ աւերակ, գոնէ մի յիշատակ մնացած լինէր...

Իրար ետևից մի նեղ շաւղով՝ խուժք-խուժք գնում էինք մենք ուղիղ դէպի արևմուտք, ուր իր հսկայական պատառուածքի ահագին թևերը

պարզած երկու կողմից՝ և սև պարսպանման գլաւ-  
հուրբէի կուրծքը բաց արած առաջներէս՝ կանչու-  
նած էր սարսեցնող լեռը: Ես յոգնած էի և դառն-  
դաղ շարժում էի ոտներս ամենից վերջը. ինձ  
հետ գնում էր տիկին Էքիզ-Կրիմ տղամարդի իւր  
դեղեցիկ շորերով և պատմում Պարսկաստանում  
կատարած ճանապարհորդութեան մանրամասնու-  
թիւնները: Մի միջնադէպ այդ ճանապարհորդու-  
թիւնից մեզ շատ ծիծաղեցրեց: Տիկինը պատմեց,  
որ Թաւրիզում այցելել է տեղական ամենաբարձր  
իշխանաւորին և իբրև բժշկուհի հրաւիրվել է նա-  
յելու նրա յղի կնոջը: Ամարային շքեղ պալատ,  
ազակեզարդ դահլիճներ, Թաւիշ ու կերպաս ա-  
մեն տեղ, Թանգազին շորեր հագնված ներքինի-  
ներ—մի խօսքով—արևելեան առասպելական  
փարթամութիւն, բայց բժշկուհին չէ գտել մի  
բան միայն... տիկնանց տիկինը զուրկ է եղել...  
սպիտակեղէնից... Արևելեան քաղաքակրթութեան  
գերագոյն աստիճան...

Հովիտը, որով մենք առաջ էինք գնում դէ-  
պի Մասեաց Վիհը, հետզհետէ նեղանում էր. մի  
քանի վերստ անցնելուց յետոյ՝ նա արդէն փո-  
խարկվեց ձորի, որի տղմուտ, հարթ-հաւասար  
յատակի վրայով անձայն վազում էր մի պղտոր  
գետակ, իսկ երկու կողքերում բարձրանում էին  
թեք զառիվերներ՝ ծածկված դեռ ևս Թարմ—կա-  
նաչ խոտերով: Չախակոյմեան զառիվերի լան-  
ջերի վրա, լեռնային բարձր արօտներում, պարզ  
երևում էին արածող հօտերի սպիտակ խմբեր—և  
մի քիւրդ հովիւ, նստած ժայռի վրա, որ կանա-

չուտններ թ միջից կախել էր գլուխը անագին բարձրութիւնէն զէպի վայր, լցնում էր ձորը սրինգի քաղցր գեղգեղանքով: Քիւրդ խաշնարածը գլուխը էր իր միայնութեան սփոփանքը, բայց, երևի, նոյնպէս թ սփոփանք չէր կարող գտնել իր երգով այն միայնակ կաքաւը, որ ձորի հանդիպակաց զառիւժերի գագաթին, բարձր խոտերի մէջ, կարծես մեզ հետ անընդհատ դէպի Մասեաց պատանուածքը գնալով, կղկղում ու կանչում էր շարունակ իր կորած ընկերին: Երեկոն վրա էր հասնում, ձորը լցվում էր թափանցիկ մառախուղով. Մասեաց Վիհը, որին արդէն մօտեցել էինք մենք, ստամնում էր աւելի անեղ կերպարանք...

Ակոռիից մօտ եօթը վերստ բարձրանալուց յետոյ,— ճանապարհը թէև նեղ, բայց տանելի էր,— մենք հասանք ս. Յակոբի նշանաւոր աղբիւրին: Դա մի փոքրիկ խորշ է ձորահովտի լանջի վրա, ճանապարհի մօտ, որի մէջ կողք-կողքի դրված են երկու փոքրիկ, սիրուն գոբր՝ քարից փորված երկու տաշտակներ, լի անուշահամ, սառն, մաքուր ջրով: Խորշի ծոցից ջուրը կաթիլ-կաթիլ ձորում է գոբրի մէջ, լցնում նրանց և ապա աւելանալով՝ իջնում ջրի երեսից վայր ու անմիջապէս ծծվում աւազախառն կրային հողի մէջ. իւրաքանչիւր տարի, որոշ օրերում, հեռաւոր գիւղերից գալիս են այստեղ բազմաթիւ հայ-ուխտաւորներ՝ իրանց մատաղներով թերևս կատարելու մի սրբազան պաշտամունք, որ խորին հնութեան մէջ նուիրված էր «ազատ Մասիսին»: Ամենքին յայտնի է այդ ջրի մի այլ յատկութիւնը, որին

սրբութեամբ հաւատում է պարզամիտ ժողովուրդը, — գրաւել, ուր և տարվի, տարմբի բազմաթիւ երամներ՝ աստուածային պատիժ-մորեխը կոտորելու համար: Երբ մենք Ակոռիում պատրաստվում էինք գնալու դէպի Մասեաց Վիհը՝ «սարաժ-նիկ» Սեդրակը՝ խորհրդաւոր կերպով մօտենալով ինձ՝ խորհուրդ տուեց, որպէս հայի, ձիով չը բարձրանալ դէպի ս. Յակոբի աղբիւրը, եթէ ոչ ջուրը կը ցամաքի: Ես լսեցի Սեդրակի խորհուրդը և արդէն պատմեցի, որ մենք ոտով գնացինք այդ սուրբ աղբիւրի մօտ:

Փոքր ինչ հեռու աղբիւրից՝ մեր առաջ բացւեց Մասիսի արևելեան անաւոր պատուուածքը իր ամբողջութեամբ: Մարսեցնող տեսարան: Սկսած լիրան գագաթնամերձ կողերից մինչև խոր յատակը, ուր կանգնած էինք մենք, մի քանի հազար ոտնաչափ բարձրութիւնից, իջնում են ուղղաձիգ տիտանեան պատեր՝ տեղ-տեղ բաժանված հսկայական սիւների, որոնք այս և այն կողմում շարք-շարք կախ են ընկած, կարծես առանց որ և է նեցուկի, զարհուրելի խոր անդունդի վրա: Բարձր, տիտանեան պատերի գլխին կախված են սառոյցի ահագին լեզուններ, որոնցից երբեմն-երբեմն բաժանվող մանր կտորները թափվում են անդունդը ու լցնում պատառուածքը խուլ—որոտաձայն արձագանքով: Պատառուածքի ևրկու կողմերում, մօտ 100—150 քայլ իրարից հեռու՝ կանգնած են լեռան վիթխարի կողերը՝ թրի նման կտրված անդունդի կողմից: Դա մի զարհուրելի ճեղքվածք է, որ ուղիղ մտել է Մասիսի սիրտը և բացել նրան

աշխարհի առաջ: Ես երկար նայում էի այդ սըր-տին. նա քար ու ապառաժ էր. ապա թէ ոչ՝ ինչո՞ւ կործանեց խաղաղ հայ գիւղը—Ակոռին, վերջին մնացորդը նրա արևելեան լանջերի վրա...

Մութն ընկնում էր. հարկաւոր էր շտապել յետ դառնալու և շուտով հեռանալու այդ զարհուրելի Վհից, որի մէջ արդէն սկսել էին շրջել գիշերային ստուերների սպառնալից խառնուածքներ. մի պղտոր ջրվէժ պատառուածքի հիւսիսային լանջի վրա ձգվող ձիւնածածկ սառցարանից՝ գահավէժ գլորվելով դէպի անդունդը, լցնում էր Վիհը իր անոռի շառաչիւնով և մի անբացատրելի երկիւղի արձագանք կրկնում մեր սրտերում:

Երբ մենք վերադարձանք Ակոռի՝ արդէն ժամի 10-ն էր: Սիրալիք հիւրընկալութիւն գտնելուց յետոյ պ. Ալանդէրի տանը՝ մենք ձի հեծանք և ամբողջ գիշերը ճանապարհ գնալով՝ առաւօտեան ժամի 5-ին հասանք Ղամարլու:

Թիֆլիս վերադառնալիս մենք այցելեցինք նաև մեր հայրենի աւերակների թագն ու պսակը — Անին, բայց այդ դժբաղդ քաղաքը նկարագրելու համար սու այժմ ինձ պակասում են յարմարութիւններ, գուցէ նաև մի սուր, ցնցող, արտասուհեցնող գրիչ...

Վ Ե Ր Ջ

UNIVERSITY OF MICHIGAN



3 9015 04146 8722



Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԳՈՐԾԱՆԻ ԳՐԱԳՐԸ

- 
- |  |            |
|--|------------|
| 1. Անդերսընի Հէքիաթները, պատկերազարդ<br>գինն է . . . . .             | 50 կ.      |
| 2. Արրեցողութեան դէմ . . . . .                                       | 15 կ.      |
| 3. Ճապոնիա—քարտէսով. . . . .   | 25 կ.      |
| 4. Հանրագիտական բառարան (մամուլի տակ)                                |            |
| 5. Հայկական Տպագրութիւն . . . . .                                    | 1 ր. 20 կ. |
| 6. Անգլիայի հասարակական և քաղա-<br>քական կեանքը . . . . .            | 15 կ.      |
| 7. Գէպի Արարատ . . . . .   | 40 կ.      |
| 8. Հասարակութեան նեցուկները, դրա-<br>մա 4 գործ. Իրսէնի (մամուլի տակ) |            |
- 

ԳԻՆՆ Է 40 Կ.